3351

2157
№ 79
№ 139
3351

# ԹԱՆԳԱՐԱՆ
## ՔԱՐԵԶԱՐԴ

կամ

Զանազան զուարճալիք և ժողովրդական Երգարանաց պատմուածոց. Թարգմանեալ յիտալական լեզուէ 'ի հայկական բարբառ, աշխատասիրութեամբ Պետրոս Վարդապետի Գալստանեան Կարնեցւոյ Աշակերտին Բաբայեանի. 'ի շինութիւն և 'ի յօգուտ ազգի մանկանց Եկեղեցւոյ.

## ՀԱՏՈՐ . Բ.

Ընտրեալ 'ի Հայրապետութեան ամ Հայոց Տն Եփրեմի Ընդ հովանաւոր Արք Եպիսկոպոսի, և նուիրակի Գերյարգոյ Առաջնորդի Մեծին Ռուստամեան.

Եւ 'ի յԱռաջնորդութեան Մէյ Արքեպիսկոպոսին Հնդկաց Տն Յովհաննէս Արք Եպիսկոպոսի որ 'ի նորին Հնդկաց.

Յամի Տն 1809.
Եւ 'ի Թուականին Հայոց 1258.

Արդեամբք և ծախիւք Պրն Սարգսի Ծատուր Աղայ-վալեանց կողմեցւոյ. և 'ի նորին նորակերտ

## ՏՊԱՐԱՆԻ
ՈՐ
'Ի ՄԱԴՐԱՍ

# ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ։

## Պատմութիւն Անգղիական Երրորդ։

---

### Կանայք Վինսբերգայ։

Կոնրադոս երրորդ կայսրն յանհնարինս ցասուցեալ էր 'ի վր գելփոս դքսին բավիերայ, և երդուեալ էր հանել անտի զվրէժ քինախնդրոյ։ Պաշարեալ զնա 'ի քաղաքին վինսբերգայ՝ յայն սաստիկ նեղութեան արկեալ էր, մինչզի տեսեալ գելփոսի թէ այլ ևս ոչ կարէր տոկալ, և ժողովուրդն իւր յամ մեռանիլ ունէր 'ի սովոյ, սկսաւ հրեշտակութիւնս առաքել



առ

տու կայսրն՝ ծանուցանելով զյօժարութիւն իւր մտանելոյ զքաղաքն և դիմադրաւ լինելոյ, եթէ զեթէութիւն ինչ զօրս յաջողագոյնս համարէր, ընդունէր կայսրն։

Բայց յոյժ և յոյժ խստացեալ եգիտ ըզմիրան կորրադոսի, որ ոչ միայն ոչ շնորհեաց նմա զարժանի նորին զխնդիրս, այլ և ծանրագունից և նուաստագունից պայմանաց ևս՝ զօրս պատրաստ էր գեղխս ընդունել՝ միայն թէ հնար լինէր զանձն իւր և որոց ընդ իւր էին ապրեցուցանել, ոչ կամեցաւ կայսրն զիջանել։ Ո՛չ զոմ ինչ սրոյ և հրոյ ճարակ առնել կամէր անխտիր, և ոչ աղաչանք ոչ կողկողանք և ոչ հեծեծանք զխստութիւն ցասման նորա ամոքել զօրէին։

Ողորմելի դուքսն զայլ ինչ ոչ կարացեալ առնել, ի կամս նորա եղև ապաստան, զայս շնորհ և եթ խնդրելով անտի՝ զի կանանց գոնէ ողորմեսցի, և մի՛ թոյլ տացէ նոցա մատնիլ թշնամաբար ի ձեռս զինուորական անհամեստութեան և մոլեգնութեան, այլ թողուլ նոցա՝ բարձեալ իւրաքանչիւր ըստ կարի իւրում զաղխս իւրեանց, ելանել ի քաղաքէն, և ապահովացուցանել զին-

քեանս

քեանս ։ Շատացեալ կորրադոսի թափել ջհուր ցասմանն իւրոյ 'ի վերայ արանց` և տիրապէս 'ի ԼԸ դքսին, ոչ ինչ փոյթ ունէր զկանանց, այսմ թէուն և եթ մոռացիւր հաւան եղև, և յօժարութ. հրաման ետ ։

Իբրև լուր եղև 'ի քաղաքին, ծայն ցնծութեան և ուրախութե՟ ձնչեաց յամ կողմանց, և իւրաքանչիւրոք նոցա փոյթ ունէին զազատու՟ կամ զկենաց իւրեանց, մինչ կանայք, դստերք, քորք, և մարք իւրեանց կարէին փրծանիլ 'ի վտանգէն ։ Ի վերջին զամենեսեան ուրախ եղև Ը լուրս այս դուքսն, առ սիրոյն ընտանեաց իւրոց ։ Բայց ոչ հաւասարապէս խնդամիտ էին և կանայք, որոց միայր լքանել զարս իւրեանց` զորդիս, զծնողս, զեղբարս, և զոր միանգամ ունէին առաւել ցանկալի, առանց յուսոյ վերստին տեսանելոյ կնոսա, որք կամ սրոյ ճարակ լինելոց էին, կամ հաշել և ուծիլ ունէին 'ի կալանս ։

Այսմ իրի 'ի միոյ կողմանէ դժուարկութիւնք կականմունք և ողբք լինէին, 'ի միւսոյ կողմանէ ձայնք ցնծութե՟ ձնչէին, ուրեք ուրեք ճիչք և աղաղակք յուսաբեկք

լսէին, ուրեք ուրեք երգոց և պարուց որոտմունք լինէին: Իսկ այն ինչ ըստ մեծի մասին կանայք հաստատապէս յուրաստ կային անջատիլ մեկնիլ 'ի նչէ. և հաստատուն էին 'ի միտս զնոյն անցս կրել ընդ նմ. մին չայնց երկնային իմն գոգցես ազդմամբ յառաջ մատուցեալ առէ. և ընդէ՞ր ոչ կարեմք մեք միանգամայն և զմեզ ինքեանս ամբերցուցանել, և զայնոսիկ որք առաւել ցանկալի են մեզ քան զկեանս մեր: Այն ինքն կայսրն յանդէտս առաջի դնէ մեզ զերդանակն, որոյ զաչս մտացն ոգի իմն երկնային կափուցեալէ, զի մի կարասցէ տեսանել զճնարս փրկութ մերոյ առ յինքենէ մեզ ընծայեցուցեալ: Տեղի տայ մեզ ելանել համարձակ 'ի քաղաքէ աստի բարձեալ տանելով 'ի վր մեր, զոր միանգամ իւրաքանչիւր ըստ ուժոյ իւրմ բառնալ մարմնի: Արդ ո՞վ արգելու մեզ 'ի բառնալոյ 'ի վր ուսոց մերոց զերկրաւոր՝ զծնողս, զարս և զորդիս մեր, և փրկելոյ զնոսա ընդ մեզ:

Ամենեքեան առ հասարակ ներբողինեօք դրուատեցին զմեծահանճար խոհագաստամիտ կնոջս այսորիկ, և յայնմ պահու

հու թուեցաւ ամենեցուն 'ի մահուանէ զարծ առնել 'ի կեանս : Սմին իրի ոչ կամեցան դանդաղել և ոչ փայրկեան մի, առ 'ի գնել 'ի գործ զքաջայարմար խորհուրդն զայն : Եթէ ոմն երբեք եսես հանդէս առաւել սրտացուցիչ քան զայս, յորում անհամար բազմութիւն կանանց իւրաքանչիւր հասակի, և վիճակի, ամենեքեան համաձայն և համախորհուրդ պարապէին 'ի սոյնպիսի գործ բարեգութ, 'ի քաջալերութիւն միմեանց զմի ձեռամբք ելանէին, արամբիք զարս իւրեանց 'ի վէր ուսոց բարձեալ տանէին, և հանիք պառաւեալք զմատաղ թոռունս իւրեանց, օրիորդք կատարելագոյնք զհաւ՝ կամ զհայր, կամ զեղբարս իւրեանց, և դուքսն յառաջոյ ամենեցուն բարձեալ 'ի կաթողին տիկնոջէ իւրմէ այնու կորովութե զոր չէ հնար պատմել :

'Ի տեսանելն զայս կայսերն կորրադոսի 'ի մորմոքմանէն յարտասուս լուծաւ, և դարձեալ առ դուքսն՝ ասէ, որովհետև այդքան հանճարեղ և խանդակաթ է առ քեզ ամուսին քո, և այդքան մեծարու և սիրելի են դոքա կանանց իւրեանց, ուք 'ի

վեր

վեր քան զա͞մ փոյթ ունին զնոցանէ, անկ և արժան է՝ զի և ես իսկ զքեզ և զկանայս զայդոսիկ յ͞ժ արժանի մեծի͞ն պատուեցից ։ Կեանքն ձեր ուրեմն, զոր դուք չնաշխարհիկ իմ͞ն եղանակաւ փրկեցիք, եղիցի ապաքէն վ͞ս ամենեցուն փրկեալ և ապահով, և իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ գիտասցէ այսուհետև այնպէս վարել զի, արժանի անդրադարձ փոխարէն ընկալցին ն͞ք ՚ի ձէնջ, որք ձեզ զայն շնորհեցին ։ Թշնամութ͞ն որ զատոյցն զմեզ ՚ի միմեանց մինչև ցայսօր՝ ով գեղջիս, ՚ի սմին իսկ ժամու բարձցի զեղծցի և փարատեսցի մինչև իսպառ ։ Ներեմ քեզ այսօր, և ՚ի մոռացօնս արկեալ զոր միանգամ բորբոքեաց զիս ցասումն ՚ի վ͞ր քոյ, մշտակայ և հաստատուն բարեկամութ͞ի մնասցէ ՚ի մէջ իմ և քո այսուհետև ։ Ե͞ւ արարեալ գովութիւն մեծ կանանց և մեծարեալ զնոսա, հրաման ետ ամենեցուն դառնալ անդրէն խաղաղութ͞բ ՚ի տունս իւրեանց, և ինքն ևս ոչ իբրև զթշնամի, այլ իբրև զմտերիմ եմուտ ընդ դքսին ՚ի Վինսբերգ, և անդրէն զաւուրս անցուցանէին ոչ սակաւս ՚ի խրախութ͞ս հանդիսից

և

և տօնախմբութեանց մշ խաղաղութեան և հաշտութեան վերանորոգելոյ ։

## Պատմութիւն Վեշտասան Եղբարց ։

### Իբրահիմ Բդէշխին ։

Իշիրվան գաւառին պարսից 'ի բզմամաց հետէ թագաւորէր անդրէն խաղաղութիւն և անդորրութիւն մեծ , և բնակիչք երկրին վայելէին ուրախութբ զայն ամ բարիս , զոր միանգամ հանճարեղ իշխանի ումեք մարթ է հպատակաց իւրոց հայթայթել ։ Իշխանս այս էր իբրահիմ բդէշխն , որ բոլորովին զանձն ընծայեցուցեալ էր առ 'ի երջանկացուցանել ըզժողովուրդն իւր , և բարեկարգեալ օրինօք կառավարելով զիշխանութիւն իւր , և մեծահոգունակութբ զգոյշ լինելով զի պաշտօնեայք իւր մի' գուցէ արասցեն զօշաքաղութբ կամ բռնութբ զիրաւունս ռամ-

լու

րութեան նմին, և յօրդորելով առատաձեռ-
նութեամբ զմշակութիւն անդաստանաց, բաշ-
խելով միանգամայն մեծաւ խոհեմութեամբ
զպատկանաւորն վարձ կամ զպատիժ, դի-
տացեալ էր հաստատահիմն կերպիւ և կառու-
ցանել զապահովութիւն և զանդորրութիւն
յամենայն ուրեք, և զուարճալի և երջանիկ ա-
ռատութեամբ բարգաւաճել:

Մինչդեռ ամենայն ժողովուրդն ՚ի բարօ-
րութեան և զուարճութեան իւրեանց ցնծային
և ուրախ լինէին, և մաղթէին զբարիս վասն
տեառն իւրեանց, եկն եհաս գուժկան,
որ ահաբեկս արար զամենեսին: Խրոխտացեալն
լանկթամուր լինելով յայնժամ սասանու-
թեամբ · ըղձանալով ևս առաւել զի արձակել
զսահմանս տէրութեան իւրոյ, զօրու ծանու
դիմեալ գայր ՚ի վերայ գաւառին Շիրվանայ,
առ ՚ի նուաճել զայն և յարել ՚ի պայազա-
տութիւնս իւր:

Ի լսելն զայս Իպրահիմն` տագնա-
պէր առաւել քան զժողովուրդ իւր, որոյ
՚ի վերայ հասեալ տեսանէր զանձնարին չարիս,
փոյթ ՚ի մէջ առնել ՚ի մի վայր ժողովել հա-
մանգամայն զամենայն նախարարս իւր խնդ. ՚ի մէջ

առ

առնուլ՝ զի՞նչ արդեօք պարտ իցէ առնել։
Զօրագլուխն Օսման այր խոհեմ և քաջա-
բազուկ աղաղակէ համանգամայն՝ պիղծ և
պատշաճէ մեզ ՚ի դիմի հարկանիլ նմա։
Նկեսցէ իսկ փքացեալն լէնկթամուր ,
գտցէ նա աստէն ՚ի վախճանի , զոր մինչև
գիտէ նուաճել զյոխորտութն իւր : Ձեզ
ոք ՚ի մէնջ՝ ո՛ տէր , որ ոչ իցէ պատրաստական
զարիւն իւր խոյան վ՟ն քո՝ վ՟ն որդւոց
իւրոց և երկրին իւրոյ հեղուլ : Տեսցէ
գունդն՝ որքան խիստ է մարտ պատերազմի
մերոյ ազգս , որք հաստատեալ են ՚ի միտս
իւրեանց նախ կորուսանել զամ , քան խո-
նարհեցուցանել զպարանոցս անարգոյն
լծոյ նորա : Իսկ ՚ի միւսոյ կողմանէ յառաջ
եկաց եօթպէք հազարապետն պանձուցն
արքունի , և ասէ . ես նախ քան զամեն
արքայ քո՝ պատրաստ եմ ճաշակել զա-
րիւն իմ , և տալ զկենանս իմ վ՟ն քո՝ եթէ
կամք են քեզ տալ պատերազմ ընդ նմա , և
թէ համարիս մարթիլ մեզ սովաւ փրկել
զմեզ ՚ի վտանգէ : Բայց ընդդէմ անհամար
բազմութե զօրաց քաջալերելոց բազմադիմի
յաղթանակաւ , զինչ ՚ի դիմի հարկանիլ
կա

կարօղեն սակաւամթիծ, և առ բազմամեայ խաղաղութեան ժամանակին խամրացեալ ազգն մեր 'ի մարզէ պատերազմի ։ Բաց իմ կարծեաց՝ մանաւանդ թէ հաշուութեն խօսիլ մեզ 'ի դէպ է, թէ ես չէ յուսալի յամենի գազանէ անտի այլ իմն հաշտութեան և խաղաղութեան, բաց յանարգագոյն և անըմբերելի գերութենէ իմեքէ ։ Այլով եղանակաւ չէ հնար մեզ փրկանիլ բայց եթէ փոխըռ տեամբ ։ Օգնեա և զքեզ պարտէ քեզ վաղվաղակի ապահովացուցանել յայլ աշխարհ, մեք ամենեքեան հաւատարմաբար հետեւեսցուք հետոց քոց, ուր ուրեք և կամք իցեն քեզ ամրանալ ։ Յախորան լանկթ ամուր ոչ դեգերեսցի ԺԵ երկար 'ի թափուր և 'ի դատարկ տէրութեան, ճոխամտութին նորա 'ի սուղ ժամանակի ձգեսցէ զնա առ հեռաւորագոյն պայպատութին ։ և փարատեալ միզապատ մրրկին խռովութեան, թերևս քաղցրագոյն բարձրեալն բանալ մեզ զնոր իմն ճանապարհ, որով վերստին անդրէն դառնալ մարթասցուք յաթոռս մեր, և մտանել 'ի սեպհական վայրս բնակութեան մերոյ ։

Օա

Զանազան էին կարծիք հասարակութեան ՚ի վերայ երկուց հակառակ խորհրդոցս այսո-ցիկ, կէսք հաւանէին դիմակալել արշա-ւանաց լանկթամուրայ, այլք ընտրէին մա-նաւանդ զխորհուրդն խոյս տալոյ անտի փախստեամբ։ Իբրահիմ լուծել զհակառակ միտս երկոցունց կողմանց իսկ՝ ասէ. գովեմ ես զարտաւանդութիւն և զքաջութիւն այնորիկ, որ կամի և պատրաստ է դնել արիաբար զանձն իւր վասն իմ ՚ի սոյնպիսի ակներև վտանգի, և վասն երախտեացս այսորիկ ես քան զեւս բորբոքեր յիս հուրն սիրոյ որ առ այնոսիկ, եթէ սիրել ինձ զայնս հնար լինէր այնուհետև՝ բայց նոյն իսկ սէրն իմ ոչ ներէ ինձ տեսանել վասն իմ ձապաղեալ զարիւնն զայն որ պատուական է ինձ։

Արդարև փախուստն կարէ զիս ապահովել. բայց ես առաւել բորբոքեսցի փախստեամբ իմով բարկութիւն և սրտմտութիւն լանկթա-մուրայ ՚ի վերայ թշուառացելոցն այնոցիկ որք միանգամ մնասցեն ոյս գաղանութեան նորա։ Բայց փոքր թագաւորին երկնաւորի, որ զայլ իմն յաջողացոյն խորհուրդ ներշնչէ ինձ, որով ակնունիմ զամենեսեան զձեզ փրկել

զոր և զխաւարչիկ յետ սակաւուց , այլ արդ՝ ջերմեռանդն աղօթիւք հայցեցէք ՚ի տեառնէ,

զի յաջողեսցէ զխորհուրդն իմ :

Արձակեալ ատենին՝ համանգամայն փոյթ ՚ի մէջ էառ պատրաստել զզաւզմաղդի և զազնուածագին ընծայս , և հանդերձեցաւ նոքօք ԺԵ առաջս ելանել Լանկթամուրայ առ ՚ի մաղթել անուխ զփրկութիւն ժողովրդեան իւրոյ : Սովորութիւն էր Լանկթամուրայ , զոր և հրամանաւ իւրով հաստատեալ էր , զի ընծայք՝ որք միանգամ մատուցանէին նմա , յիւրաքանչիւրում տեսակի ինն ինն լինէին թուով : Գիտելով զայս խորահնին իբրև ընդ առաջ եղև նմա , մատոյց նմա զինն նժոյգ ձիս մեծագին կազմածովք իւրեանց , զարդարեալս ոսկւով և մարգարտով . զինն ինն քաջավարժս ՚ի յորս՝ ամենեքին վայելչագեղ ոսկեղէն օղամանեակ ՚ի պարանոցի . ինն ճաճանչաւոր ոսկեթել ասղնագործ մետաքսեայ վրանս . ինն վայելչագործ պատուական հնդկաստանու . ինն ոսկեղէն անօթս յեռեալս ականբք պատուականօք . սոյին նման և այլ պատարագք՝ ամենեքեան մեծագինք և քերուբ.

զոր

գործածք ։ Յետ տակի մատոյց զոմանս ծա-
ռայս, բայց նք ուժն էին թոռոլ ։ Որ է
մեւսն եհարց յայնժամ խորոխառնմամբ ար-
քայն լանկթամուր ։ Ըռ ոտս քո է՝ ասէ
խպրահեմ յերկիր մածեալ առաջի նր ․ ոչ
ունիցիս ծառայ առաւել հլու և հաւա-
տարմագոյն քան զիս , և յայժ քաղցր լեցին
ինձ կապանքս իմ , մինչ նոքօք մարթ է ինձ
գտանել շնորհս առաջի քոյ , և զփրկութիւն
լքել ժողովրդեան իմոյ ։ Զայս շնորհ եւեթ
խնդրեմ 'ի քէն՝ խնայել 'ի ժողովուրդն իմ
'ի ցասմանէ քումմէ , և զիս զինչ կամիս առնել
'ի կամս քոյ է ապաստան , որպէս քոյեմ ես ։
Ի բանէ աստի մեղկացեալ բնածին խստու-
թեանն լանկթամուրայ , և 'ի հեզութիւն
փոխարկեալ , քաղցրաբար 'ի վեր ամբառ-
նալով ասէ ․ ոչ թէ ծառայութիւն և կա-
պանաց արժանի են սոյնգունակ գեղեցիկ
առաքինութեանս , առաջինն մանաւանդ
եղիցիս դու 'ի մտերմագոյն բարեկամս իմ ։
'ի համարի եղբօր և հօր եղիցիս դու ինձ ։
Պահրձ խնդամիտ առ ժողովուրդս քոյ ,
հեռաւեաց երջանկացուցանել զնա , որպէս
արարերդ մինչև ցարդ ։ Եթէ առ այլ բն-

դար

դարձակագոյն և մեծաՀամբաւ տիրապե֊
տութիւնս ոչ Հրաւիրէր զիս վիճակն
իմ, ոչ գիտէի գտանել լաւագոյն
Հեշտութիւն, քան՝ վարելով
զաւուրս կենաց իմոց ՚ի
փոքու թագաւորու֊
թե, գուն գործել
նմանիլ քեզ։

## Պատմութիւն Սօֆի և Տոնէլլուէ։

### [illegible]

Ի սկզբան անդ պատմագրութեանցս յիշեցաք զմին 'ի վայելչագործութեց օգոստափառ կայսերն Յովսեփայ երկրորդի, թէ զիարդ գեղեցիկ իմն օրինակաւ համեղաճաշակ հանդիսացուցանէ զարարեալն առ յինքենէ զբարերարութի, որով առաւել ճոխացուցանէ զարժանաւորութին նր, և զումարձակ զվայելչութի։ Բայց որքան հանճարեղ է նա 'ի բաշխելն զբարերարութիս իւր, այնքան քաջարուեստ և բեղմնաւոր ամենազգաստ հնարից գիւտ հանդիսանայ 'ի պահանջել արդարութեան առ 'ի յայտ առնել զճշմարտութին, և դատ առնել որոց միանգամ իրաւունք պահանջեն։

Ոչ բզմ ժամանակք են տակաւին զի 'ի քաղաքին Վիեննայ ազնուական երիտասարդ ումն վատնելով 'ի նարոտս զմեծագոյն մասն ընչից իւրոց, յայն սահման նեղութեան հասաւ, յորում մոլութիւ այս

տուեալ է յանձն ածել զանձկայլս , որք անձնամատն լինին նմա ։ Մերկացեալ ար- դէն յամ իրաց , և անքուակալ կատարեալ զբաղմանքն անկարգ որ թագաւորէին ի նա . և ոչ գիտելով ժուժել դեռ ևս ; զի յաղթահարմունս միշտ ՚ի պատիր յուսադրու- թիւն հասանելոյ ՚ի փախճանն առ վերստա- ցումն կորստեանց արարելոց . սկսաւ խոր- հիլ ՚ի սրտի իւրում որ ով արդեօք եղանակէ- մարթ էր նմա գտանել զդրամս , առ ՚ի անդրէն վերստին զփորձ առնուլ շահադիտէն ։ Բաց տեսանէր զի արդարութիւն անձնա- րինէր նմա ստանալ , և դժուարին ևս էր գտանել զոք առ ՚ի թակարդել զնա ։ Այլ իմն եղանակ ոչ գոյր , քան զխիթելն ՚ի խա- ղամոլութիւն և ՚ի դաւս . բայց տակաւին զայլեր զնա մնացորդ ինչ բարեկամութե- ակիցանց այնոցիկ , որք անդստին ՚ի հրա- հանգութեան անդ ներընչեալ էին ՚ի նա , թէ ևս կարի տկարագոյնք են սոքա՝ յորժամ- ակամնի թագաւորել յոք մոլութիւնն , և յորժամ միտն արդ խոկ ապաքինել է ։ Ներ- քին հակառակութիւն ՚ի կողմանէ արդա- րութեան՝ որ նահանջէրն զնա , և մոլութիւն ,

 որ

որ 'ի միւսոյ կողմանէ մշէր և գրգռէր զնա՝ յոյժ սակաւ տեւեաց, և 'ի վնաս իւր յաղթող գտաւ մոլութիւն։ Այժմ երբ յաւուր միում՝ զկնի նուաթելոյ զզանազան հնարս, և տակաւին ոչ գիտելով զորս յայնցանէ բուռն հարկանել, 'ի յուշեալ զակնգործն, յորմէ սակաւ ամօք առաջ գնեալն էր զա-կուռս, որովք պճնազարդել էր զամուսին իւր, և քանզի քաջ խելամուտ էր զարդա-բամտութեան և զբարեսրտութեան նորուն, վճիկ դիւրագոյն վարկաւ քան զայլ ամ ոք արկանել զնա 'ի պատրանս։ Ուստի գնացեալ առ նա՝ սկսաւ թախանձել զնա՝ զոր մի-անգամ ունէրն պատուականագոյն յան-գամանդս յակինթս, և յայլ ամ ազգ գո-հարս ցուցանել ինքեան. և մերթ զայ-մերթ զայն տեսանելով, և զգնոյ այնց հրց փորձ առնելով, և յերկարաբանութիւնս ցեցերելով զզանազան ձևոց և տարազուց ընդելուզելոյ և կապելոյ զնս, և հրամայել նմա կազմել կապել և պատրաստել ըստ այլ և այլ ձևոց նշանակելոց, 'ի վախճանի՝ առէ. արդ՝ թուի ինձ թէ հաճոյ թուեցաւ տարացուցքս այսօրինակ կնոջ իմոյ, որում

ըն



335/

ընծայեցուցանել կամիմ։ Դու քանի առաւել մարթիս վճարել զայս գործ և տալ ինձ, զի կամիմ մատուցանել նմա յանակնկալ ժամու, և զուարճալի իմն եղանակաւ սըր-տատրոփ առնել զնա։ Բզիք են ակունք՝ պատասխանեաց ակնագործն, այնպէս և գործոյն բազմօրեայ և տաժանաւոր լինել պիտոյ է։ Փոյթ յանձին կալեալ ջանացից փութացուցանել. բայց յառաջ քան զա-միսս երկու ոչ վստահիմ խոստանալ քեզ զկատարումն։ Ուշ՝ ասէ ազնուականն՝ զի յոյժ ընդ երկար թուի ինձ սպասել.... Թէ և ես իսկ զնոսա ածեմ՝ զի բազմիցս այնքան այլ և այլ են և տարրատի ախոր-ժանք կանանց, մինչ զի ձևն զոր մեք ախորժեմք, մարթ է լինել նմա անհաճելի։ Յաջողագոյն լինիցի ուրեմն զի տարեալ երևեցուցից նմա զօրինակսն, և թողից նմա ընտրել իւրովի ըստ հաճոյից իւրոց, այն-գունակ առնելով զպարգևատուութիւն իմ։ Ի վաղիւն ընկալցիս զպատասխանին, բայց ահա յառաջագոյն յանձն առնեմ քեզ, զի որքան հնար է՝ փութանակի և զարմանա-կերպ լիցի գործն։ Զայս ասացեալ՝ և զե-

ան

տեղեալ զգոհարսն 'ի տուփ ինչ, էառ խո-
րամանկութեամբ, և հրաժեշտ տուեալ
չոգաւ անտի :

Ոսկնագործն՝ որ ծանուցեալն էր զնա յառաջագոյն երիտասարդ բարեհամբոյր և անխարդախ 'ի տուրևառութիւն, և ինչ ոչ գիտելով զմոլութէ նորին 'ի խաղս, և զա բարեալ կորստեանց նր, յոչ իմն նենգութէ զանգիտելով, ոչ կարէր վարկաւ ապահովացուցանել զգանձս իւր, կամ զհետ նր գնալ, և հաւատս ընծայելով նմա՝ արձակեաց զնա :

Իբրև եհաս նենգաւոր երիտասրդն խնդամիտ 'ի տուն իւր, խորհեցաւ նովին եղանակաւ՝ որով ստացեալն էր, 'ի պատրանս արկանել նաև զկինն իւր, և լռեցուցանել զնա 'ի հանապազ արտնջանաց անտի, որ վասն գոհարաց, զորս յափշտակեալն էր 'ի նմանէ, և վատնեալ 'ի նարտս : Կոչել սա-բեմն առ ինքն, և ցուցեալ նմա զակունս զոր առ իւր ունէր՝ ասէ : Որդ՝ այլ ևս մի՛ յաւելուցուս աշխատ առնել զունկն իմ անդադար քրթմնջանօք վս̄ ականց քոց, զի ահաւասիկ թէ գիտեմ ես լաւագունիւք

կյօ

փոխարինել քեզ։ Բայց գիտէի զի բաղդն ոչ միշտ հակառակ լինել ունէր ինձ։

Բայց արդէն վայրկեան մի շահեցոյց ինձ զոր միանգամ յամս բազմս կորուսեալ էի, և ետուն ինձ՝ որ առ քեզ՝ նախ քան զամ պահանջէ զի հատուցից քեզ տոկոսեօք զոր միանգամ ՚ի քէն յափշտակեցի։ Ընտրեմ արդ՝ ՚ի տոցանէ զոր առաւել հաճոյ է քեզ, ՚ի վաղիճն պատուհիրեցից ակնագործին զի ելուզեսցէ ըստ հաճութեան կամաց քոց։ Զարդիս ամփոփեալ ամրափակեմ ՚ի տեղի ինչ ապահովագոյն, և մի՛ երբէք յայտնեասցես կամ ասասցես ումեք, եթէ փոյթ իսկ է քեզ ունել զայնս, ոչ կամիմ զի գիտասցէ ոք նախ քան զտեսանելն զքեզ նորօք ակնազարդեալ։ Ի ցնծութեանն և երկրանոց՝ խոստանալ ՚ի զանխուլ պահել զբանն, երարձ կինն զակունսն և ամրապահեստ արար զնա. իսկ նա ծաղր առնելով զկինն, գնայուելեայն աստ և անդ լռուեսել թերևս կարասցէ գտանել քաջաձիպուն իմն վաճառելոյ զայնս արծաթոյ. առանց ՚ի վեր հանելոյ զբանն։

Ի հետեւեալ գիշերին խաղալեցաւ յոյժ

ակն

ակնագործն զմտաւ ածելով զպարզամտութն
իւր մեծ, և զսակաւ զգուշութիւն որով
աւանդեալն էր երիտասարդի միում զայն-
քան մեծագին իրս ։ Մխանգամայն և յի-
շէր զազատականութի և զազնիւ հրաժան-
գութի նորա, որ ոչ ունէր առնել գործ
անարժան ծննդեան և սննդեան իւրոյ, և
համբաւոյն քաջատոհմութեն, և վարկա-
նելով զնա դեռ ես ծախ և փարթամ, ոչ
էրն յառաջագոյն. և վասն ոչ էրն անկա-
րօտ, այսպէս ես ամենեւին օտար յունե-
լոյ անիրաւաբար զայլոցն, փարատէր 'ի
միտաց իւրոց զամբ. խուճն հակառակ իւրոց,
հաստատելով սակայն 'ի միտս իւր առաւել
աչալուրջ և զգաստ լինել այնուհետև, առ
'ի չտալ տեղի տարադէպ խռովութեանցս
այսոցիկ 'ի սրտի իւրում ։

Ընդ մերկանալ այգուն՝ ես քան զեւ
տագնապեալ վերստին 'ի ծփանաց իւրոց
դէմ եդ անձամբ անձին գնալ 'ի տուն ազ-
նուականին ընկալնուլ զպատասխանի, և
առանց այլ ինչ պատճառանաց 'ի բաց առ-
նուլ զակունսն ։ Ծանուցեալ երիտասար-
դին զգալն ակնագործին, յառաջագոյն ազդ-

առնել ետ նմա, թէ ննջէր դեռ. եւս, և թէ գնացեալ այժմ անագան ուրեմն դառնայցէ: Իսկ ակնագործն ոչ կամելով գնալ անտի առանց յինքն գրաւելոյ զգոհարսն, ետ նմա ծանուցանել թէ չունէր գործ ինչ կարեւոր, վասն կամեցի գնալ անտի, և թէ որքան հաճոյ էր նմա, սպասէր անդրէն: Յետ սակաւուց՝ տեսեալ ազնուականին զի կամ կանուխ կամ անագան ՚ի դիմի հարկանիլ ունէր ակնագործին ամենարդար իրաւանցն, քաջալերեալ զանձն իւր, և յարելով ՚ի նենգութիւն զյանդգնութիւն և զժպրհութիւն, մեկուսացեալ յամբոխէ ընտանեաց ՚ի կողմն ինչ, հրամայեաց մուծանել զնա ՚ի ներքս. և ՚ի տեսանելն զնա իբրու ցանծանօթ ումն հանդարտօրէն ասէ, ես դու՝ զի՞նչ խնդրես՝ հարցանէ ցնա: Պարտաւորութիւն իմ գոլ վարկայ՝ ասէ ակնագործն ես ինքնին փութալ գալ առ քեզ ՚ի լսել զոր միանգամ հրամայեսդ վասն ականց զորոց երէկ պատուիրեցեր ինձ, և ոչ աշխատ առնել զքեզ բերել ինձ զպատասխանին: Ակունք՝ պատասխանեաց ազնուականն նենգաւոր զարմացմամբ, զո՞րոց

ականց խօսիս դու։ Օրինչ ասես թէ զո-
րոց ականց՝ կրկնեաց դարձեալ ակնագործն
գունատեալ և խռովեալ։ Մի թէ չես դու
այն որ եկիր երէկ 'ի տուն իմ, և խնդրե-
ցեր յինէն ցուցանել քեզ զոր միանգամ
ունէի ի պատուհականս և մեծագին ակունս,
և ընդ ելուզանել զն՟ս 'ի զանազան ձևս,
մի թէ ոչ դու առեալ զն՟ս բերեր ընդ քեզ
աստ, առ 'ի լսել զընտրութիւն ամուսնոյդ
շուրջ զնովօք, որում ասէիր կամիլ ընծայել։
մի թէ ոչ խոստացար դու դարձուցանել
առ իս յայսմ առաւօտու և միանգամայն
ճշտուհիրել կապել զն՟ս ըստ հաճոյից ն՟ր, և
ջանալ ինձ հաճեցուցանել զնա։ Եւ ինչ
ոչ գիտեմ՝ դարձեալ ազնուհականն կեղծել
զարմացմամբ և անխռովլ դիմաւ ասէ, ոչ
զականց, ոչ զձևոց նոցին, և ոչ զորոց մի-
անգամ ասես դ․ կամ զայլ ինչ զիս համարես,
կամ ամենևին երազ տեսանես։ Եւ այս
քան ընդարմացեալ ակնագործն յուսաբեկեալ
ապա անկեալ առ ոտս նորա կողկողագին
դիմօք և արտասուաթոր աչօք սկսաւ ա-
ղաչել զթալ 'ի վ՟ր իւր, և մի՛ տառապե-
ցուցանել վ՟ սիրոյն ա՟յ և վասն կենաց
իւ

ճուրոց․ զի թէ ոչ դարձուցես առ իս՝ զաւէ,
զակունսն զայնոսիկ, կորուսից զտուն և
զտեղի, կինն և որդիք իմ մեռցին 'ի սովու․
Յուշարար նմա զպարտաւորութին առն
բարւոյ, մանաւանդ քաջատոհմի որ առա-
ջել փոյթ յանձին ունելոց է զպատուոյ և
զողջամտութէ իւրմէ, աղաչեաց զնա իսկ
մի՛ հատուցանել նենգութի և խաբէութ
փոխանակ ը հաւատարմութեան իւրոյ, որով
հաւատացեալն էր 'ի նա․ 'ի վախճանի ըս-
պառնացաւ նմա զարդար դատաստանն այ,
որում ամ ինչ մերկապարանոց է, և դատա-
ւոր ահեղ է անօրինաց: Բայց ազնուականն
անփոյթ առնելով զամ, և հեգն արարեալ
զասացեալսն, մերթ զվերապականութէ,
մերթ զերազոյ, և մերթ ևս զարբեցութ
և զցնորից յանդիմանելով զնա եկաց մնաց
հաստատուն և անդրդուելի յուրաստ լի-
նելն թէ ոչ զակունս և ոչ զայլ ինչ առեալ
էր անտի․ և հուսկ ուրեմն յաղաղակելն
ակնագործին 'ի յուսահատութէ անտի, նա և
երբու ցասուցեալ աղաղակելով և զանարգ
բարբառելով նմա, ետ քարշել ընդ սան-
դուխսն 'ի վայր, և վանել 'ի տանէ իւրմէ․

Ողորմելի անձնագործն՝ որ ոչ զմիայն ծանէր, և ոչ զձեռնագիր ինչ, որով ապացուցանէր զիրաւունս իւր, քաջ տեսանէր զի անօգուտ էր դիմելն յատեան: Կորուսեալ վարկանելով զամ, 'ի դառնութենէ ցաւոց կորստեանն, և 'ի սրտմտութէ անտի որ վասն նենգութեն յիմարէր գրեթէ և շամբշէր: Յայսմ վարանման և յուսաբեկութեն եկն անկարծ 'ի միտս իւր 'ի կայսրն լինել ապաստան, և անկեալ առ ոտս նր խնդրել զդատաստան և զիրաւունս: Կարի զգօնամիտ է նա՝ ասէր 'ի միտս իւր, քաջ գիտասցէ ճանաչել թէ ո՛ 'ի մէնջ խօսի ըզճշմարտութի, և է յոյժ արդարադատ՝ որոյ վս յոյս մեծ ունիմ զի արասցէ ինձ իրաւունս: Գնացեալ ուրեմն առ կայսրն, որ էր ընդաբոյս հեզահամբոյր և բազմագորով բնութեն իւրոյ շնորհելով նմա զմուտ համարձակ, մտադիւր իմն ունկն մատոյց և բանից նորա. անկեալ առաջի՝ պատմեաց կողկողագին մի ըստ միոջէ զամ անցս իւր, և միանգամայն զայլ ճշմարիտ զամենայն երդմամբ հաստատեաց:

Կայսրն՝ որ առաւել յարտասուաց և

՚ի ցաւոց առն թշուառացելոյ , քան յերգ-մանց նր խելամուտ լինել ուղիղ զոր միան-գամ ծանուցանէ լին , մեկուսացուցել զնա, նոյն հետայն հրամայէ ցուր ուրեք և իջեզը-տանել զազնուականն , և ածել անդանդաղ առաջի իւր : Սոսկացաւ սա ընդ անակ-նունելի հրամանն, և քստմնեցաւ և զգողանի հարաւ յոտից մինչև ցգլուխ , այլ սակայն խրախոյս առեալ իւրոյն , և զպատրաստականն խորամանկ վստահանձնութեան զգիմաց արկեալ , և հաւաստի լեալ նա՝ թէ անհնա-գործն ոչ կարէր իշխք ապացուցանել զամ-բաստանութի՛ իւր , համարձակ յանդիման եղև կայսերն , և զոր միանգամ հակառակ իւր լուաւ , պա՛տ ուրացաւ և ՚ի բաց հեր-քեաց յանձնէ իւրմէ :

Տեսեալ կայսերն թէ ոչ ինչ օգուտ , և ոչ մարթի առնուլ ՚ի բերանոյ նր զխոս-տովանութի՛ նենգութե՛ և գողութեանն արարելոյ , արգէլն հաստատեալ էր ՚ի միում իւր հրամայել խոյզ և խնդիր լինել ՚ի տան նր ընդ ա՛մ կողմանս : Բայց քանզի մարթ էր լինել անկանց յայլուր , կամ թագուցել ՚ի տեղւոջ իմիք , ուստի դժուարագոյն լի-նէր

ծէր գտանելն. սմին իրի՝ առ 'ի անյապաղ
բերել 'ի յայտ զճշմարտութիւն, խորհեցաւ
զայլ իմն հնար 'ի գործ դնել, որ կարի քաջ
զելս յաջողեաց: Մակաբերել 'ի միտս իւր
թէ խիղճն ոչ լինել ունէր ամենեւին թա-
գուն 'ի կնոջէ նր̃, հարկադրեաց երիտասար-
դին համանգամայն զայս տոմսակ գրել նմա.
«Եթէ ցանկաս ապրեցուցանել զկեանս իմ,
«առ ժամայն յանձնեա թղթաբերիս այսո-
«րիկ զակունսն, զորս երէկ ցուցի քեզ:

Առ այս հրաման կայսերն՝ գունա-
թեցաւ ազնուականն, և բեկաւ իսպառ
սրտապնդութիւն իւր, և անկեալ յերկիր
առ ոտս ինքնակալին խոստովան գողութե̃
եղև զփասն իւր: Սակայն ինչ ոչ օգտեց
նմա կարի անագան և բռնադատեալն խոս-
տովանութիւն ապրեցուցանել զնա յարժա-
նահաս պատժոց պատուհասից. և ակնա-
գործին ոգի առեալ անդրէն, 'ի վախճանի
վերաստացաւ դարձեալ երջանկապէս 'ի
ձեռն ամենազգաստ հանճարեղութեան
վեհափառ իշխանին իւրոյ, զոր միանգամ
վն̃ չափազանց հաւատարմութե̃ և պարզա-
մտութե̃ իւրոյ կորուսեալ էր:

## Պատմութիւն ութ և Տասն Ներբողեանց

### Մասն Երկրորդ

Պատահի երբեմն՝ զի որք իշխեն այլոց՝ կամ վն ծախողակ իմն կարծեաց, կամ վն 'ի զուր չարախօսութեանց, և կամ վն ուժգնութեան կրից բարկութեան անիրաւեն 'ի վր հպատակելոց իւրեանց, և պատժեն զնոսա 'ի տարապարտուց։ Որ միանգամ սորագրեալ է, 'ի պատահիլ այսր օրի, պարտ է նմա գիտել խոհականութբ սանձահարել զգրգիռ և բարկութիւն ցասմնականին, զոր 'ի սկզբան անդր յուզէ և յարուցանէ անիրաւ իմն դատաւճիռ, և փոխնակ դիմադարձելոյ, կամ տրտնջելոյ սպասել երկայնամտութբ, դէպ ժամանակի յանդիման կացուցանելոյ զչքնաղութին իւր, կամ զի նոյն ինքն ժամանակն՝ որ օժիր է 'ի վախճանի զճշմարտութին 'ի լոյս ածել, իւրովի հողանի արասցէ զայն՝ և որ

կա

Կատաղարէն՝ 'ի շիջանիլ բոցոյն սրտմտութեան, որ վարեաց զնա 'ի հաստատունն անխորհուրդ վճռոյն, այնուք են նմա բանալ ըղմտաւ համարձակ ընդ ջատագովութեան և պատասխանոյ, և 'ի վեր հանել անմեղութեան՝ որ զառաջինն պարտաւոր հանդիսացաւ առաջի իւր, անկ և արժանի է նմա յետ ընթադրել զարարեալն ձեռս, և փոխարինել ըզայն ։ Երկոցունց ևս այսոցիկ տիպար ցերընտիր յանդիմանեն մեզ երկու 'ի նչէ, որք կարի տարանջատ էին 'ի մէնջ բարուք և աշխարհաւ, յոյժ նոճասատագոյնք քան զմեզ տոհմեն համարիլ յամբարհաւաճութէ մերմէ, և խոտիլ իբրև զբարբարոսս ։

Ջայտէր այն՝ որ 'ի վերջին յամս անցեալս այնքան ընդ երկար նեղեաց և տառապեցոյց զանգլիացիս յեզերս կործանռելոյ, դաշնակից և բարեկամ էր լեալ զաղղիացւոց անդստին 'ի ժամանակէ անտի, յորում այլ իմն մարտ սաստիկ գրգռեցաւ 'ի մէջ այսոցիկ երկուց քաջ ազգացս յամի տն 1755. որ հաւասար վերջնոյն ոչ միայն յեւրոպիայ, այլ յափրիկէ ևս և յասիայ և յամերիկայ ընդ ամ կողմանս տարածեաց

զհուր և զաւերումն ։ Որդ՝ է ժամանակին ընդ այնոսիկ պաշարեալ անգղիացւոց 'ի Ջնդիկս զպոնդիշէրի քաղաք մեծ և երևելի քան զոր միանգամ ունէին զաղղիացիք 'ի կողմանս յայնոսիկ ․ զայս լուեալ Հայտէր ալի՝ թէպէտ ինքն ևս նեղեալ էր սաստկապէս 'ի կանէրայ անհաշտելի թշնամւոյն իւրոյ և 'ի քաջամարտիկ ազգէն մարաթաց 'ի բենկալուր յերկրի իւրում, գիտաց սակայն որքան հնար էր նմա 'ի թիկունս հասանել դաշնակցաց իւրոց զօրօք և կերակրօք առաջնորդութբ մորտում սահիպ աւ 'ի ազատել զքաղաքն պաշարեալ ։ Օրպէտ քաջավարժ էր մորտում, և հայկական ամ աշալրջութե թշնամեաց՝ այնքան յաջողեցն մուծանել 'ի քաղաք անդր զզօրս զգէնս և զկերակուր, մինչ զի որք առ նոքա զութե պաշտպանողաց և կերակրոց հանդերձեալն էին յետ սակաւ աւուրց տեղի տալ թշնամեաց և մատնել զքաղաքն, օգնականութբ նր մարթացաւ է երկար զդէմ ունել բուռն խիզախմանց անգղիացւոց ։ Սակայն 'ի վախճանի կարի հզօրագոյն գոլով տոցա, ամ ընդ դիմութիք և ամ օգնականու-

նութիւնք 'ի դերև ելին, ուստի հարկաւո–րեցաւ քաղաքն մատնիլ 'ի ձեռս նոցա :

Լուաւ Հայտէր այն զանախորժելի լուրն մատնութեան քաղաքին յայնժամ, մինչ անձնարին ճապաղեօք արեան և սաստիկ հարուածովք յաղթահարեալ խայա–զկանէր և զմարաթս, առատանայր յանձն իւր : Սրտխտացեալ այսու՝ նախատինք մեծ համարեցաւ զինուց իւրոց, վասն չկարանելոյ նոցա հաւասարապէս յաղթօղ յամ ուրեք, և համարելով թէ ոչ ինչ օգտելն օգնակա–նութեան իւրոյ առաքելոյ մրտումի էր զրելի, վառեցաւ բորբոքեցաւ ցասմամբ ընդ դէմ նր, որոյ 'ի դառնալն առանց տալոյ նմա ժամանակ պատասխանւոյ, ծանրաբեռ–նեալ զնա անձնարին և դառն անարգա–նութեամբ, ընկէց զնա յամ աստիճանէ և պատուոյ, և արհամարհեալ և անգոսնեալ մերժեաց զնա յերեսաց իւրոց իբրև ըզ–յետնեալ ոսկական ոք :

Տարաւ մրտում մեծահոգի արու–թեամբ անարգութիւն, և շատացեալ զանխիղճ միտս ունել և զանմեղութիւն, առանց դժմաքանութեան կամ տրտնջանաց անար–ժան.

ժան պատժոյն ջնազանդեցաւ։

Իսկ զօրականք նր̅, որք սիրէին զնա ոչ նուազ վ̅ն առաքինազարդ բարուց նր̅, քան զոր յարգէինն վ̅ն քաջութե̅, ցաւէին յոյժ 'ի տեսանելն այսանակ չարաչար փոխարինել զարդիւնս առնն մծի. և զաղչիւցին ոմանք եղեալք 'ի մէջ սոցա իբրև տեսին զիջեալ և հանդարտել զմրրիկն ցասման թագաւորին, սկսան ջատագովել զնա պարապետն իւրեանց, ցուցանելով նմա՝ թէ մարտում չէր ինչ անփոյթ արարեալ, որ միանգամ գործ է քաջավարժ՝ և ամենահաւատարիմ զօրագլխի կատարել, և թէ 'ի ձեռն նր̅ միայն քաղաքն պաշարեալ այսքան ընդ երկար կարացեալ էր տոկալ ուժգնութեանց և յարձակմանց թշնամեաց, և թէ պարգևաց և պատուոց մանաւանդ արժանիք էին քաջագործութիւնք նորա 'ի պաշտպանութե̅ անդր քաղաքին գործեալք, և ոչ պատժոց և անարգանաց։

Յայտ էր այլ, որ որքան եռանդուն և ահարկու էր 'ի սկզբան անդր բորբոքման ցասման իւրոյ, այնքան արդարամիտ և մեծահոգի էր, իբրև շիջաւ հուրն խռո-



վու

վրէժ ազգոյ իւրոյ և զգաստացաւ, երկե-
ղեցայոյց զամ երևելիս զօրաց իւրոց, որք
լեալ էին յառաքման անդ օգնութեն քա-
ղաքին պաշարելոյ, կամեցաւ յամէն անտի
մի առ մի լսել զոր միանգամ պատահեալ էր
անդրէն, ո՞յք էին լեալք փոյթք և հոգու-
նակութիւնք զօրավարին, ո՞յք հրամանք նր̄,
ո՞յք ջանք, և ո՞յք գործք, զիա՞րդ վարեալք
էին, զի՞նչ ելք, և ո՞յք արգեալք առ մե-
ծամեծ և փառաւոր քաջագործութիւնս։
Յայսմ հանդիսի քննութեն̄ ամ̄ ինչ 'ի ջա-
տագովութիւնս և 'ի պարծանս մարտուցն
վճարեցաւ։ Ստրջացեալ ուրեմն արքային
վն̄ անարգար և անխորհուրդ դատաստանին
արարելոյ, խորհեցաւ համանգամայն փա-
խարինել, և քան զի հրապարակական էր
զրկանքն արարեալ նմա, սոյնպէս և հրա-
պարակաւ կամեցաւ հատուցումն առնել։

Ապա հրամայեաց մեծաշուք հանդեր-
ձանօք կազմել պատրաստել իսկոյն զարքայ-
ական զհանդէս, որում սովոր էր հանդի-
սանալ 'ի տօնախմբութիւնս, և պարառեալ
ոչ 'ի թիկնապահաց և եթ, այլ յամ̄ աւա-
գանւոյն, և յայնց առջին 'ի խորհրդեան

եղելոց, և յանհամար բազմութէ ծառայից-գեանն խմբելոյ գնայ 'ի տունն մօրտուժի ։

Սա՝ որ չէր իրազեկ այսր ամի, և յոր մէ թէ նա վատաբաղդութիւն զփառաւորատոհմանացն նսեմացուցեալ էր զպայծառութիւն և զշուք, ոչ սակայն զառաքինութիւն և զօգտայն խաղաղութի զոր ընդ իւր ունէր միշտ, ձեռնէր հանդարտօրէն 'ի հանդերձս անպաճոյճս և սոսկաչէնս 'ի պարտիզի իւրում, և զօհարձանայր վայելչագեղ տեսլեամբ ազգի ազգի բուսոց և տնկոց անդրէն եղելոց, հիանալով միանգամայն ընդ անչափ պերճութի, և անպատմելի վայելչութիւն բնութեան ։

Հայտէր այն տեսանէ զնա 'ի վերուստ փառացի և շքեղազարդ փղին յոր նստեալ էր, և իջեալ անտի համանգամայն ընթանայ առ մօրտուժ, և ընդգրկեալ զնա ոչ դադարէ 'ի համբուրելոյ ։ Ինձ պարտ է զամօթ ի հարկանիլ վասն անարգանաց առյինէն արժանապատուութե քոյ արարելոց. բայց ուրախ եմ գտնելոյ վասն վաղվաղակի 'ի վերայ հասանելոյս ճշմարտութե. և մարթանալոյս զանդրադարձն հատուցանել քեզ

փոխարէն ։ Երաշէկ եմ այնքան գովութեան լեալ արժանի գործք քո, որքան պարսաւանաց համարէի ։ Արդ՝ առընկալ դուրեմն վերստին անդրէն զիւր քեզ արժանի զպատիւս, և խնդրեմ 'ի բարեկամութենէ և 'ի սիրոյ անտի իմմէ զոր միանգամ ցանկաս աւելի ։ Ի ձախորդութեան իմում՝ պատասխանեաց խոնարհաբար մտաւմ, այլ ինչ ոչ տրտմեցոյց զիս, քան զկորուսանելն իմ զսիրտ մի բազմադորով՝ ոպ քոյդ է ։ արդ՝ որովհետև՝ արքայ՝ դու ինքնդ հաճիս դարձեալ շնորհել ինձ զայն, զի՞նչ աւելի քան զայն մարթէ ինձ ցանկալ ։

Հայտէր ալի վերստին զգուշեալ զնա՝ ետ նստուցանել փառօք 'ի վր փղին իւրոյ, և ինքն յերիվար աշտանակեալ զառաջեօք նր գնալով՝ գովաբանական ձայնիւ յոգնախումբ բազմութեան ժողովրդեան՝ հանդիսիւ իմն գոգցես յաղթանակի եած 'ի պալատ իւր արքունի ։ և անդանօր տուեալ նմա վերստին զիւր զաստիճանս և զպատիւ, մեծարեաց զնա միշտ այնուհետև մինչև ցվախճան աւուրց իւրոց՝ իբրև զառաւել յարգելին և առաւել ազնիւն 'ի պալատականս ։

կանս իւր, ընծայեցուցանելով այնու այլոց զմեծահամբաւ իմն տարածոյց եղանակին, որով մեծահոգիք փոխարինել ունին անիրաւութեանց առ 'ի յինքեանց արարելոց, յորժամ 'ի վ̃ր հասանին ճշմարտութեան ։



## Պատմութիւն ինն և Տասն երրորդ։

## Կոմսն Օրէնգայ կամ Հրահանգութիւն։

Առաւել վտանգաւոր վայրկեանն ազ-
նուազատոհմ երիտասարդի ումեք,
որ և յաճախ դատէ զհամայն կենաց նորա,
այն է՝ յորում արձակեալ ՚ի լծոյ հրահան-
գութեան, հաւանէ լինել ինքնատէր և ՚ի
սեփական կամս իւր ազատական։ Ոչ պար-
տաւորեալ ՚ի պարապման գործոյ իրիք,
յորում տեսանեմք լինել ըստ մեծի մասին,
և մատնեալ զանձն ՚ի յարաժամ դատար-
կանձնութի, եթէ դէպ լինի նմա՝ որպէս
դիպւածոյն է, ընկերշակիլ ընդ այլ երիտա-
սարդս ինքեան գունակ պարապորդս և
չըջմոլիկս, որք անաշխատ ՚ի մոլութիս վարա-
կին, ՚ի սուղ ժամանակի կորուսանէ զնա
արդիւնս եւ իմաստագոյն և զգուշագոյն
հրահանգութեան, զմտաւորութիւն հարկանէ զնա
խրատս բարիս, ՚ի բաց ընկենու զուսմուն-

ա̄մ, և զարթուցեալ 'ի վատթար ներգոր-ծութեանց այնոցիկ, ը̄ որս կենցաղավարէ, թելադրեալ 'ի դիւծաշունչ օրինակաց, տաղտ կացեալ առէպ յանձն իւր առ պարապոր-դութեան, տակաւ տակաւ դիմագրաւ լինի յա̄մ մոլութիւնս ։

Այն իսկ սահմանի վիճակեցաւ երի-տասարդ կոմսն Օրենգայ՝ անդստին յելա-նելոյ նր̄ 'ի վարժարանէ ։ Իբր սա միամօր որդի ծնողացն և բազմահարուստ հօր միոյ, և ժառանգ̄լ ինքնատէր՝ առանց փորձառութե̄ և՝ առանց առաջնորդի մտեալ յորձանս լայ-նածաւալ ծովու կենցաղոյս, առօրին պա-րուեալ շրջապատեցաւ 'ի դատարկասուն երիտասարդաց, որոց և ուսաւ իսկոյն ըզ-բարս ն̄ց ։ Պարապոյք, և ամենևին անգործ մերթ ը̄ միայն, և մերթ ը̄ միասին յայս-ցանէ զկեանս անցուցանել խնդրէր՝ ժա-մավաճառ լինելով ը̄ նմ̄ 'ի սնոտիս՝ յանա-ռակութիւնս և 'ի խաղս ։ Որպէս առ 'ի սնուցանել զայնգունակ մոլութիւնս դժուա-րին մարթէր բաւական լինել գումարն դը-րամոց, զոր հայրն ամիս ըստ ամսոյ տայր նմա, սակայն զօրաշք նր̄, և որք միանգամ

վայ

ձայնելէինն զարդիւնս շռայլութեան նր դիւ-
րեաւ գիտացին գտանել վն նորա զվաշխա-
ռուս, որք անիրաւ պայմանաւ, և խար-
դախ ձեռագրութեամբք տալով փոխ զդրամս
առ 'ի զհարիւրն առնուլ անտի, զոր միան-
գամ խնդրէրն՝ առ ձեռն պատրաստ մա-
տուցանէին նմա: Այլինչ եղանակաւ 'ի
սուղ ժամանակի անկաւ ընդ անհամար
պարտեօք, որք սպառել ունէին զՌ. Ծ մասն
հայրական ժառանգութեան, եթէ 'ի ժա-
մանակին յայնմիկ վճարեալ էր հայրն 'ի կեն
ցաղոյս: Իսկ սա չէր իրազեկ այսր ամի, և
պատրեալ յուսումնական ակնածութեամբ յար-
դանաց և որդիական հպատակութեան, զոր
քաջ ուսեալ էր կերպարանել, առ'ի և
առաւել թմբրեցուցանել զնա, զամ ինչ
ըստ բաղձանց իւրոց յառաջադիմել համարէր:
Զափազանց իմն կորուստ՝ զոր ալար նա 'ի
խաղս, առաջին թնդիւնն եղև, որ 'ի թըմ
բութէ անտի զհայրն զգաստացոյց, որև
յորդոր լինելով նմա հետախուզել և ման-
րամասնաբար դարակել զնախընթաց գնացս
որդւոյն, յանդիման արար նմա զանդունդն
յոր գահավիժեալն էր:

Առաջին խորհուրդն՝ զոր ծնաւ նմա ցաւումն, առ սոյնգունակ յայտյանդիմանութեան եղեռնութեանց նորա, որ այնքան առաւել ելից զնա դառնութք և սրտմտութք, որքան նուազ նախատեսեան էր, այս եղև՝ մերժել զորդին համանգամայն յերեսաց իւրոց, և տալ կրել նմա ՚ի խորս աշտարակի միջ զպատիժ պատուհասի անցեալ անառակութեանց իւրոց ։ Բայց ՚ի միտս լեալ, և առաւել անդորրամտութք նկատեալ՝ խելամուտ եղև զի մերժելով և ՚ի դիպահոջ պահելով զնա՝ պատուհասէր միայն և ոչ ուղղէր, և զի պատիժն՝ փոխանակ արմատաքի խլելոյ ՚ի սրտէ նորա զմոլութիս և զչարաչար քարս՝ առաւել սաստկապէս գրգռելու էր զնա ընդ դէմ պատժոյն ։ Ծանեաւ ևս՝ զի ըստ մեծի մասին իւրեան էր համարելի, վն անզգուշաբար թողլոյ զնա սանձարձակ և ՚ի կամս իւր ապաստան, որ զրեթէ՝ գոլով ապագործ, հարկաւորեալ էր լինել անառակ և չարաբարոյ։

Խորհեցաւ ուրեմն ուղղել զխալանս իւր, և կոչեալ առ ինքն զորդին, որ քաջ ճանաչելով զմտաստապարտութի իւր՝ դողա-

ցեալ

ցեալ և գունատեալ, հազիւ համարձակէր յանդիման լինել նմա, այսպէս ասէ. ամօթն քո բաւական յայտ առնէ՝ զի քաջ գիտակ ես զոր տրխուր արդիւնաւորի անցեալ գնացքն քո: Բայց թէ ես յանցաւոր ես դու, և անարժան հայրական սիրոյ, այսու ամենայնիւ տակաւին ոչ մարթիմ մոռանալ լինել հայր քո: Սէրն՝ որում չես այլ ևս արժանի, բայց զոր դեռ ևս ոչ կամիմ վանել 'ի սրտէ իմմէ, ստիպէ զիս ներել քեզ և անտես առնել զարժանահաս պատիժն անառակութեանց քոց: Բարք և գնացք քո այսուհետև տացեն ինձ ուղղել՝ արդեօք պարտ է ինձ տակաւին սիրել զքեզ իբրև զորդի, կամ ատել միշտ և բարդել դիզել 'ի վերայ քոյ զամենայն զանէծս իմ: Նախ արդ պարտ է քաւել զանկարգութիւնս քո. գիտեմ զչափազանց պարտիս քո, զոր արարեալ ես յամենայն ուրեք, և թէպէտ մնկ և պատկանէր ինձ 'ի վերայ քո արկանել զծանրաբեռնութիւն նոցին, սակայն ոչ կամիմ, զի՝ մինչ փոյթ 'ի մէջ առնելէ իմ հանապազ հատուցանել իսկոյն իւրաքանչիւրումեք զոր միանգամ պարտէի նց, անուան որդւոյ իմոյ արձանացուցի 'ի

մտ

մատեանս այլոց՝ ՚ի սակս պարտապանաց ։ Յայտնեա ինձ ուրեմն զամենեսեան զնոցա յանուանս որոց պարտիս, և որքան իւրաքանչիւրում և հի՛մ արդեօք ։ Մի՛ ինչ զանգիտեսցես ՚ի յայտնելոյ զգումարն կամ զթիւն. զի զի՛նչ և իցէ հանդերձեալ եմ վճարել, և ցանկամ զի յայսմիկ գոնեայ ընկալցի բարեմտութիւն իմ փոխարէն ինչ ՚ի սեռնութէ քումմէ ։ Թէ ես կամեցիս դու թագուցանել զիս, քաջ գիտեմ զեղանակն յայտ առնելոյ զնա, և դու յայնժամ խարդախ հանդիսասցիս, և բոլորովին և միշտ անարժան գոցիս սիրոյն այնմիկ, զոր ունիմս տակաւին առ քեզ ։

Նկուն եղեւ երիտասարդին ՚ի սիրայորդոր և միանգամայն ցասկոտ բանից ասողի, տառապէր յանձնարին խղճէ, և հարկաւորութիւն առաջի առնելոյ հօրն զամենայն ստգտանս անցեալ մոլորութեանց իւրոց. զամօթի հարկանէր ։ Այսու ամենայն տեսանել թէ ՚ի հարկէ սեռն և անխարդախ լինել ունէր, առանց ինչ թագուցանելոյ՝ ՚ի վեր եհան զամենայն ։

Լուեալ հօրն մատաղիւր իմն զամենայն, ասէ.

կէսս

վճարեցին պարտիք քոյ • և ոչ յաւելեալ զայլ ինչ ասել, զի քաջ տեսանէր թէ չէին այնուք աւելորդ չարչարանութե, արձակեց զնա լի ապաշաւութե՝ մրմռմամբ՝ միանգամայն և ամօթով :

Կոչեաց ապա մի առ մի զպարտատերս նր, սակ էարկ ընդ իւրաքանչիւրումեք 'ի նցէ զոր միանգամ արդարութին յապաւել պահանջէր 'ի նոյնգունակ պարտուց ; և հաստատել զայս, ետ պատրաստել զերկու մեծագոյն սեղանս յայգորեալ տեղւոջն, և հրամայեաց 'ի վր միոյն սփռել զգումարս դրամոց, որք հատուցանելիք էին իւրաքանչիւր պարտատեարց, և 'ի վր միւսոյն նմանապէս զգումարսն, զորս սակ արկեալն էր ընդ նոսա յապաւել :

Յետ այսորիկ կոչեաց զնմ զպարտատեարս միանգամայն, և առաջի ածել զորդին, կամեցաւ զի յանդիման աչաց նորա հատուսցի իւրաքանչիւրումեք, որ ինչ միանգամ պատկանէր, և այսանակ արձակել զնս մի առ մի, յորժամ մնաց միայն ը նմա, ցածուն և սիրալիր ձայնիւ ասէ ցնա • եթէ. Դու բարւոք գիտէիր զորչափ անհնարին փո-

րուց

րուց քոց , հաւատամ եմ , զի առաւել խո-
հականութիւն զկեանս քոյ տնօրինէիր ։
Որդէն տեսեր աչօք քովք ; մնայ քեզ 'ի
քէն առնուլ զխրատ ։ Օտար ձեռն պատ-
րաստ դրամոն , զորս տակաւին տեսանես
ափուեալս 'ի վր̅ սեղանոյն , զա̅մ ընդ մնա-
ցելոցն յափշտակելոց էին 'ի քէն չարա-
բարոյք այնոքիկ , որոց հաւատացեալդ էիր ,
զի այնքան էր ամբողջ գումարն , զոր դու-
պարտ էիր նմա . ես գիտացի թափել զայն
վ̅ քոյ 'ի ձեռաց նմա , և զկնի մահուան իմոյ
տացի քեզ ։ Բայց զայս միայն պարգև առ-
յինէն պարտ է քեզ ակնունիլ , մինչ զմե-
ծագոյնս ոչ գիտիցես արդիւնաւորիլ փո-
խարկելով զեղանակն կենցաղավարելոյ քոյ 'ի
լաւ անդր ։ Եթէ ոչ տեսից զայս , զոր մի-
անգամ ջանիւք և երկարութիւն շահեալ է
իմ , յառաջ քան զցրուիլն անարժանապէս
յանառակ իմն վատնչէ , գիտացից յոյժ բա-
րիոք տնօրինել 'ի յօգուտ այլոց , որք բա-
րեկամութիւն իւրեանց իմաստնապէս վա-
րեսցեն զայն ։ Իսկ արդ` կամիմ փորձիւ
իմիք ճանաչել , զոր միանգամ 'ի քէն մարթ
է ինձ ակնունիլ ։ Կամ է ինձ զամս երկա-

յանձ

յանձնել քեզ զհօգն իմոյ մասին դոյից իմոց։ Եղանակն՝ որով վարեսցես դու զայնս, և հանգամանքն, որով զարդիս տեսից զքեզ ինքնդ կառավարել, եղիցին ինձ մակաբերութիւնք վասն ապագային։

Տեսութիւնն ամենամեծ քանակութեան դրամոց, զորս ծանեաւ շռայլեալս առ յինքեան, զոր և չէր երբէք այնքան մեծ համարեալ յառաջագոյն, գոլով անփորձ՝ թէ յաճախակի ծանր է կատարել արդեամբք, զոր միանգամ շլթամբք արտաքերի, յապուշ կրթեաց զերիտասարդկոմսն, և յիմարեցոյց, մինչև խօսիլ անգամ և շարժիլ չկարել։ Այլ առաւել ահաբեկեաց զնա սպառնալիքն հօր, զոր քաջ գիտէր թէ որքան արդար և իրաւացի էր։

Այսու ամենայնիւ 'ի սակաւ աւուրս գուցէ փարատէր ապշութեան և ահաբեկութեան, սակաւ առ սակաւ դառնայր անդրէն յառաջին զնացս իւր, ընդ որում սովորեալ էր բազումք, եթէ մնալով ապագործ ընդ նախնի սովորութեան՝ հարկաւորէր վերստին մանել զանձն 'ի նոյն զեղխութիւնս, և թարթափելով ընդ նոյն ցոփոցս, կամ ընդ նմանիս

նա

նոցին՝ ժամանախանձառ լինել 'ի խաղաղերկունս և 'ի զբօսանս սնոտիս : Բայց զբաղմունքն նորագոյն, յորում եղաւ, եղև փրկութիւն նորա:

Պարապէր մտադիւր իմն յառ 'ի հօրէն յանձնեալ գործս, զատուցաւ յընկերակցութենէ պարապորդաց, և 'ի խմբէ նոցին, և ուրախ եղև յոյժ վասն գտանելոյն զեղանակ իմն առաւել օգտակարաբար, և ոչ նմանագ ուրախութեան վարելոյ զաւուրս իւր : Ի կատարել երկուց ամացն այնքան հաճ և հաւանեալ եղև հայրն, մինչ զի զտնտեսութիւն այլ ընչից իւրոց իսկ յանձն առար նմա, ինքն միայն կառավարէր և. նպաստ մատուցանէր նմա խորհրդով իւրով ըստ հարկին պահանջելոյ : Ամուսնացոյց ևս ընդ հանճարեղ և համեստաբարոյ և ազնուազարմ օրիորդի միում, որ 'ի կատարումն էած զցանկացելն վերանորոգութեան բարուց որդւոյն, զոր և այնուհետև առաւել զգօնամիտ և առաւել բարեկենցաղ ազատորդւոց յարացոյց հանդիսացոյց :

Օկնի մահուն հօրն ժառանգեալ զամ եղև մին 'ի ճոխագունից. բայց 'ի յուշ ածեալ զանցեալ անցս իւր, խորհեցաւ 'ի

վեր

վեր քան զամ ծախել զինչս իւր 'ի պէտս
քաջ հրահանգութեն զեռաբուսիկ որդւոյն
իւրոյ, հաստատապէս 'ի միտ առնելով, զի
թէ և զնծածագոյն մասն գոյից իւրոց վասն
այնորիկ ծախել ունէր, այսու ամի կարի
փարթամ թողոյր զնա, մինչ բարեսուն և
բարւոք հրահանգեալ թողոյր զնա:

Ընդ արծակելն ոտից և լեզուի ման֊
կանն, սարտուցնել զնա 'ի ձեռաց սպասա֊
ւորաց, որոց սալորութի է ննոտի և մոլար
խնդրել լինել զմիտս մանկանց, և սերմանել
'ի սիրտս նցա զառաջին սկզբունս մոլութեց,
կամեցաւ զի լինէր միշտ ը̅ իւր կամ ընդ
մօրն, որք բարեխառնութբ և ցանցաւսկի
խստութբ ը̅ հարկին պահանջելոյ, այնքան
հլու և հպատակ արարին զնա, և մինչա֊
մայն այնքան ուրախամիտ, համարձակ, և
կայտառ, մինչ զի բերկրութի և հրճուանք
եղև նոյ, և զարմացումն ամենեցուն որք
տեսանէին զնա:

Իբրև կատարեցան ամք եօթն հա֊
սակի մանկանն, սկսաւ խնդրել 'ի մէջ առնուլ
զդաստիարակէ նորին, որ ոչ միայն 'ի դրպ֊
րութիւ, այլ և յաջնոհական բարս՝ 'ի հա֊

մեստութեան, յողջմտութեան, յարդարութեան, յամօթ պաշտութեան, և յամի որ վայել է ազատորդւոյ ումեմն, հրահանգեաց է: Հետազօտեաց յամ ուրեք, բայց որք միանգամ յաջողակքն էին զգօնութբ և հանճարեղութբ իւրեանց առ բարւոք դաստիարակութին, դժուարաւ ընծայեցուցանէին զանձինս ձանձրացուցիչ և տաղտկալի մանկամարզութեան, և որք մտադիւրքն էին այս, ոչ գտանէր 'ի նմա զցանկացեալն ձեռնհասութին: Յոյժ վարանէր ևս, տեսանելով զի օրըստօրէ աճէր մանուկն, և գրեթէ անհնար էր 'ի բացեայ ունել զնա միշտ յընկերակցութենէ այլոց մանկանց, և սպասաւորաց անտի, որք բազմիցս կամ չար օրինակաւ, կամ անհամբոյր բանիւք, կամ սնոտի մարդահաճութբ, կամ դիւաշունչ ներշնչմամբ 'ի միում վայրկենի ապականեն զարդիւնս բազմօրեայս: Յայսմ տատամսութեան, 'ի յուշ եած զվարժարանն, ուրանօր նոյն ինքն հրահանգեալն էր, բայց սակաւ օգուտն, զոր ստացեալ էր անտի, տայր նմա պատճառ դժկամակութեան:

Նոյնու միտ յետ բազում տարա-

ճոխութեանց մոռացիւր իւրոյ զմտաւ ածելով
վերստին, յիշեաց՝ զի զանհպատակութիւն
զանզգաստութիւն զատելութիւն առ ուսումն,
և զառաջին ընծիւղսն հարախստավար բա-
րոյից չէր զգացեալ անդրէն, բայց եթէ
յորժամ հասեալ յարբունս հասակին, ըս-
կսեալ էր 'ի բաց ընկենուլ զհրահանգութեան
զլուծ, և ստունկանել պատուիրանի սահ-
մանադրութեանց: Օհ անդստին 'ի մանկութենէ,
մինչ հասակն դեռաբոյս հլու և հպատակ
կեալ պահանջէր ընդ իշխանութեամբ և հանա-
պազորդ հնազանդութեամբ որոց միանգամ
կարգեալ էին յիւրն կառավարութիւն, ան-
մտութիւն ծագեալ էր 'ի նմա անխախտ,
և կից ընդ նմին նոյն պաշտօնութիւն, հնազան-
դութիւն, և սէրն առ ուսումն: Յուշեցե-
ինքեան ևս օգուտն, զոր շահեալն էր 'ի
տղայական հասակի իւրում, անդրէն 'ի վար
ժարանի. այս է՝ զի կենցաղավարիլն ընդ հա-
սարակաց իւրոց մինչ առաջի աչաց պա-
հապանին որ հսկէրն 'ի վերայ իւրեանց, բար-
ձեալ տարամերժեալ էր յինքենէ զմոլար
կարծիս՝ զյաւակնութիւն՝ և զյանդգնութիւն,
զոր ընդ իւր ածեալ էր 'ի տանէ անտի հօր

իւրոյ․ առաջեալ էր իւրեան զընդարձակութ-
նկատելոյ յաջողապէս և քաջ ՚ի վր հասա-
նելոյ ծփից և յատկութեց իւրաքանչիւր
անձանց, ընծեռեալ էր զառիթ ստանալոյ
զբարեկամս ՚ի զանազան կողմանս, զորոց
զհաղորդակցութիւն տակաւին պահել ախոր-
ժէր, թուլացուցեալ էր զանձն տղայական
անստգիւտ խաղուց և զբօսանաց, որք կարի
քաջ հարկաւորք են բնական կազմութե-
մանկանց, որք խափանեալք խստութեամբ
յառանձնակի իմն կրթութե՝ յայնմանէ,
որ նկրտի այր կատարեալ առնել զմանուկ մի
տասնամեայ, անագան ուրեմն արտաքս ե-
տոնոյն զլինի անպատկանաբար, և առնեն
զմանուկ մի քսանամեայ։ Զայս բարւոք
խորհրդածեալ, ծանեաւ զի որդին իւր
՚ի տիս մանկութե իւրոյ լաւագոյն հրահան-
գութիւ մարթէր գտանել ՚ի վարժարանս
իմիք, քան յայլուր․ և վճիռ եդ անդրէն։

՚Ի լնուլ ամաց չորեքտասանից հասակի
նր, տեսանելով զնա հօրն մտափոխել արդէն
՚ի տղայամիտ բարուց, որք կարի տաղտկա-
ցուցանեն զայր մի խոհական որ հրահան-
գել ունիցի զմանկունս, հանեալ զնա ՚ի

դպրո

դպրատանէ՝ փոյթ ՚ի մէջ եառ խնդրել զայր մի բարեհամբոյր՝ խոհեմամիտ՝ շնորհազօրդ՝ քաղցրաբարոյ՝ ներհուն և քաջաջէտ՝ զի ՚ի մանկութեան ՚ի բնաբանութեան և յիրաւագիտութեան ներակրթեաց զնա, և վարելով ԺԲ նմա առաւել իբրև զընկերակից և բարեկամ, քան որպէս դաստիարակ, միանգամայն ՚ի բարիս և ՚ի համեստ քաղաքավարութեան վարժեաց. և յօրինակաց այլոց, և ՚ի մասագիւր նկատմանց շուրջ ըզգործովք և զբանիւք նոցա՝ առցէ քաջայարմար և դիպողագոյն պատճառս կանոնաւորելոյ նմա՝ զոր միանգամ առնել կամ խօսել օրէն է, և զեղանակս բարեյարմար լռութեան և ժուժկալութեան. զհուսկն ասացից կամ զհոգն զայն, և զխնամ տարցէ, որ քաջահմուտ և զգօն սնուցչի վայել է: Առատագոյն վարձն՝ և խոստումն մեծամեծ պարգևաց անդանդաղ ետուն նմա գըտանել զոր խնդրերն:

Բաց յայսմանէ՝ եգիտ նա և զվարժապետս հմտագոյնս, որք ՚ի լեզուագիտութեան, ՚ի ծիրնթացութեան, ՚ի զինաշարժութեան, և յայլ ամենայն ազատական արուեստս

հրա.

հրահանգեցին զնա 'ի ժամս յաջողակս որոշեալս, զի մի՛ պարապումն 'ի մինն, ըն-միասին շփոթեսցէ, և զանազանութիւն ըն-թաշմանց կրթութեանց փոխանակ ներելոյ և տաղտապեցուցանելոյ, սփոփեսցէ և կազ-դուրեսցէ զնա ։ Կամիմ ևս զի յերաժշ-տութեան և 'ի նկարակերտութեան իսկ վար-ժեսցի, զի ունիցի միշտ ընդ իւր զբօսանս իմն, և զպարապումն ինչ զուարճալի 'ի պարապորդութեան իւրում ։

Ի քսան երրորդում ամին հասակին իւր ընդ նոյն վերակացուին՝ թղթովք և ան-կարևորիւք առաքեաց զնա հայրն շրջա-գնալ զիտալիով և զեւրոպայիւ, առ 'ի հասու լինել զանազան դրից երկրաց, ազգի ազգի արդեանց բնութեան, առաւել յարգի միշտակաց արուեստից, առաւել հռչա-կաւոր և երևելի գիտնականաց, և արուեստ-աւորաց իւրաքանչիւր աշխարհաց, սահ-մանադրութեանց, օրինաց, և սովորութեանց, և բարուց զանազան ազգաց ։

Յետ երկուց ամաց պիտեան ծանօ-թութեամբ բարգաւաճել դարձաւ առ հայ-րենիս և առ ծնօղս իւր, որք ոչ նուազ

անձ

անձկայրին տեսանել յարատեւեալ ՚ի նմա զսերունդն իւրեանց, քան զզգուշացուցանել զնա ՚ի վտանգաւոր Թափառականութէ, ամուսնացուցին զնա ընդ մեծազգի օրիորդի միում, և հասին բաղձանաց իւրեանց և երջանկութեան:

Զկնի ուրախալիր հանդիսին հարսանեաց, առեալ զնա հօրն մեկուսի, ասէ ցնա. արդ՝ դու որդեակ իմ, եթէ Ան կամք իցեն, ոչ յետ բազմաց եղիցիս հայր և տանուտէր նորագոյն իմն գերդաստանի, և զինչսն, զոր ունիմս Թերևս պատահեսցի ինձ յետ սակաւուց Թողուլ քեզ, զի և դու որդւոց քոց ածանցեսցես: Զարդիս ՚ի դէպ է, զի դու գիտասցես յառաջագոյն՝ զոր միանգամ պատկանիլ ունի քեզ, և զի ուսցիս ՚ի ժամու տնօրինել զայն: Տես զո՛ր մասն տնտեսութե ցանկաս զի յանձնեսցի քեզ, կամ Թէ առաւել ախորժես սատար և զօրավիգն լինել ինձ յամի ՚ի տնտեսութե նդ: Յայս հաստատուն ունիմ ես՝ պատասխանեաց որդին, զի ինչք և գործք քո ընդ երկար ժամանակ չունիցին ինչ պէտս տնտեսութե այլոյ ուրուք, բաց ՚ի քէն, այսու ամիմ

ընդ

ընդ իշխանութեամբ և առաջնորդութեամբ քում արարից զոմ զոր միանգամ հաճոյ թուեսցի քեզ, և կարասցէ թեթևացուցանել և կազդուրել 'ի ծանրութեանց հոգւոց ։

Ացորդ եղեւ ուրեմն վաստակոց և ճգանաց հօրն, և բաժանելով զժամս, և զժամանակս 'ի հոգս անտեսութեան, 'ի պարապումն ուսման, և 'ի համեստ զբօսանս իւր, եկեց զգօնամիտ երիտասարդն զուարճացեալ և բերկրեալ յանձն իւր, և սիրեցեալ միշտ և սքանչացեալ յամենեցուն, և կոմսն Օրենգոյ՝ նախահոգալով այսու եղանակաւ յորդին իւր, զոր միանգամ յաջողապէս՝ թէպէտ անագան, հոգացեալ էր հայրն իւր 'ի յինքն, ուրախ եղև վայելել յանձին իւրում և թողուլ ընտանեաց իւրոց զանդորրութիւն և զերջանկութիւն զայն, որ այնքան փափագանօք խնդրի, և յոյժ ցանցառակի գտանի 'ի մարդկանէ ։

## Պատմութիւն Ռասն Երրորդ:

## Սէրն կնոջ առ Խօսնայրն իւր:

Ոչ բզմ՚ ամք են՝ զի երբեմն այնքան խիստ և դառն ձմերային եղև ՚ի Գերմանիայ և ՚ի Գաղղիայ, մինչև սառնուլ և ձուլիլ լայնատարած և սրընթաց գետոց, և մարդկան մեռանիլ: Յաւուրսն յայնոսիկ դէպ եղև ՚ի մէթս քաղաքի Գաղղիոյ զի ՚ի գիշերի միում մինչ սաստկագոյնս շնչէին ցրտագոյն հողմունք ՚ի հիւսիսային սառնամանեաց անտի, կարգեցաւ պահնակ ՚ի դիտանոցի միոջ յանդիման բաղխման սառնաշունչ հողմոց՝ զօրական ոմն, որ գոլով կիսախօթ և վատառողջ, էր ՚ի վտանգի ցրտամահ լինելոյ: Էր սա խօսնայր երիտասարդուհւոյ ուրեմն, որ սիրէր զնա յոյժ, որև իբրև լուաւ թէ նա պահելոց էր յայնմ գիշերի զպահպանութիւն դիտանոցի, առժամայն սկսաւ յանձնարին վարանս մտածել

նել, և աղեկատուր լինել, յոյժ կամեցելով յոչ զօրելոյ նորա առ վատառողջութեն տկար և տանիլ եղանակին խստութեան։ Յուզեալ և խռովեալ 'ի յուշաբերութենց ատոփ, ոչ միայն ոչ իշխէր նստել, այլ և ընկողմանիլ անգամ ոչ համարձակէր․ և առաւել սաստկացաւ կսկիծն և աղէկիզութին իւր, յորժամ պատկերակերպէաց զնա 'ի մտի իւրում արդէն ելեալ 'ի դիտանոց, և 'ի խստութէ ձմերան կծկեալ կարկամեալ` և ցրտասառույց եղեալ: Ոչ կարելով հանդուրժել այսոցիկ ծփանաց ցաւագին զմտաւածութեցս, յաղջամղջի անդգիշերին` ինչ ոչ զանգիտել 'ի սառնամանեաց 'ի կուտակաց ձեանց` և 'ի սաստկաշունչ ցրտաբեր հողմոց, ելանէ 'ի տանէ, որ բարեբաղդօրէն չէր կալի բացատ 'ի դիտանոցէ անտի, և արիաբար միայն ը̄ միայն անձապարէ անդրէն: Ապաքէն գտանէ զշոճաւական զրահականն յայն սահման տառապանաց հասել, մինչև գրեթէ 'ի խստութէ ցրտոյն յօդիս ապաստանն էր լեալ: Սկսաւ ուրեմն թախանձանօք աղաչել, զի հաճեսցի մնալ 'ի տան իւր, ուրանօր լուցել պատ-

րաստ

թոստեմ լեր զխարդկն, և խուն ինչ չեռնուլ անդրէն. բայց զօրականն՝ որ քաջ խելամուտն էր, թէ յանցանք մեծագոյն համարիլ ունէր անձին իւրում լքումն պահպանութեան իւրոյ, շնորհակալ եղև աղջնկանն, եկաց հաստատուն յուրաստ լինելն մեկնիլ անտի: Գոնեայ զաւակս բարէս՞ ասէ կինն, առ 'ի լուծանել զսառն, յորմէ կծկեալ և ամփոփեալ տեսանեմ զքեզ: Պատասխանի ետ նմա զօրականն. չիք ոք՝ որ կարասցէ փրկել զիս յառ 'ի մահ դատապարտութենէ անտի, եթէ 'ի վեր ելցէ բանն: Մեղու՛ կրկնեց անդրէն երիտասարդուհին ասեն կալով Ռացիս անտարակոյս, և զստոյգ ըղմահս զայս, նախ քան զնա պարտէ քեզ զորդիս խափանել և արգելուլ: Իսկ վա՛ 'ի վեր ելանելոյ բանին՝ մի՛ ինչ զանգիտեր, զի ոչ հաւաստի է, և ոչ յայսմ պահու հաւանական, և ա՛յն՝ որ գթած և ողորմած է, ոչ անտես արասցէ զքեզ: Թէ և բանն հըրապարակագոյն ոչ լինել ունիցի, ասէ զօրականն, հաւանեցի՛ր դու՝ զի համարձակեցայց ես պահպանութեան ինձ յանձեալ թաքուր և առանց զխտի ըքանել փառուք.

ոչ պարտաւորութիւն իմ, և ոչ համբաւն իմ կարէ հանդուրժել այսմ կնատութեան։ Թէ և դու գնասցես առտի, պատասխանեաց կինն վերստին, դիտաւորութիւն իմ ոչ է բարձի թողի առնել զտեղին, զի գոյ յիս այնքան սրտապնդութիւ, որով կարացից վայրիկ մի դէտակն լինել աստ փոխանակ ը̃ քո, մինչև դու գնացեալ դոյն ինչ ջեռնուցուս և եկեսցես։ Ողէ՝ մի՛ ուրեմն դանդաղէր, տուր այարէն զզէնսդ քոյդուսիկ ։ . . . Եւ աստանօր յաւել յորդորել այնքան և ստիպել սրտառաճօք և թախանձանօք, մինչ զի յաղթահարեալ զօրականին ՚ի թախանձանաց անտի, և ստիպեալ ՚ի հարկէ՝ զի քաջ տեսանէր թէ ոչ կարէր ը̃ երկար հանդուրժել անձնային խստութեան ցրտոյն առ փափաքողութեն, և քաջալերս առեալ ՚ի յուսադրութենէ անտի՝ եթէ զկնի սակաւուց րոպէից դարձ առնելով անդրէն ՚ի դիտանոց իւր՝ թագուստ իւրն ոչ գայր ՚ի հրապարակ, զիջաւ աղերսանաց կնոջն և աւանդեալ նմա զզէնս, ը̃ նորին և զարտախուրակն և զթիկանոցն իւր, և հաւատացեալ ՚ի նա զնշանն, չոգաւ անտի։

Առ ուրախութեան ապրեցուցանելոյ զխօսնայրն իւր, երիտասարդուհին՝ թէպէտ անըմբերելի էր գոգցես խստութիւն ցրտոյն, հազիւ զգայր զնորուն ներգործութիւն։ Իբրև եանց պահ ինչ սակաւ, ահա յայլակարծուց ՚ի վր̃ եհաս պահակապանն։ Ահաբեկեալ յանակնունելի պատահմանէ աստի, փոխանակ տալոյ զսովորականն նըշան, առ սարսափմանն ապածայնեալ կարկեցաւ։ Ոչ լուեալ պահակապանին զձայն ինչ, համարելով զզօրականն նիրհեալ կամ փախուցեալ, փութայ իսկոյն առ դիտանոցն, և զարմացմամբ գտանէ փոխանակ ընդ նր̃՝ և նորին տարազովք զերիտասարդուհի մի, որ զարհուրեալ և շփոթեալ բան ՚ի բերան առնուլ ոչ կարէր, առ ՚ի ծանուցանել զխարդն անդրէն լինելոյ։

Իբրև ածաւ առ պահապանապետն՝ ոգի առեալ անդրէն ՚ի վեր եհան զբանն լալով, և կողկողագին աղերս արկանելով առաջի նր̃ վս̃ խօսնաւն իւրոյ։ Պահապանապետն առօրին առաքեաց զոմանս ՚ի տան կնոջն ստուգել զիրէն, որք գնացեալ գտին անդրէն զզօրականն, բայց այնքան կծկե-

տակաւին և ամփոփեալ 'ի ցրտոյն, մինչև յուսահատիլ նմ 'ի կենաց նորա ։ Եւ յու-ծմին սակաւ սակաւ ջեռուցանելով զնա, և աստիճան առ աստիճան յաւելով 'ի նա զջերմութն, հուսկ ուրեմն կենդանացու-ցին զնա ։ Բայց առ 'ի ճաշակել զայլ իմն մահ դառնագոյն և չարաչար՝ ողորմելի զօ-րականն գտաւ վերակենդանացեալ ։

Եւ տեան պատերազմական յարդարել հետեւել յաւուրն՝ զի նախասեսուն իւրոյ 'ի խստութէ անտի օրինաց դատապարտե-ցաւ կախիլ զփայտէ ։ Ո՞վ բաւական է պատմել աստանօր զլքումն՝ զսրտբեկութն՝ և դառն զկսկիծ սրտի այերջանիկ երիտա-սարդուհւոյն, որ բաց 'ի այսանակ չարա-վախճան կորուսանելոյ զայն՝ զոր կաթոգին սիրէր, տառապէր և ս'ի խղճէ իւրումն մատ-նելոյ զնա 'ի սոյնգունակ աղետալի վախճան ։ Եւ սակայն կսկիծն և աղեկիզութիւնն փոխանակ յուսահատութ առնելոյ զնա, մե-ծագոյն քաջալերութի, և մեծագոյն զօ-րութի ընծայեաց նմա ։ Սփռեաց զհերս գլխոյ իւրոյ՝ և աղիողորմ և կողկողածայն կականելով համանգամայն 'ի տագնապ փու-

թոյ

թոյ վազս առեալ աճապարեաց ընդ ամենայն տեղի, ուստի ակնունէր միջնորդութեան և օժանդակութեան վասն փրկութեան սիրեցելոյն իւրոյ ։ Անլուր և նորատեսիլ պատահմամբ արդէն ըստ ինքեան ՚ի կարեկցութիւն յորդորէր յոյժ զամենայն որք վասն երկոցունց էս, և ՚ի զարմացումն ածէր զամէն ընդ նորաքանչ գործն երիտասարդուհւոյն, որ տուեալ էր զի տարացոյց եռաբորբոք սիրոյ և քաջասրտութեան ։ Յիւրաքանչիւր դասուց անձանց, և մանաւանդ յերևելագունից ոչ դանդաղեցան միջնորդել վասն նոցա, զի ՚ի շնորհս նորաձայն պարագայից պատահման մեղկեսցի օրինացն խստութիւն ։ Պէր քան զամենայն կանայք նոր լինին պարծանք գրելով սեռին իւրեանց զերիտասարդուհին, այնքան հընարեցան թախանձանօք և աղերսանօք, մինչև ապրեցուցին զզօրականն տարաբաղդ · և օրիորդն կաթոգին ոչ միայն ստացաւ ուրախութիւն փրկելոյ զնա ՚ի մահուանէ, այլ և յետ սակաւուց ամուսնացեալ ընդ նմա ձոխ պաշտատականաւ ընդ պատկանելոյ աստիճանին իւրոյ, փափագանաց իւրոց եհաս զկատարումն անթերի ։

## Պատմութիւն զԲոսան և Ծերոբոր :

### Ընչաքաղցութիւն :

Մարթ է երբեմն ընչաքաղցութեան զտիրոս խել երիտասարդաց յանհնարին եղեռնութիւնս ածել : Օրինակ մի 'ի նորումս ընծայեցաւ մեզ ոչ կարի հեռաւոր , որ խրատէ իւրաքանչիւրում գիտել զվտանգս և մեծաւ փութով սանձահարել անդստին 'ի սկզբանէ զխլրտմունս անկարգ բաղձանաց :

Ծերանալով ուրումն տիկնոջ և մնալով միայնակ , տաղտկացեալ 'ի հոգւոց և 'ի տառապանաց ընդունայնութեանց կենցաղոյս , խորհեցաւ ամփոփել խաղաղութե- յառանձնութեան իմիք զմնացեալ աւուրս կենաց իւրոց : Մեկուսացեալ 'ի մենաստանի միոջ հաւատաւորաց՝ ուրախ լինէր անցուցանել անդրէն զժամս յաղօթս և 'ի պաշտամս՝ 'ի պատկանաւոր գործս , և յըն- թերց

թերթմունս հոգեւորական գրոց , և զմնացեալ ժամանակն 'ի զբօսանս ընդ օրիորդաց արահանգութեան անդրէն եղելոց , և լինել հաւատաւորացն այնոցիկ խորհրդով և սրդեամբք ձեռնատու և օգնական , որք վերակացուքն էին անդ ։

Իսկ 'ի մէջ նոցա օրիորդ մի՝ որ ուշիմութեամբ հեզահամբոյր բնութեամբ , և անստգիւտ վարուք գերազանցէր քան զամենեսեան ։ Սարա տիկինն 'ի սէր սորա , և կարծելով զինքն հաւասարապէս սիրեցեալ անտի , եդ 'ի մտի յորդորութիւն իւր գրաւել զնա ։ Օրհաւրհանայր ուրեմն յաճախ լինել ընդ նմա , և ուսուցանելով նմա զոր միանգամ վայելէ հանճարեղ և համեստ օրիորդի . այն ածէր նմա իբրև զմայր ։ Ոչ շատացեալ այսու՝ խորհեցաւ առաւել անդր ճապաղել զբարերարութիւն իւր , և քանզի ոչ գոյր ունէր արեանառու մերձաւոր , և դիտակ իսկ էր զսակաւաձեռնութիւն ծնողաց օրիորդին , հաստատեաց 'ի միտս իւր առնել զնա ժառանգ ամենայն ստացուածոց իւրոց ։ Հաստատեալ զայս իւրն դիտաւորութիւն կտակագրաւ , վայելչուհի վարկաւ յայտ առնել նմա զոր

մի

միանգամ արարեալն էր յօգուտ նր̃, առ ՚ի յորդորել զնա առաւել նպաստամատոյց լինել ՚ի գործս իւր, և արդիւնաւորել ըզ յառաջեղ սէրն իւր առ ինքն։ Մ̃ սրտացու-ցանելոյ զնա ևս առաւել. եցոյց նմա ըզ զարդս պատուականագոյն ականց զորս ու-նէր ՚ի փոքրիկ յարկեղ միում։ Զայսոսիկ ասէ, և զայլ ևս ինչս զորս ունիմ, հաս-տատեալ եմ տալ քեզ, եթէ միշտ այսպէս բարեկենցաղ և համբարեղ լինիցիս՝ որպէս ցուցանես, զի մի՛ գուցէ զզջացայց երբեք, և վերստին յետս ընկրկեցից ՚ի քէն։

Բայց կարի հակառակ ելից վճռակե-ցաւ այս իւրն զմտաւածութ̃ի յանխորհրդ-յայտնաւէ անտի, և ինքն եղև նախասկիզբն ամ̃ չարեաց։ Որձակերտութեն և փափագ շքեղազարդ և մեծագին գոհարաց, և վայ-ելչագեղ պաճուճանաց թէ և անդստին ՚ի բնութէ ընդարբոյս է կանանց, բայց յոր-որդն յայն չէր զարթուցեալ տակաւին, և յառաջագոյն խոստմանց անտի հաւ էառ նլոտիլ և բորբոքիլ ՚ի սրտի նր̃ իսկ։ Առաջի աչաց ունէր միշտ զխաբուսիկ պայծառու-թին բոցանշոյլ ճառագայթարձակ գոհա-

քայն, և թուէր նմա առ անձկութեն հա-
զար ամ, մինչև եկեսցէ ժամանակն, յո-
րում կարասցէ պճնիլ նորօք. հարուստ վի-
ճակն՝ որում անկանէր, ազատութին և
հեշտութին, զոր գտանել ունէր նովաւ,
որում և ցանկայր արդէն, ևս առաւել
տաղտկալի և ծանր առնէին նմա զառանձ-
նութին, և զպարկեշտ կենցաղավարութին,
զոր հարկաւորեալ էր վարել անդրէն ը̄ իշ-
խանուք այլոց: Սակաւ առ սակաւ աճեց
'ի նա անհանգստութին սրտի և անժուժ-
կալութին, և ոչ կարելով այլ ևս զսպել
զուժգնութին և զեռանդն ըղձակերտութեց
իւրոց, և կասկածելով միանգամայն զի մի՛
գուցէ փոփոխութին սրտի իւր յայտնեսցի,
և 'ի բաց արասցէ իւրմէ զինչսն՝ յորոց այն-
քան բորբոքիւր և տոչորէր, կուրացեալ 'ի
բանութենէ ընչաքաղց կրից, խորհեցաւ
դժոխային եղեռնուք ապահովացուցանել
զստացուածն այնոցիկ: Իսկ Տիկինն բարեմիտ
ունելով զնա առ իւր գրեթէ զօրն ողջոյն
սոյնպէս ևս ընկերակից իւր արարեալ էր 'ի
ճաշու և յընթրիս: Յերեկոյի միում նեն
գամիտ օրիորդն՝ ոչ գիտեմ զինարդ՝ առեալ

զմահադեղ ինչ խառնեաց զանխլաբար 'ի կերակուրս, և ետ նմա ճաշակել, որում երբէք չէր հնար կասկածելոյ զսոյնգունակ դիւահնար դաւաճանութիւն: Թուէր անօրինին թէ խաւար գիշերին պատրուակել ունէր զխնամն իւր · բայց յետ սակաւուց րոպէից սկսաւ ողորմելի տիկինն տանջել չարաչար յանհնարին կտտանաց մահադեղոյն: Զայն աղաղակի ցաւոց դղրդեցոյց զմենատանն ողջոյն, դոյժ և բօթ աղետին լուր եղև ամենն, շփոթումն և շշուկ ամբոխեաց զամենն, և աճապարեալ կոչեցին իսկոյն զբժիշկն, որ հասեալ բարեբաղդօրէն՝ 'ի ժամու, ծանեաւ զցաւն և փարատեաց:

Իբրև 'ի վեր ել բանն մահադեղին, սարսափեցան առ հասարակ հաւատաւորքն ամ, և օրիորդն նենգաւոր տառապեալ 'ի խղճէ անտի իւրմէ, 'ի խոժոռմանէ դիմաց իւրոց համանգամայն փաստապարտ յանդիմանեցաւ: Ոչ ինչ պատուհաս, և ոչ ինչ տանջանք բաւական համարիւր առ 'ի պատժել զոճիրն սարսափելի: Բայց մեծահոգի տիկինն՝ կամելով այսու ամիւ փրկել զնա, աղաչեաց 'ի կամս իւր առնել ապաստան

նյան

զյանցաւորն, և կոչեալ զնա առ ինքն, մեղմաբար և սիրալիր՝ ասէ ցնա, Տեսանեմ ես զպատճառն, որ այսանակ յեղակարծօրէն փոփոխեաց զքեզ յառաջին արդարամտութենէ քումմէ 'ի յանիրաւութիւն: Ես վրրիպեցայ, որ ոչ ածի զմտաւ 'ի սկզբան անդր, զոր միանգամ ցանկութիւն իրին՝ որ յոյժ սիրահարէ զոք, և ստացուածն նորին ձգի ընդ երկար, ներգործել մարթի 'ի սիրտ երիտասարդական: Զգոհարս զայնոսիկ՝ որք այնքան սրտացուցին զքեզ, ինձ պարտ էր՝ կամ միշտ թաքուցանել 'ի քէն, կամ տալ քեզ միանգամայն, յորժամ կամ եղև ինձ ցուցանել քեզ զայնոսիկ: Բայց յորմէ յայնժամ ոչ զգուշացայ, զարդիս մարթ է ինձ զելս իրացն գտանել, զի գոյ տակաւին ժամանակ: Ոչ կամիմ զի այսուհետև ընդ երկար մաշեսցիս 'ի ցանկութեան այնր, որ այլ ոչ օգտեն ինձ: 'Ի ժամէ աստի յայսմանէ 'ի քեզ ընկենում զայնս, և դու կարես վայելել ըստ հաճոյից քոց: Ջանացից ես որքան հնար է փութով և պատուով մատուցանել զքեզ յաշխարհ, վասն զի արդարև ցանկամ քեզ վիճակ երջանիկ: Զայս և

եթ֊

ւէթ խնդրեմ 'ի քէն զորդիս զի մի խանդաղատա
ցես ընդ սակաւ աւուրս մնացեալ կենաց
իմոց, որք այնքան տենչալիք եղիցին վ՟ իմ,
որքան յօգուտ քո վարել կարացից ։ Օրի-
որդն ողորմելի ամենեւին նկուն եղեալ եւ
անկեալ յերկիր առաջի նո՟, առ այս սիրալի
եւ չնաշխարհիկ գործ մեծահոգիութեան եւ
առատասրտութե՟ ձայն իմն պատասխանի
ոչ կարաց տալ, բայց աղիողորմ եւ յորդա-
հոս արտասուաց ։ Բայց որքան հաճոյ եւ
ը՟ունելի եղեւ նմ՟ առաքինութիւն եզական
անհամեմատ տիկնոջս այսորիկ , այնքան
կամեցաւ արդարութիւնն զի յանցանքն
նենգամիտ օրիորդին մի՛ մնասցէ անպատիժ ։
Անհնարին տանջանքն խղճին որ վ՟ անա-
գորոյն փեսաւն, երկիւղն սարսափելի մի՛
գուցէ 'ի վեր ելցէ բանն, ամօթն՝ շփո-
թումն՝ եւ նախատինքն անձին՝ ընդ գալն
թագստեան յանցանաց 'ի հրապարակ, զար-
հուրումն սարսափելի պատժոց , որոց քաջ
տեսանէր լեալ արժանի , այնքան չարաչար
եւ խիստ տառապեցուցին զնա , մինչ զի ոչ
կարաց տոկալ աղետին , եւ հարեալ 'ի նա
հրաբորբոք իմն ջերման , զկնի աւուրց սա-
կաւուց սպառեաց 'ի կենցաղոյս ։

## Պատմութիւն Յոհան և Երկրորդ։

### Բարերարութիւնն Յաշահնար։

Սու՛ի օգուտ մարդկային սեռի՛ շառաւիղեն երբեմն անձինք՝ որք արժանի են կելոյ ՚ի յաւիտեան. բայց առփատաբաղդութե մերոյ սակաւք են յոյժ, և այնք ևս՝ յորժամ ՚ի լոյս ընծայլին, թուի թէ խանդացեալք ՚ի մահուանէ յառաջագոյն քան զայլս յափշտակին ՚ի մէնջ։ Ոչ բզմ ժամանակք են, յորս սուգ առեալ գաղղիայ աշխարհաց զկորուստ ուրումն ՚ի սոյնպիսի անհամեմատ արանց, որ արդիւնաւորէր զանեզրական աւուրս։ Ամենապայծառ Յովհաննէս արհի եպիսկոպոսն աւքոյ մայրաքաղաքին՝ որ ՚ի գաւառին կոմասկոյնի յուշ առնէր աշխարհի զյիշատակն նախնի հովուապետաց այնոցիկ, որ զայլ ինչ ոչ ճանաչէին բարիս, բաց յառնելոյ այլոց զբարի։ Անապաղաջան և անձանձիր ելով սր՛ ՚ի հոգս տեսչութե իւրոյ, ոչ կորուսանէր զդիպողութի կամ վայրկեան

օգտելոյ , որով և իցէ եղանակաւ , որոց միանգամ յանդիման լինէին ինքեան ։

Մխիթար էր սրտմեցելոց և յենարան լըքելոց ․ իբրև զհայրն նկատէր զկարևորութիս իւրաքանչիւրոց , և 'ի ճոխագոյն հասից՝ զորս ընկալնոյր , ոչ ծախեաց երբէք 'ի պէտս իւր , և ոչ իսկ զտասներրորդ մասն այնոցիկ ․ Մնացեալն ողջոյն բաշխէր կարօտելոց ։ Անհամար մեծագործութիւնք յիշատակին զնորուն առատասրտութէ , մեք զերկուս միայն ընտրեցաք առաջի դնել մտադիւր ընթերցողաց , որոց մինն ցուցնէ որով արդեօք ճարտարամտութ̃բ գիտէր նա թագուցանել և առագաստել զբարերարու̃ս իւր , առ 'ի բառնալ զծանրաբեռնութ̃ին երախտապարտութ̃ե՝ յորոց միանգամ ընկալեալքն էին յինքենէ զօգնու̃թ ․ և միւսն՝ յոր գերաշխարհիկ սրտայնութ̃ի գիտէր խրախուսել զնա եռաբորբոք սէրն իւր ։

Որ միանգամ ծնեալն է 'ի ճոխութե և 'ի պերճութե , և առ փառաբաղձութե̃ն գտանի ստորանկէ̃լ 'ի յետին նուաստութե, յոյժ առաւել արժանի է կարեկցութե ,

վասն

վասն զի առ պատկառանացն՝ նուաղ քան
զայլս համբձակի յայտ առնել զկարօտութիւս
իւր, և խնդրել զօգնութիւն։ Նա ևս չէ
բաւական ունել զառատասրտութի 'ի նը-
պաստամատոյց լինելն նց. գործ իսկ է ճըշ-
մարիտ գթութեն զգուշանալ 'ի բարերա-
րելն՝ այնու եղանակաւ, զի մի՛ բարերա-
րութիւն զամօթի հարցէ զբարերարեալն։
Յորմէ հետէ կարծիքն մարդկան գերամե-
ծար և գեր յարգոյ զփարթամութին հան-
դիսացոյց յաչս աշխարհի, և անարգք և
խոտանք՝ թափուրք և ունայնք յայնմանէ,
տնանկութիւն, որ՝ մինչ յարեալ է յառա-
քինութիւ՝ նախամեծար և նախապատիւ
լինելոց է՝ լեալ է նախատինք և արհամար-
հանք առ ամեն, և յայնմանէ անտի ծա-
գեալ անարգութենէ առաւել խորշին և
զանգիտեն, որք միանգամ առ քաջատոհ-
մութե իւրեանց և առաքինուե առաւել
մեծագոյն իրաւունս ունին պատուասի-
րելոյ։ Այն իրի՝ բազմիցս ընտրեն նղքա
նքթիլ և նուաղիլ մանաւանդ զանխլաբար
'ի խորս թշուառութե, քան յայտնելով
զկարօտութիւս իւրեանց զօգնութի խնդրել։

և

և օգնելն նոց այնու եղանակաւ, որ յան-դիմանեսցէ նոցա, զկարօտութիւն յորում գտանին, յաճախակի անարգութիւն ինչ է մանաւանդ թէ բարերարութիւն: Ինչ և պատկան է ՚ի թիկունս հասանել նոց այնու ձևարիւք, որպ զի մի՛ ցուցցի իսկ գիտել կամ կասկածել՝ թէ պէտս ունին նոքա. և ՚ի վերոյ յիշեալ արք եւպիսկոպոսն էր աշխարհի օրինակ մի գերազանց այնպիսի քաջաձևար բարերարութե անդստին ՚ի սկզբան նստելոյ նոր յաթոռն արք եպիսկոպոսական մայրաքաղաքին ալքոյ։

Իբրև եհաս անդրէն՝ ազդ եղև նմա թէ էին անդ երկու քաջատոհմիկ և ազնուազգի տիկնայք, որք գոլով միայնակք և տնանկք յոյժ՝ առ չքաւորութեն իւրեանց հարկաւորեալք էին կեալ յառանձնութե, և պատկառէին ՚ի հրապարակ ելանել. այլ թէ կարի զգօնամիտք էին և առաքինիք, և համբերութե և երկայնմտութե տանէին զթշուառութիւն իւրեանց: Մորմոքեցաւ յոյժ ՚ի վե՛ր վատաբաղդութե նոց, և գոլով զգուշաւոր և խոհեմամիտ ՚ի բարերարութիւն իւր, խորհեցաւ իսկոյն թէ զիարդ կարէր

ձևա

ձնարիւք իմն 'ի թիկունս հասանել նմա: Նա 'ի ցոյց մեծի յարգանացն զոր ունէր առ նմա, հաւ էառ յառաջ քան զայլոցն յայգործութիւն նմա գնալ, տալով այսու իմանալ նմա, թէ յարգէր և մեծարէր զնա գեր քան զամենեսին: Յետ ողջունելոյ զնա, նստաւ և սկսաւ ակնածութեամբ և մեծարանօք քաղաքավարել ընդ նոսա, և 'ի խօսիլն՝ իբրու պատահարար ետես նկար մի, որ էրն անդրէն, և սկիզբն էառ գովել զնա յոյժ, և ասել՝ թէ յօժարութեամբ մատուցանէր զերկու հազար մարչիլս առ 'ի ստանալ զն. նկարն զայն, զի մինչև ցայն վայր չէր երբեք տեսել զայլ իմն նկար այսքան գերընտիր, և թէ ոչ ակնածէր՝ զուցէ յոյժ սիրելի էր նոցա, համարձակէր աղաչել զնոսա հանիլ վաճառել զայն ինքեան որքանեաւ գնով և իցէ: Պատասխանի ետուն կանայքն թէ յոյժ ուրախ էին; զի 'ի տան իւրեանց գտանէր ինչ, զոր ախորժէր, և թէ առանց ինչ գնոյ՝ կարէ մեծարեալ վարկանէին զինքեանս, եթէ կամէր ընդունել: Մատոյց նոցա արքեպիսկոպոսն բազում շնորհակալութիւնս, և իբրև դարձաւ անտի

'ի

՚ի տուն իւր , համանգամայն առաքեաց զերկու հազար մառչիլն , և խնդրեաց ըզնկարն . և առ ՚ի բառնալ ՚ի նոցանէ զամ զկասկած առաքելոյ զգումարն զայն ՚ի պարգև , այնքան դարձեալ շնորհակալ եղև , մինչև համարիլ նոցա պարգև մեծագոյն արարեալ արք եպիսկոպոսին , տալով նմա զցանկացեալն նկար ։

՚Ի ճնարիմաց առատասրտութենէ յայսմանէ քաջ հօտապետին կազդուրեցան առաքինի կանայք այնոքիկ առանց պատկառելոյ , և գրեթէ առանց խելամուտ լինելոյ , և այրն բարի յանձն էառ մանաւանդ զոտզոտանս սակաւամտութեան առայլս , ( զի արդարև կարի սակաւ արժէր նկարն այն ) քան թողուլ զնոսա ՚ի կարօտութեն , կամ օգնելով նց՝ փրանգել իւրեք զպատիւն նց ։ Բայց այլ իմն գործ առաքինական գերապանծ առնս այսորիկ ես մեծագոյն՝ տեսցուք ՚ի հետևեալ պատմութեան ։

## Պատմութիւն 'Ռուսն և Երրորդ ։

### Հրդեհն ։

Ի գիւղերի միում հուր սաստիկ անկեալ էր 'ի տան աղքատ բնակչաց ոմանց ։ 'Ի սենեկէ միոյ առաջին դստիկոնին , ուր զառաջինն չէին բարեպէս շիջուցեալ և ծածկեալ , արծարծիլ սկսանի հուրն առ մերձակայ փայտս , անտի առ շրջակայ շորացեալ խուրձս , և հասեալ մինչև ցդուռն և այրեալ զայն , 'ի սանդուխսն փայտակերտս տարածի , և ելեալ ընդ այն 'ի վեր հասանի մինչև ցառաստաղն ։

Ողորմելի բնակիչքն յանձնարին ծխոյ անտի և 'ի շաչմանէ բոցոյն ընդոստուցեալք 'ի քնոյ աճապարեն առ սանդուխսն առ 'ի փրկիլ , և 'ի գտանելն զնա հրդեհեալ , ուժգին ճիչս և աղաղակս բառնան յոյժ կոծմանց ։ Զարհուրեալ դրացեաց 'ի ձայնէ դղրդման աղաղակին , յառնեն և արտաքս Էստոնուն , և տեսանեն զասոսկալի տեսիլն ,

սաստ

ստորին դստիկոնն արդէն ողջոյն բոցակէ-զեալ, և յառաստաղէ անտի սենեկաց, հուրն ծաւալեալ 'ի վերին դստիկոնսն, բոցն սարսափելի գեր 'ի վերոյ բարձրացեալ քան զտանիսն. լուսամուտք լցեալք բնակ-չօք, որք 'ի հրոյն աստի և անտի շրջապա-տեալք՝ առանց գտանելոյ տեղի փրկութեան, աղաղակէին յուսահատեալք, և կողկողե-լով զօգնութիւն հայցէին:

Ոչ դանդաղեցին՝ ոմանք աստի և ոմանք անտի՝ կանգնել իսկոյն սանդուխս առաջի լուսամտից, և տալ նոքօք ողորմե-լեացն այնոցիկ զփրկութիւն: Ոմանք առաւել արիասիրտք իջին առաստանաւ, այլք՝ որք էին 'ի ստորին լուսամուտսն, իւրովի 'ի վայր ոստեան, 'ի վախճանի ամենեքեան՝ ոմանք այսպէս՝ ոմանք այնպէս զելս անձին հնարեցին:

Մնային անդրէն միայն մանկունք եր-կու 'ի փոքրիկ սենեկի միոջ՝ 'ի վերնագոյն դստիկոնի: Հայր նոցա բացակայ գոլով յայնժամ ընդ տան իւրոյ, առ վտարաբաղ-դութեան նոցա՝ թողեալ էր զնոսա առանձին: Ոչ զօրելով նոցա անձամբ անձին հնարս

վըր

փրկութեան գտանել, արտասուօք և աղաղակաւ յայլոց հայցէին զօգնութիւն. բայց թէպէտ և ամենայն շրջակայ բազմութիւն մորմոքէր և աղէկտուր լինէր վասն նոցա, բայց ոչ ոք գիտէր զհնարս փրկել զնոսա: Զայլ ելս ոչ ունէր սենեակն, յորում էին մանկունքս այսոքիկ, բայց եթէ 'ի վերնադիտակ մի փայտակերտ, որ և 'ի հուր մաշէր արդէն, և ոչ 'ի սենեակն յայն հնարէր մտանել այլուստ, բայց թէ ընդ լուսամուտն սենեկի միոջ, որ նմա հաղորդէր: Այլ բաց 'ի կարի բարձրութենէ այնր, բոց հրոյն իսկ արդէն ճապաղեալ էր 'ի ներքս, և ակներև թուէր վտանգն հրոյ ճարակ զանձն առնելոյ, որ միանգամ ցանկայր ընդ այն ճանապարհ ելս փրկութեան հայթայթել:

'Ի սմին պահու 'ի վերայ եհաս արքեպիսկոպոսն, և 'ի տեսանելն զողորմելի մանկունսն յայնմ սոսկալի աղետին, առմարմոքմանն և անճարին աղէկիզութեանն զգաղանի հարաւ: Նա տեսեալ թէ տակաւին գոյր հնար փրկութեան նոցա, և ակներև վտանգ ինչ ոչ տեսանիւր՝ եթէ ոք անձապարեալ փութայր թափել զնոսա 'ի

ժանեաց հրոյն, սկսաւ բարձրաձայն առաջի արկանել՝ առ 'ի յորդորել և խրախուսել զոք 'ի գործն՝ հարիւր ոսկի լուիզս։ Իբրև ոչ զոք ետես շարժիլ յառաջարկութենէ աստի, կասկածելով թէ փոխարէն տրիտուրն չէր համեմատ վտանգին, խոստացաւ երկու հարիւր ոսկի լուիզս։ Բայց և ոչ այս կրկին խոստումն շատացաւ զոք 'ի գործն պատրաստել. զի իւրաքանչիւրոք զանձն իւր առաւել սիրէր, քան զամ ըզգանձս աշխարհի, և քան զայլ ամ ինչ։

Տեսեալ քաջ հովուէին թէ ինչ ոչ օգտի 'ի խոստմանց և 'ի քաջալերութեանց իւրոց, ինքն անդր՝ գոչեաց ահագին ձայնիւ, Ո՛ր մի՛ արասցէ զի ա՛քն մեք հեղգացեալք դեգերեսցուք աստանօր տեսանել զանմեղ դաւինս զայնոսիկ հրոյ ճարակ լինել անդրէն, զոր միանգամ այլ ոք ոչ համարձակի առնել, քաջ գիտասցիք համարձակիլ ես ինքնս։ Ոյգ ընդ ասացելոյն ետ յարել զմիսանդուխն 'ի միում, զի մինն ոչ բաւէր, և կանգնեաց առաջի լուսամտի սենեկին յորում գոյր մուտ 'ի սենեակն մանկանց, և արիաբար ելեալ 'ի վեր, և 'ի միջոյ բոցոյն

ան

անցեալ՝ եմուտ առ նմ, որոց զմինն բարձեալ ՚ի վ՟ր ուսոց իւրոց և զմիւսն ՚ի գիրկս առեալ՝ ՚ի հիացումն և յապշումն ամ բազմութ ժողովրդեանն, էջ ՚ի վայր ը՟ նոյն սանդուղսն, և զերկոսին ևս անվնաս ապրեցոյց ՚ի հրոյն տոչորմանէ:

Ով ողորմելեացս աշխարհի, էր վ՟ր սոյնպիսի անձինք կարի սակաւք գտանին, կամ ընդէր ընդ շառաւիղելն բարձեալ լինին համանգամայն ՚ի բարւոյն և յօգտէն հասարակաց:

Պատ

## Պատմութիւն Քառն և Չորբորը ։

### Ընտանութիւնն ։

Էր 'ի փոքրիկ քաղաքի միոջ 'ի Հռոմա-նիայ նահանգին այր ոմն ծեր և փարթամ յոյժ, որ ունէր զդուստր մի միա-ծօր, որ ժառանգելոց էր առանձին և ըն-չիցն զինչս նր ։ Էր սա 'ի հասակի վեշտա-սան ամաց, և քանզի բաց 'ի պերճութէ վիճակին, էր և գեղատեսիլ և զարդարել առաքինութբ և անստգիւտ վարուք, ամին իրի ամ երևելիք քաղաքին կայէին 'ի մէջ իւրեանց 'ի խնդրելն զնա 'ի կնութ ։ Գիտաց հայրն զի յուսացեալ ամենահարուստ ժա-ռանգութն մանաւանդ՝ քան այլ ինչ յորդո-րէր զնոսա առ այս, և ոչ զոք յայնցանէ գտանէր, որ 'ի ձեռն բարի վարուց և ա-ռաքինութեանց հաճոյ լինէր ինքեան, էր միումն յազնուական և քաջ տոհմէ, և տը-նանկացեալ վնասու հարց իւրոց յառաջին

 ծն

ճոխութենէ անտի, որ ըղձայր հարսանեօք
այսու յաւելել վերստին․ բայց ՚ի քաջա-
տոհմութենէ անտի իւրմէ չէր այլ ինչ ուսեալ
բաց ՚ի սնոտի ինքն յաւակնութենէ, և յա-
ւելորդութենէ և իցէ պարապման, իբրու թէ
դատարկանձնութիւն պարծանք մեծագոյն և
փառք ազնուազարմութեան իցէ ։ Նաև նմա
զամս յոլովս անցուցեալ էր ՚ի համալսարանի
յուսումն մանկացուեց, բայց բացակայ և
հեռի եղեալ յաչաց ծնողաց, և տապականեալ
՚ի չարախառնուար ընկերակցաց, յոյժ առա-
ւել յառաջադիմութիւն արարեալ էր ՚ի
շռայլութիւն և ՚ի զեղխութիւն, քան ՚ի
գիտութիւն յոր գիտեալն էր ։ Որինն յե-
մարեալ ՚ի խաղս, ոչ միայն զօրն ողջոյն,
այլ և զմեծ մասն գիշերին ծախէր ՚ի նոսա,
մինչ զմայլեալ զիւրեան, զմեծ մասնն
աւուր ՚ի խենեշ պճնութիւնս անձին ան-
ցուցանէր, և լեալ առաջինն զհետ գնալ
նմ նորաձև շամբշական պաճուճանաց,
պչրանօք կանացի բեկբեկմամբ և շեղտա-
մեղտութեամբ անձկայր ստանալ զսիրտս նմ
խենեշից, որոց նմանէր ։ Ոչ յոյժ երկե-
ցուցանէր զինքենէ մի բերմանց բնութե

 իւ

իւրոյ լինել վայրենաբարոյ և բարկասիրտ, այլ ամ՟ն տաղտկալի ընծայեցուցանէր զնոքն անհանդուրժելի իմն ապշութ՟բ և տխմարութ՟բ : Զգօնամիտ Հայրն յամենեսին ՚ի նս՟ գտանէր ստգտանս, որք ոչ երբէք յարմարէին բաղձանացն, զոր ունէր՝ գտանելոյ վ՟ն միամօր դստեր իւրոյ զերջանկութ՟ի իմն կատարեալ և հաստատուն :

Կոչեալ զնա ուրեմն յաւուր միում առանձին՝ ասէ ցնա. քաջ գիտես դուստր իմ զի մի միայն մխիթարութ՟ի ծերութ՟ե իմոյ դու ես, և գիտես իսկ թէ զիարդ կաթոգնեալ սրտիւ սիրեմ զքեզ : Բայց արդէն գալոյ մերձենայ ժամանակն, յորում պարտ է քեզ ընտրել զոմն կենակից քեզ, և յորում պարտ է ինձ հանդուրժել տեսանել զքեզ՝ բաժանեալ յինէն, մտանել յայլ իմն տուն յոյժ զանազան աստի, և առնել մասն այլոյ իրիք գերդաստանի : Ի սոյնգունակ ծանրակշիռ գործ, յորմէ կախի բարի կամ չար ելքն կենաց քոց, քաւ և մի՛ լիցի ինձ նմանիլ անգութ ծնողաց այնոցիկ, որք համարձակին բռնաբարել զսիրտս որդւոց իւրեանց : Ընտրու-

թին

թին տուն՝ որ լծակից լինելոց է քեզ մինչև ցվախճան աւուրց քոց, 'ի քէն է: Բայց՝ որովհետև քաջ խելամուտ ես, թէ որոց զգուշութե̃ պէտք են այսմ ընտրութե̃, զայս միայն Ը̃ սիրոյ իմոյ՝ զոր ունիմս առ քեզ խնդրեմ փոխարէն, զի դու հաւանեսցիս, զի բազմամեայ փորձառութ̃ին իմ զթերութ̃ին այն̃ր ցուցէ, զոր մատաղատունկ հասակն քոյ տակաւին ոչ զօրէ ընձեռնել քեզ, և զի լուսաւորութիւն քեզ եղիցին խնդք իմ: Փոյթն՝ զոր ես առի ըզքէն, երկարութ̃ին՝ յորում կեցեր՝ յընկերակցութեացն, և 'ի զբաղմանց աշխարհի, տայ ինձ հաւատալ՝ թէ սիրտ քո չէ տակաւին յոք դրաւեալ: Այլ նախ քան զա̃մ ցանկամ գիտել 'ի քէն, և դու պարտիս խոստովան լինել ինձ զա̃մ առանց խտրելոյ. զի ոչ թէ կամիմ ես հակառակիլ յօժարութե̃ց քոց, եթէ վ̃ս ուրուք ծնեալ են 'ի քեզ, այլ կառավարել և եթ զայնոսիկ:

Երբև հաստատեաց դուստրն թէ սիրտն իւր դեռ ևս ազատ էր յա̃մ ըղձաձըկտութե̃ց, և երբէք ոչ վարժէր արտաքս Ը̃ սահման խրատու հօրն իւրոյ, այսպէս

յա

յաւել առել վերստին ։ Պարտ է քեզ ու-
րեմն գիտել, զի բազումք են որք փափագին
առնուլ զքեզ 'ի կնութիւն, բայց ոչ զոք
՚յայնքանեաց՝ որք խնդրեցին լինել զքեզ,
գիտացի սիրել, կամ վարկանիլ օգտակարա-
գոյն և յարմարագոյն քեզ լինել ։ Խրատքն՝
զորս ետու քեզ, թուի ինձ՝ թէ ոչ յոր-
դորեսցեն զքեզ անձկալ ումեք ազնուա-
գունի, և պերճագունի քան զքեզ ։ Պա-
լով քոյ սուսկական և առանձնակ քաղա-
քացի, 'ի ձեռն հարստութեց զորս հան-
դերձեալ է իմ թողուլ քեզ, ոչ երբէք
կարասցես մեծ առնել զազգատոհմն քոյ ։
և մինչ ը̄ ումեք քաջատոհմի զուգակցիլ
քեզ դիպեսցի, զայս և եթ շահեսցիս
անտի, զի ոչ կարասցես այնուհետև ըստ
հաճոյից քոց ը̄ հաւասարս քոյ քաղաքավա-
րել, վ̄ն զի ոչ հաճեսցի այրն քոյ, ոչ ընդ
ազնուականազգի տիկնայս, զի կամ մերժեսցեն
զքեզ յընկերակցութենէ իւրեանց, կամ
ընկալցին տհաճութ̄բ և արհամարհանօք ։
Նաև և պատշաճ է խնդրել զհաւասարութ̄ի
վիճակի 'ի մէջ առն և կնոջ, կամ գոնեայ
զմերձաւորութ̄ի ո̄չ հասակին, նոյնպէս և

վիճակին, զի երջանիկ կեանս վարեսցեն։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և 'ի վեր քան զամ̃ հարկ է քննել զբարս և զգնացս անձին, ը̃ որում պարաւանդելոց ես անլուծանելի կապանօք, և որում հաւատալոց ես մինչև իսպառ զսահման անձինդ և զքեզ։ Նարտախաղացն՝ խառնագնացն՝ վայրենաբարոյն՝ չարամտին՝ խորամանկն՝ ագահն, կամ դատարկասունն՝ իգացեալն՝ պղերգն՝ շրջմոլիկն՝ յիմարն՝ շուայտն, սոքա առիքն տան քեզ վարել զաւուրս քո 'ի ցաւս և 'ի հեծութիւն։ Որդ՝ 'ի մէջ այսքանեաց զորս ճանաչեմ ես աստանօր և որք ցանկալ մարթին հարսանեաց քոց, զմինն իսկ ոչ տեսանեմ ոչ վարակեալ ախտիւք 'ի մոլութեանցս յայսցանէ։ Ունկն մատո ուրեմն այսմ զմտաւածութեան իմոյ։ Թուի ինձ՝ թէ յաջողագոյն լինի մեզ փոխադրիլ յայլ իմն քաղաք մեծագոյն քան զայս։ Անդանօր 'ի մեծագոյն իմն բազմութեան, դիւրագոյն եղիցի ընտրութին քոյ, և խնամօքն ամե ա̃ծ դիւրեաւ յայտնեսցէ քեզ զոր միանգամ զոհարճալէ և քաղցր առնելոց է քեզ զկենցաղդ քոյ։ Եւ թէ յաջողութիւն այ

ևս

Եւ դիպեսցի քեզ լինել առաքինազարդի ումեք 'ի վատաբաղդութեան անիրաւաբար հալածելոյ, որքան դուստր իմ նազելի արգահատեալ և ուրախ լինէի: Զարդիս ոչ պարտ է քեզ հոգալ զբազում կամ զսակաւ հարստութիւն առն քոյ. ճոխագոյն հարստութիւնք իմ, զորս ես ինձ ած, և զորս 'ի մտոյ ունիմ թողուլ քեզ, յոյժ բաւականք են, զի դու՝ ըստ որում քաղաքացի, և այր քո՝ ո՞րք և իցէ կարասջիք նոքօք ըն-հանգիստ և ուրախ վարել զկեանս:

Յորտասուս լուծեալ դստերն 'ի գորովալից բանից սորա, ասէ. եթէ յոյժ պարտաւոր եմ քեզ՝ ով հայր իմ՝ վն կենացս որ 'ի քէնն է, և առաւել պարտաւոր եմ վասն սիրոյդ որ առ իս, և վն խնամոցդ որովսկար և անփորձ հասակին իմոյ մինչև ցարդ հանդուրժեցեր: Յո՞ ում հաւատալ զիս մարթ է ինձ առաւել քան զքեզ: Զիս ողջոյն՝ հայր իմ՝ յանձնեմ խնամոց և սիրոյ քոյ. և եթէ հաճեսցի իսկ բարձրեալն, զի ինչ քոյ տխուր եղիցին առաքինութեան ուրուք նեղելոյ, այլ զինչ մայր ինձ ցանկալ յայնժամ, բայց եթէ

զոհ

զոչ երբէք սորջանալն նր̃ , որ զայնս ըս-
տանայր , և զիս իսկ է̃ այնս շահիլ ։ Բայց
ես այնքան առաւել յուսամ , եթէ ոչ
զղջասցի նա , մի̃ զի դիւրագոյն լինելով
այսու եղանակաւ համ և հաւան առնել
զնա գալ և կալ ընդ քեզ և որդիանալ քեզ ,
յայնժամ ես ոչ երբէք զատչէի 'ի քաղցր
կենցաղավարութէ և 'ի բարի խրատուց քոց ։

'Ի լսելն հօրն զիմաստալից բանս դըս-
տերն , լի եղև ցնծութբ̃ , և խանդաղատեալ
զնովաւ զիրկս առեալ համբուրեաց զնա ,
և ասէ . Տր̃ պահեսցէ 'ի քեզ դուստր իմ
միշտ անխռով զայս առաքինութի և կորո-
վախոհութիւն քո , որ զարդիս ուրախ
արարեր զիս , և յա̃մ ժամ երջանկացու-
ցես զիս հայր քո ։ Ապա լի ուրախութբ̃
կազմեալ պատրաստեալ զա̃մ , հաստատեաց
զերեսս եղանել գնալ ընդ նմա 'ի հռովմ ։
Ջանացանդր՝ փոյթ 'ի մէջ եառ որոնել
և հետազօտել թէ զո՞ արդեօք ընտրել մար-
թէր այր պատկանաւոր դստերն իւրոյ ։
Յետ երկար և զգուշագոյն հետախու-
զութեց , ասէ ցնա յաւուր միում , թուէր
ինձ գտեալ արդէն զոր մանգամ մարթացի

եր

երջանիկ առնել զքեզ: Որդին օրէնսդէտ առն միոյ՝ յոյժ հաշակաւոր ոչ նուազ վս̃ քաջութե̃ն, քան վս̃ անստգիւտ վարուց և հանճարեղութե̃ն իւրոյ, որ և հրահանգելով յարուեստի հօրն՝ ջանիւք և ուշիմութ̃ իւրով խոստանայր հաւասար հօրն լինել, ցանկայ առնուլ զքեզ ՚ի կնութիւն իւր: Մնայ միայն զի հաճեսցիս դու. և ես գտից զճարն զի կարասցես դու տեսանել զնա, և խօսելով ընդ նմա, ոչ միայն զարտաքին ձիրս անձին, այլ և զներքինսն ողջոյն քննել կարասցես: Բայց շնորհ իմն մեծագոյն խնդրելոց եմ ՚ի քէն դուստր իմ, զոր վստահեմ ընկալնուլ ՚ի քոյդ առատաձեռութե̃ է: Նպաքէն ասացի քեզ թէ քո լինելոց են ամ̃ ինչք իմ, և իրաւի չիք ոք յաշխարհի, որում զմտաւածել է իմ թողուլ ժառանաւանդ՝ քան քեզ: Սակայն պատճառաւն ինչ հանդիպեալ ինձ յայսմ առաւօտու՝ յորդորէ զիս, զի զնի մասն տաց այլում: Լինելով իմ առ լումայափոխ ումն բարեկամ իմ, տեսի զերիտասարդ մի ՚ի հասակի գոգցես ամաց քսանից՝ գեղանի և շնորհալի ՚ի բանս և ՚ի շարժմունս, որ մինչ յան-

կոյս զսիրտ իմ, զորմէ և հարցի ցբարեկամն իմ եթէ իւրն որդի էր։ Պատասխանեաց թէ ոչ, այլ թէ էր որդի ուրումն, զոր ծանուցեալ է իմ յայլում Նոճագի աստ՝ ի Հռովմ. որ և էր քաջահամբաւ վաճառականն ումն, բայց առ ազգի ազգի աղէտալից դիպուածոց կորոյս զամ զինչս իւր, և՝ ի ցաւս և՝ ի նեղութիս վճարեաց զաւուրս իւր։ Ալթող նա կրկնեաց անդրէն բարեկամն զկին իւր հանդերձ որդւովս այսոքիկ, և ես առի զսա առ ընթեր իմ՝ ի պէտս գրչութ, զի ունիցի որով ապրեսցի ինքն և մայր իւր։ Որդեակն ծախէ զամ՝ ի պէտս մօրն իւրոյ, և քանզի ոչ երբէք հեռացոյն՝ զպուշագոյն՝ և խոհեմագոյն զոք զսի քան զսա, վասն ոչ բզմ ժամանակք են. յորմէ հետէ յաւելլի զհաստատակ վարձն իւր։ Բայց դերընտիր բարք և առաքինութիք նր արդարև արժանի են լաւագոյն բաղդի։ ՚Ի լէլն իմ զայս առ զամօթի հորս վն բնաւին ոչ յիշելցս զնալ զամ մի յայցելութեան մօր նր, զոր յառաջագոյն քաջ ճանաչէի, և գիտէի իսկ զպատուհական ձիրս նորա՝ զխմաստախորհութիւն և զհամեստութիւն,

և

և ոչ կամեցայ դանդաղել ընդ երկար 'ի կատարել զայս պարտաւորութիւն ։ Գտի զնա միայն ՚ի միայն , և տրտմեալ նմա ծանօթս , օկսայ տալ զրուցաբանել զանցեալ վշտագին դիպուածոց իւրոց , զոր 'ի լսելն գալարէին աղիք իմ , և մորմոքէի 'ի վերայ քաջամբերութեն նր , որով տանէր աղետից իւրոց , և 'ի վր երախտագիտութեն որով օրհնէր զած , որ բառնալով յինքենէ զայրն և զինչս ամ , թողեալ էր ամենասիրելի և գերարժան որդի մի փոխարէն ամ չարեաց իւրոց ։ Արդ՝ քաջ խելամուտ եմ , զի թէ այնգունակ աղետից վտարաբաղդութե վիճակեալ էր մեր , յոյժ ախորժէիր դուստր իմ , եթէ ոք ձեռնտու և նպաստամատոյց լինէր մեզ . և առանց զայս իսկ զմտաւածելոյ , ունիմ զյոյս հաստատուն՝ զի սիրտ քո եւս գորովալիր ոչ կամեսցի զի անձինք երկու այնքան առաքինիք մնասցեն լքեալ և բարձի թողի եղեալ ։ Խորհիմ ես ուրեմն զմասն ինչ իմոց ծախել 'ի նպաստ նց ։ Քեզ՝ այսու ամի մնացելքն շատասցին . և եթէ հաճոյ թուեսցի քեզ գրաւիլ յերիտասարդն յայն , զոր ասացի

քեզ, գոլով նո՛ր կարի ընչեղ, մեծագոյն հարստութեանց չեն քեզ պէտք ։

Գալարեալ դստեր մատամբ իւիք ՚ի բանից աստի, և մատամբ խուն ինչ խառ֊վեալ ՚ի միտս իւր, պատասխանեաց՝ տնտեսութ՟ ընչից և գոյից քոց ՚ի կամս քո է ապաստան․ և իրաւի ես ոչ գիտեմ զայլ առիթ յար֊մարագոյն, յոր մարթ իցէ քեզ զայնս տնօրինել ։ Բայց ցաւիմ ես յոյժ, զի թէ այնքան առաքինի է երիտասարդն այն՝ զ որում վկայես, ոչ նմա մանաւանդ՝ քան այլոց, զամ զինչս քո և զիս ինքնին վիճա֊կեցուցանես ։ Նա՛ թուէր ինձ թէ սոյն֊գունակ էր երբեմն դիտաւորութի՟ քոյ ։ Բայց թերևս զարդիս կարի տարադէպ իմն վարկանիս լինել պարգևն ընչիցդ զոր նմա առնել ախորժես, եթէ զիս ևս զոյգ ընդ նմին ստանալ ունիցի ։

Ով գերապանծ և չնաշխարհիկ դուստր իմ՝ ասէ հայրն․ որքան գոհութի՟ և փառս մատուցանելոց եմ բարձրելոյն վ՟ն զքեզ ինձ շնորհելոյ, և զարդարելոյ զոգի քո այսքան անզուգական առաքի֊նութեամբ ։ Նա զի փոխանակ դժպատեհ

վար

վարկանելոյ նմա զհարսանիս քոյ ընդ նմա, դու ես մեծագոյն և պայծառ պարգևն, զոր մարթ է ինձ առնել զերահռչակ և զերընտիր երիտասարդի ումեք ։ Բայց զիա՞րդ հնա՞ր է ինձ խօսիլ զքեզ միում՝ առանց ընտրութեան քոյ, որ ամենևին թափուր և ունայն է ։ Տեսցես դու ուրեմն զմինն և զմիւսն, և յերկոցունց անտի ընտրեսցես՝ զոր միանգամ լինելոց է այր քոյ ։ Թէպէտ և երկրորդս այս չէ տակաւին տեսեալ զքեզ, սակայն ոչ երկուճանամ զի թէ վկայեսցիս նմա, քաջաբախտ գեր քան զամենեսեան եղիցի ։ Այլ զի մի՛ երբէք զղջասցիս դու յընտրութեդ, կամիմ՝ զի միւսն ևս տեսցես, որ եթէ նա խաղաս գտանիցի առ քեզ, հաւասարապէս ուրախ եղէց ընդ լինելն քոյ նմա ։

Կատարեաց կորովամիտ հայրն զխնդրս իւր, և պատշաճագոյն պայմանաւ յանդիման արար դստերն զմինն և զմիւսն, զի տեսանելով և քաղաքավարելով ընդ նոսա ծանիցէ զբարս նոցա ։ Բայց՝ թէ և ՚ի բազում գլխոց արժանաւոր եգիտ զառաջինն, բարեսնութին և առաքինութիւն

երկ

երկրորդին նախամեծար հանդիսացաւ. և
ուրախութեամբ մեծաւ երկոցունց
կողմանց իսկ հարսանիքն կատա-
րեցան որոց գունակ բերկ-
րալիր և յարաշօհարծ
երբէք ոչ տեսաւ:

## Պատմութիւն Ռոսն և հինգ եղբարց:

### Առն Հայրենեաց:

Յոյժ գեր 'ի վերոյ հռչակեալ և մե֊
ծացուցեալ տեսանեմք առ նախնի
պատմագիրս զոմանս, որք ինքնայօժար
դիմագրաւ եղեն մահու վն̅ հայրենեաց,
ըստ որում կոդրոս առ յոյնս, և մարկոս
կուրտիոս, և երկու դեկոսքն առ հռովմայ
եցիս: Ապաքէն չէր գործ առաւել մեծա֊
փառ և առաւել գովելի, քան գրաւել ա֊
րիաբար զանձն 'ի մահ վն̅ փրկութն̅ ազգաց:
Բայց յունայն իմն սնապաշտութենէ, և
'ի կուրացեալ մոլորութե̅ վարեցան նախ֊
նիք այնոքիկ, թուելով մարկոս կորդիոսի
թէ արկանելով զանձն իւր 'ի վիհն անել
բացեալ 'ի հրապարակին հռովմայ՝ զիջու֊
ցանէր զցասումն դիցն, և ապրեցուցա֊
նէր զհռովմ 'ի սպառնացեալ աւերմանէ.
և կոդրոս և դեկոսք վարկանելով՝ թէ

անձ

անձնամատն լինելով թշնամեաց ապաքէն,
և կտտամահ լինելով 'ի նոցանէ, յաջողել
ունէին զյաղթանակն համաշխարհկաց իւ-
րեանց. մինչ զի դիտումն նց̄ գովելի եղև
մանաւանդ, քան գործն ըս̄ ինքեան: Այլ
մաս իմն ոչ նուազ փառաւոր վն̄ քաջա-
րութեան, և յոյժ առաւել օգտակար
վն̄ որդեանց, եղև այն, որում 'ի սկզբան
անցեալ դարուն ինքնայօրդոր դիմագրաւ
եղև այր ոմն հայիմ ծանուցեալ 'ի մէնջ`
յերկրէն անդրոնոյ` պետրոս միկկայ ան-
ուանեալ որ համբաւով և փառօք գերա-
զանցել մարթ իւր ապաքէն քան զնախնիս
զայնոսիկ, եթէ նոցին գունակ չերևելի
վիպասանս գտանէր, որք փոյթ յանձին
ունէին մեծացուցանել զնա:

Յամին 1706 զօրու ծանու պաշարել
էր քաղաքն Տուրին 'ի գաղղիացւոց, և
թէպէտ պաշարեալքն անդրդուելի հաս-
տատութբ̄, և արիական քաջութբ̄ պաշտ-
պանէին զքաղաքն յարձակմանց նոցա,
մերթ ապախտ առնելով` կամ շփոթելով
զգունդս թշնամեաց, և մերթ վտանգե-
լով յաճախակի արձակմամբ հրացանից 'ի

պարս

պարսպաց անտի, և ոտէպ և յանպատ-
րաստից արտաքս ընդոստումամբ հորդան տալով
հարուածս սաստիկս հասուցանէին նոցա,
այսու ամենիւ՝ յետ եռամսեայ յամառեալ
պաշարման, այնքան յառաջացեալ էին
թշնամիք, մինչ զի գրեթէ տիրէին արդէն
բզիւ արտաքին ամրոցաց. և մի միայն վե-
րանձայր, որոյ առեալ՝ և հարեալ քաղա-
քին ՚ի մերձուստ ՚ի զինուց նոցա, ոչ ևս
կարէր զդէմ ունիլ։

Տեսեալ քաղաքապետին՝ որ էր կոմսն
դաւնոյ, թէ թշնամիք պատրաստէին յար-
ձակել ուժգին ՚ի վերայ յետին ամրոցիս այ-
սորիկ ևս, և արդէն հանդերձեալ կազմեալ
էին ընդ դէմ այնր զահագին թնդանօթս
իւրեանց, հրամայեաց ականահատից իւրոց
ական հատանելով գնալ անդր, և յանկարծ
պայթուցմամբ ցնդել յօդս զամ մեքենայս
և զզօրութիւնս նոցա։ Պետրոս միկկիայ էր
գլուխ այսոցիկ, որ փոյթեռանդն և ան-
խոնջ աշխատանօք յաջողեցաւ անդր ան-
ցանել, ուրանօր կազմեալ և կատարեալ
զական՝ իբրև այլ ինչ ոչ պակասէր բաց ՚ի
յարկանելոյ զսովորական հետն վառօդին,

O
և

և ել̃լ արտաքս անտի հրձիգ առնել, ահա ՚ի թնդմանէ երկրին ՚ի վերուստ, և ՚ի դղրդմանէ դիտաց զի թշնամիք գուն գործէին փլուզանել զականն, և ապախտ առնել զգործն իւր ։ Թշնամիք արդէն մերձ էին ՚ի կատարումն խնդրոյ իւրեանց, և թէ դանդաղէր վայրիկ մի ևս, ամ̃ ճնարք և ջանիւք իւր ՚ի դերև ելանէին ։ Այլ զի՞նչ ուրեմն առնել ունէր, իբրև հազիւ հազ գտանէր պարապ ելանելոյ անտի արտաքս և փրկելոյ զանձն ՚ի ձեռաց նց̃, թողթէ առնել զկարևոր շաւիղն փառօքն, առ ՚ի նուաւ յօդս ցնդեցուցանել ՚ի հեռուստ զականն ։ Այլ իմն միջոց ոչ վերաձնայր գործոյն կատարման, բայց թէ ընդ ձեռն իւր հուր արկանել յականն, և մատնել զանձն ՚ի վտանգ ակներև, և անձողոպրելի մահուան ։ Բորբոքեալ պետրոսի յեռանդ նոտ իմն սիրոյ առ հայրենիս, և առ թագաւորն իւր, զայսմ միջոցէ տիրպէս բուռն հարկանէ, և նախքան զթողուլն թշնամեաց յամբոխ գործոյն իւրեանց հասանել ունայնացուցանելոյ զականն իւր, յոր և եթ յուսացեալ էր քաղաքն նեղեալ, դնէ

՚ի

՚ի մտի մեռանիլ ընդ նմ։ Հրամայէ իսկոյն ընկերակցաց իւրոց ելանել մեկնիլ անտի։ Յիշեցէք՝ ասէ ցնոսա կողկողագին՝ յանձն առնել հայրական գթութեան թագաւորին զմատաղատունկ և զնորաբողբոջ զորդիս իմ, զի յենարան և հայր եղիցի նոցա, եւ մտադիւր և խնդամիտ մեռանիմ վն նորա։ Ապա քաջասրտութեամբ մեծաւ մերձի ՚ի ղօղէլ մթերս հրանիւթ փոշեց, և բռնա֊ նաւն՝ զոր ՚ի ձեռին ունէր հուր արկանէ ՚ի նմ համարձակ։ ՚Ի քթթել ական պայթի ականն, և անձնարին ուժգնութբ պատառէ զերկիրն, և վեր ՚ի վայր շրջէ զնմ զմեքե֊ նայս թշնամեաց, յորոց բազումք մեռա֊ նին, և ինքն կենդանւոյն թաղի ընդ նմ ՚ի փլատակս։

Այս գործ այնքան շփոթեաց, ըդ յարձակմունս թշնամեաց, և այնքան խոչ ընդոտն եղեալ յապաղեցոյց զգործն պա֊ տերազմի նոցա, մինչ զի քաջ իշխանն եւ֊ գինէոս զօր մեծ գումարեալ ՚ի վերայ եհաս յօգնութիւն քաղաքին, և յիշատակաց արժանի քաջութեամբ ՚ի պարտութիւն մատնեալ զնոսա, և կանգնեալ նշան յաղ֊

թու֊

թուլթեան , հարկադրեաց արձակել զպա-
շարումն , և 'ի փախուստ աճապարել ։
Բայց Տուրին քաղաքն՝ ը̅ մեծի
մասին զազատութիւնն իւր
պետրոսի գրեաց ։

## Պատմութիւն Բնական և վէյ Երկրաւոր ։

### Գնէշերայէն Երևմանց ։

Եր զի յամ ուրեք հին տունք անբնակք և առաւելապէս հին աւանք համարէին այսաբնակք, և բզի՞ ինչ ինչ պատմէին զերևելոյ նոցա, և զարհօրանաց կամ արկածից, որովք վտանգէին, զոր միանգամ համարձակէր բնակել 'ի նմ ։ Տակաւ տակաւ եկն 'ի յայտ զանխուլ իրին, զի սոյնպիսի երևոյթք և արհաւիրք` կամ ցնորք իմն էին ամբոխեալ երևակայութ, կամ ներգործութիք բնական աւթից ոչ ծանուցելոց յառաջագոյն, կամ տիրապէս գործ չարաբարոյից, որք զայս եղանակ վարէին առ 'ի փարատ կացուցանել անտի, ուրանոր ղօղեալ թագուցանէին զեղեռնութիւս իւրեանց, զայնոսիկ` որոց մարթ էր աղարտել զծածուկս գաղտնեացն ։

Զարդիս չիք մտացի, որ հաւատա ինչ

սոյն

տոյնգունակ արհօրանաց ընծայեցաւ • բայց չէ բարձեալ տակաւին բոլորովին վաղեմի մոլար կարծիքն 'ի ժողովրդենէ, և զայն- պիսի դիպուածոց մերթ յաւուրս մեր իսկ լինին պատմութիւնք : Այլ խոհեմ՝ 'ի հանդիպիլ այսց, անփոյթ եղեալ ծաղր առնէ միայն : Ոմանք 'ի ցոյցս քաջասր- տութեան իւրեանց, յանդգնին իսկ դիմա- գրաւ լինել վտանգին, զոր ոչ ինչ համարին : Այց օրինակն դքսին վիլլէրսայ զգուշա- ցուցանել ունի զմ̃ որք յելանելոյ ընդ- առաջ, նախ քան զառնելն զմ̃ կարևոր պատրաստութիւն և զպահովութիւն, առ 'ի պաշտպանել զանձն յարկածից չարեաց, որք 'ի բնական պատճառաց, կամ 'ի չարութե̃ անձանց անդրէն զօղելոց դիւրեաւ պա- տահիլ մարթին :

Մինչդեռ յերիտասարդութե̃ն տիս էր սա, առաքեալ 'ի Թագաւորէ իւրմէ վս̃ կարևոր գործոց 'ի գերմանիայ, 'ի դառնալ անդրէն եհաս յաւուր միում 'ի գեօղ մի չնչին, ուր բաց 'ի սակաւուց խառնակերտ փանաքի հիւղից երկրագործաց այլ տեղի ոչ գոյր իջևան առնելոյ, և խաւար դի-

չէրին էր արդէն 'ի վ̅ր հասեալ, և տեղայր յորդ անձրև ։ Բայց հին ամրոց մի մերձ տեսանիւր, յորում թուէր նմա մարթ իւ անդորր գիշերել, սմին՝ իրի եհարց ցգիւղականս ո՛ւր արդեօք էր անդրէն, և թէ հնար էր գտանել անդրէն իջևան ։ Պարզամիտ գիւղականքն պատասխանի ետուն՝ թէ ոչ ոք վստահանայր իջևանել 'ի նմա, զի 'ի զարհուրելի դղրդմանց՝ որք լսէին 'ի մէջ գիշերի, և յերևութից որք երևէին, ամէքն ահաբեկեալ էին ։ Ծաղր արար երիտասարդն վիլլէս զպարզամտութի̅ նոցա։ Ուրախ եղէց յոյժ՝ ասէ ցնոսա, ես իսկ տեսանել զերևոյթս զայսոսիկ, և լսել զայս ահարկու դղրդիւնս ։ Հրամայեալ ապա իւրայնոցն Խաւ անդրէն 'ի գեղջն, առ 'ի բարուոք տալ գիտել՝ թէ որքան անփոյթ առնէր զայնդունակ ցնորս, կալաւ զզէնս իւր ․ և տուեալ ածել զգինի, և լուցանել զխարոյկ առ 'ի չեռնուլ և կազդուրիլ, միայն ը̅ միայն ել և գնաց յամրոցն։

Իբրև էանց հասարակած գիշերոյն, և ահա սկսան լսել 'ի հեռուստ խառնաձայն շշունջք գոչման և աղաղակի, և ան-

հնա

ճարին շաչիւն՝ շղթայից ։ Վիլէրն՝ ամե-
նեքին անխռով, բուռն հարկանէ զգլխուց,
և կայ ՚ի պատրաստի ։ Շուկն գոչմանց
և աղաղակաց, և շառաչիւն շղթայից ևս
քան զևս սաստկանայ և մերձի ։ Վիլէրս
անդրդուելի հաստատութբ, և քաջասըր-
տութբ սպասէ ելիցն կատարածի, և ահա
որոտմամբ իմն՝ որպէս թէ ամրոցն ողջոյն
յերկիր տապալէր, զդրունս բանալ տե-
սանէ, և մտանել ցուցանքաւոր երևոյթ-
մի սոսկալիթխար և անճոռնի զգեցեալ
սպիտակ և հետևեալ ՚ի չորից նեսարաց,
որք ունէին զլապտեր մահու ՚ի ձեռս իւ-
րեանց ։ Զկայ առնել երևութին, և դար
ձել առ Վիլէրս՝ զարհուրելի և անդնդային
ձայնիւ սաստէ՝ ասելով, յանդուգն մահ-
կանացու՝ դու որ համարձակեցար մտանել
՚ի սոսկալի տեղիս յայսոսիկ, փարատեաց
աստի իսկոյն և զանձն քո ապրեցո, ապա
թէ ոչ սարսափեաց վն կենաց քո ։ Ես
սարսափիլ՝ պատասխանէ քաջ երիտասարդն,
արդ տեսցես դու անօրէն՝ եթէ գիտէ
սարսափիլ Վիլէրս ։ Զայս ասացեալ՝ յար-
ձակի ուժգնութբ ՚ի վր նորա, երևոյթն

ահա

ածապարհաւ դիւախուսուտ առնու • վիլլէրն
զՀետ պնդէ • բայց այն ինչ անցանէ զեր-
կու սեննեակս, ահա խորասոյզ լինի գե-
տինն, և անհետ լինի երևոյթն, և ինքն
գտանի միայն է միայն յանծանօթ վայրի՝
՚ի խորս լռութե̄, և ՚ի սոսկալի մթութե̄:
Դիւրագոյնէ մակաբերել՝ թէ ո՛ւք եղեն
զարհուրանք, և տագնապ վիլլէրսի յայնմ
քատոմբելի պահու: Նա բարեբաղդութե̄ն
չէր կրեալ զնաս ինչ յանկմանէ անտի ՚ի
գուբն, բայց յայտնի տեսանէր՝ զի ոչ-
գոյր յայս ելանելոյ և փրկութե̄ ՚ի վերա-
պէ յայնմանէ:

Յետ է երկար ծփելոյ ՚ի վարանման
ազգի մտայուզութեց, տեսանէ ՚ի վախճանի
զնշոյլ իմն լուսոյ ՚ի ձախ կուսէ ՚ի ձեղ-
տանծոյ վերնատրան միոջ, որ իջուցանէ
՚ի գետնատունն մերձ, և լսէ զշշնջիւն
ինչ իբրև զձայն մարդոյ: Մատչիւր ուն-
կընդնէ և յաջողի նմա ՚ի սարսափումն իւր
հասու լինել, զի միաբան բազմութիւն
եղեռնաւորաց խորհուրդ առնուն անդ-
րէն, թէ զիարդ սպանցեն զնա: Յետ բազմ
կացելոյ նշ ՚ի մէջ իւրեանց. լսէ առել

միւն

մինն յայնցանէ. յոյժ վտանգաւոր մեզ մարթ է լինել սպանանելն զնա, յոյժ երևելի ոմն է նա, 'ի վաղիւն խնդրեսցի նա ընդ ամրոցս ողջոյն, և եկեսցուք մեք 'ի յայտ. թուի ինձ՝ թէ յաջողագոյն եղիցի մեզ բանալ զկերպնափեղկն դրոյն և արձակել զնա։ 'Ի լսելն զայս վիլլէրս՝ քաջալերս առեալ, այր՝ գոչէ առ նա, կարի խիստ եղիցի վնաս ձեր։ Կարևորագոյն թուղթս ունիմ առ իս, որք հասանելոց են առ թագաւորն 'ի ձեռս իւր, ունիմ ես 'ի մերձակայ այս գիւղ 'ի սպաս իմ զանձինս չորս, մահ իմ ոչ կարասցէ մնալ թագուն, և ոչ լռել անլռելժ։ Բացէք, խոստանամ ձեզ ամէն ոչ հանել 'ի վեր զբանն, և փոխարէն իմ արժանի անձին իմում։ Զկնի սակաւ ինչ խորհելոյ 'ի մէջ իւրեանց, հաստատեցին արձակել զնա, բայց պարտաւորելով երդնուլ՝ ասել թէ զայլ ինչ չէր անդրէն տեսեալ կամ լուեալ, բայց եթէ զարհուրելին արդարև կարէր ասել զայս իրաւամբ։

Զկնի ժամանակաց ինչ՝ մինչ վիլլէրս նստէր 'յայգւոջ իւրում ընդ բարեկամիւր, եկն ահա ոմն անծանօթ և եկաց ա-

ռաջ

ւաձի նորա, և մատուցեալ զերկու նժոյգ մտրուկս՝ ասէ ցնա, ընծայս այս զի ընդունեսցիս աղաչեն նոքա, որոց խոստացարդ անաղաւաղ պահել զծածուկս խորոցն 'ի յամրոցի անդ՝ զոր պարտ է քեզ յուշ ունել և այսքան հաւատարմաբար մինչև ցարդ պահեցեր: Արդ՝ արժանեն զքեզ 'ի պարտաւորութենէդ, զի ելեալ արդէն 'ի սահմանաց, և աներկևան եղեւ ջունին ինչ պէտս, և ոչ զանգիտեն յումեքէ:

Պատմեաց յայնժամ զոր միանգամ յամրոցի անդ պատահեալ էր ինքեան: Միթխարի երևոյթն և չորս արբանեակք նորուն էին հինգ դրամադրուժք, որք ընդ այլս ղօղէին անդրէն, յատակն խորասուզեալ՝ էր մինն յականատից, զոր՝ 'ի ժամանակի քաղաքական յարուցմանց և մասնաւոր բռնաւորաց, գրեթէ ամ ամբոցք 'ի ներքս իւրեանց ունէին 'ի պատրաստի: Թէ և ուրախ և խնդամիտ էր վիլէրս, վ՛ս յաջողելոյ իւրոյ զանձն ապրեցուցանել յորոգայթէ անտի, սակայն որքանիցս զկնի դէպ լինէր նմա զանցան

զպատմել, կշտամբէր միշտ զճարի յանդգ-
նութիւն իւր, և օրինակ զանձն
իւր ընծայեցուցանէր որոգայ-
թից վտանգաց, յորս արկա-
նել մարթի անխորհուրդ-
իմն քաջասրտութիւն ։



## Պատմութիւն Քսան և Եօթներորդ

## Սպարապետն Տուրէնոյ

Թէպէտ՝ զոր ունիմք աստանօր պատմել զմեծանուն առնէս զայսմանէ, յոյժ համառօտ և դուզնաքեայ իցէ, սակայն յայտնի ցուցանէ՝ թէ զիարդ երեւելի և պերճ անձինք հանդուրժել գիտեն պատահմանց այնոցիկ, յորոց բորբոքին կատաղին սոսկականք և ռամիկք:

Ապաքէն կարի փաղփաղկոտք են մեք առ 'ի սրտմտել, և ընդ փոքրագոյն վնասու՝ թէ և ակամայս զանձնային բարկութիւն և զցասումն ցուցանել: Ոչ գտանելով յինքեանս զոր միանգամ պատուհելի և յարգոյ հանդիսացուցանէ զնոսա, երկնչին հանապազ յանարգելոյ, և ամենայն չնչին կասկածանք զանակնածութէ այլոց առ ինքեանս, անտանելի վէրք են ամբարտաւանութեան իւրեանց, որ համանգամայն 'ի

սիրտ

արտամտութիւն բարկութեան բրդէ զնոսա ։ Ընդ հակառակն՝ բարգաւաճ և վսեմ անձինք հաւասարի և խելամուտ լինելով՝ թէ պատիւն իւրեանց ոչ նուաղի կամ թեթևանայ ՚ի ձեռն սոյնգունակ դուզնաքէից. դիւրագոյն անփոյթ առնել զնոսին, կամ տանիլ անդորրամտութեամբ և զանցառութեամբ ։ Այսմ օրինակս ունիմք այսր մասնաւորի առ նախնիս, իսկ մեք առաջի դիցուք միայն զօրինակ մի նորագոյն, զոր գերահռչակ սպարապետն տուրենայ մեզ ընծայեցոյց ։

Որ սա ինքն ահաբեկութիւն զօրաց ՚ի մարտի, և ժամանակս ձիգս եղև սիւն և փառք գաղղիոյ ։ Բայց ՚ի հասարակ կենցաղավարութեան իւրում էր ամենևին ռամկական և խոնարհամիտ, պարկեշտ ՚ի հանդերձս և ՚ի գնացս, և հեզաբարոյ և քաղցրաբարբառ ընդ ամենեսեան ՚ի քաղաքավարութեան ։

Ելեալ նորա յառաւօտու միում ամառնային եղանակի կանուխ ՚ի սենեկէ իւրմէ՝ առանձինն ՚ի գիշերանոց հանդերձս և մերկասրօն, ծեմէր սենեկէ ՚ի սենեակ, և ապա մերձեալ ՚ի լուսանցոյց մի, յեցա-

՚ի նա , դնելով զարմունկսն ՚ի վր̃ նորա , և զկզակն ՚ի ձեռս , հայէր ՚ի խոնարհ ՚ի պարտէզն ։ Մինչ դեռ ՚ի սոյնպիսի դիրս էր , գայ մինն ՚ի սպասաւորաց որ համարելով զնա մի ոմն յընկերակցաց իւրոց , մեղմով մերձենայ առ նա , և ծառայական մտերմութբ իջուցնել ուժգնակի զբռունց մի ՚ի վր̃ միջնողաց նորա , ժպտելով յետս ընկրկի ՚ի մի կողմն ։ Դարձել սպարապետն հանդարտօրէն՝ ասէ ցնա . բարեկամ կարի ծանր է ձեռն քո , միւսանգամ յիշես զեր խընայելով իջուցանել ։ Սպասաւորին ծանուցել զտէրն ՚ի ձայնէն և տեսել զնա , փոքր մի ևս առ ահաբեկութենէն մեռանէր ։ Նա անկեալ առ ոտս նր̃ գունատեալ և դողանի հարեալ , զղջմամբ և արտասուօք խնդրեաց զթողութիւն , ասելով՝ վարկայ թէ յօհաննիկ ընկերն իմ իցէ ։ Սպարապետն անխռով և պարզ դիմօք պատասխանեաց , վրիպակն մեծագոյն ոչ է աչաց , այլ ձեռին , յօհաննիկին ևս ողջոյնդ այդ խուն ինչ ծանր թուիլ մարթ էր . խրատ տամ քեզ՝ զի այսուհետև ողջոյն տացես ձայնիւ մանաւանդ , քան ձեռնաշարժութեամբ ։

Նա

Ապա յարուցեալ զնա և քաջալերեալ, լուռ և եթ եմուտ ՚ի սենեակ, թո-ղեալ զնա, չէ՛ հնար ասել՝ թէ ը՛ ամօթով, կամ քաղցր զար-մացմամբ ։

## Պատմութիւն տասն և Ութերորդ։

### Գներին Ողորմեալ։

Են բազումք, որք յորժամ առնեն այլոց զբարութիւն ինչ, այնքան հռչակ հարկանեն, մինչև պատկառեցուցանել զընդունողն, և 'ի ձեռն սնափառութեան և փքացման կորուսանել զպատկանեալն արժանաւորութիւն առատաձեռնութեան իւրեանց։ Ընդ հակառակն՝ ասէր Սենեկայ, թէ բարերարութեան պարտ է փակել զբերան արարողին, և բանալ զընդունողին. և մեք տեսցուք յարժանի յիշատակաց օրինակէ միոջէ, որքան քաջ 'ի վեր համարեալ էր ճշմարտութիւնս այսմիկ այր ոմն երևելի ժամանակիս մերոյ, և որքան գիտէր նա յաջողապէս 'ի գործ դնել զայն։

Գտանելով ոք 'ի մարսիլեայ քաղաք, և գնացեալ յերեկոյի միում հանդիսաւոր աւուր 'ի նաւահանգիստն զովանալ 'ի տօ-

Թոյ ամառան, կամեցաւ ելանել ՚ի նաւակ մի, առ ՚ի շրջան առնուլ զնովաւ ։ Ի ծայնելն առ նաւակավարս՝ յանդիման եղե նմա երիտասարդ մի առոյգ և շնորհատեսիլ, և մատոյց զնաւակ իւր ։ Ելեալ ՚ի նաւակ մը՝ մինչդեռ ձեռներն մտադիւր ի թիս հայելով ՚ի նա, և կարի քաջամարդիկ շընորհալից և բարեսուն տեսանելով զնա, քան որք ոչ սովոր են լինել՝ ծնեալք ՚ի նմին վիճակի, ասէ ցնա ։ դու ոչ նմանիս նաւավարի, և թուի ինձ թե ՚ի զբօսանաց սակս մանաւանդ՝ քան արուեստի կամիս դու վարժիլ ՚ի սոյն ։ Արդարև չեմ ես ծընեալ՝ պատասխանեաց երիտասարդն, այսմ պայմանի կենաց, և ոչ այս իսկ է սովորականն իմ արուեստ, այլ էտք հօր իմոյ յօրդորեցին զիս յայսմ ևս կրթիլ, առ ՚ի շահիլ ինչ յաւուրս տօնից ։ Եւ ո՞յք են այդէտք հօր քո՞յ ասէ դարձեալ օտարականն ։ Գերի վարեալ է նա՝ պատասխանեաց երիտասարդն արտասուօք, և ոչ գիտեմ զի՞նչ թափեցից զնա, եթե գործով և աշխատանօք իմով ոչ հայթայթեցից ։ Քա՞նի ժամանակք են, և ուր ։ Արդէն

 վեց

վեց ամիսք են, և ՚ի խուժատատանէ գե-րեալ: Ուզիմ ճգանօք հաւաքել էր զսակաւ-ինչս, եբարձ զայնս ՚ի նաւ մի որ գնայր ՚ի զմիւռնիայ, ինքն ևս կամեցաւ գնալ անդր, առ ՚ի առաւել շահիլ ճարիւք և արուես-տիւ իւրով: Բայց ըմբռնեցաւ նաւն ՚ի ծովամարտիկ հինից բարբարոսաց, և ինքն ը այլ ամեն վարեցաւ գերի: Երկու հա-զար մառչիլս պահանջեն վն ազատութե-նր. բայց որովհետև զոր միանգամ ունէր, տարել էր ը իւր, վնկ յոյժ դժուարին է ինձ գտանել զայս գումար: Այսու ամի մայր իմ և երկու քորք իմ զցայգ և զցերեկ վաստակին հաւաքել զայն, ես իսկ զնոյն առնեմ, և ջանամ ըստ կարի իմում յա-ւորս տօնից ևս գործել վասն այսորիկ:

Ի սկզբան անդր կամեցայ փրկել զնա գը-րաւելով զիս ՚ի գերութի փոխանակ ը նր: Բայց ծանուցեալ մօր իմոյ զխհդ իմ, խե-լամտեցոյց զիս՝ թէ ընդունայն էր յառա-ջադրութիւն իմ, և կասկածելով՝ թէ ես անխափան կամէի գնալ մտանել ՚ի գերութի, ետ պատուիրել ամ նաւապետաց չառնուլ զիս ՚ի նաւ: — Ընկլեալ ես լուր ինչ զնմանէ,

գի

գիտիցե՞ս արդեօք ո՞ւմ ծառայէ, և զիա՞րդ կեայ :— Ծառայէ վերակացուին արքունի բուրաստանաց, և մարդասիրեալ է անտի. Բայց այս մարդասիրութիւն նորին, յոյժ չնչին մխիթարութիւն է նմա. զի արդ և իցէ գերի է նա, օտարացեալ ՚ի մէնջ, օտարացեալ յամուսնոյ իւրմէ, և յերից որդւոց իւրոց, զորս բազմագութ սիրով սիրեալ է միշտ :— Զի՞նչ է անուն ն՟ր :— Ռոբերտոս :— Քանի՞ ամաց է :— Գրեթէ յիսնամեայ :— Սրդարև լաւագոյն բաղդի արժանի ես, զոր ՚ի սերտ սրտէ մաղթեմ վ՟ն քո, և տեսանելով զքոյդ առաքինութի՟, գուշակել ևս համարձակիմ :

՚Ի տարաժամիլ աւուրն՝ հրամայեաց օտարականն հանել զնաւակն ՚ի ցամաք, և ելեալ անտի վաղվաղակի, ոչ ետ նմա ժամանակ շնորհակալ լինելոյ վ՟ն քսակին, զոր եթող նմա ՚ի պարգև : Էին անդրէն ՚ի քսակին վեշտասան լուիզ ոսկիք և տասն մառչիլք : Հիացեալ երիտասարդին ը՟ն այն գունակ առատասրտութի՟ ն՟ր, զաւուրս բզ՟մ պարապեցաւ ՚ի խնդիր նորա ; առ ՚ի գտանել զնա վերստին, և շնորհակալ լինել

ընդ

զնմանէ բայց ոչ յաջողեցաւ ։

Յետ երկուց ամսոց՝ մինչդեռ յաւուր միում երիտասարդս այս յաղքատիկ տան իւրում հանդերձ մարբն եւ երկուքերբն բազմեալ էր 'ի սեղան, ահա յայլակարծուց հասանէ ռոբերտոս ։ Նա խընդութեն եւ զարմացման ընդ այս անակնկալ տեսիլ զաղաղակ բառնան ամէն միահաղոյն, եւ երկոհացեալ 'ի միտս իւրեանց, գրեթէ համարին առաջօք ինչ տեսանել ։ Ռոբերտոս գիրկս արկանելով դորովալից մերթ զմինն, եւ մերթ զմիւսն ․ ով ամուսին իմ՝ ասէ, ով որդիք իմ՝ որքան պարտաւոր եմ գթութեն, եւ սիրապատիր հոգունակութեն ձերոյ ։ Եւ զիարդ մարթացայց այսքան փութով թափել զիս ․ զիարդ յաջողեցաւ ձեզ այնքան նպաստ առաքել ինձ ։ Գումարն փրկանաց իմոց, յիսուն լուիզ ոսկիքն 'ի պէտս ծախուց ճանապարհին, զինչ նաւորդութեան յառաջագոյն հատուցեալ, այս ամ լցուցանէ զիս զարմացմամբ, թէեւ տեսանեմ զձեզ յոր սահման տնանկութեն վասն իմ հասեալ ։ Յանձնարին ուրախութե անտի բան 'ի բերան առնուլ կինն եւ դա-

տաս

տառապանօք ոչ կարէ ։ փութայ փարէ ըզ
նովաւ, և լուծեալ յարտասուս անկանի
՚ի վ՟ր նորա, դստերք արտասուակից լինին
մօրն և մօրմօքն, որդին յիմարի և ուշա-
թափաց լինի ։ Յորդահոս ցօղումն արտասու-
ուաց ՚ի վախճանի տայ խօսել կնոջն, գիրկս
արկանէ վերստին զայրն, ակնարկէ առ
որդին, և ցուցանելով զնա հօրն ։ աւասիկ՝
ասէ ցնա, աւասիկ է փրկիչն քո ։ Երկու-
հազար մատչիլք պահանջէին վ՟ն ազատութեան
քո, տակաւին ոչ էաք գումարեալ զկէսն,
և զոր միանգամ հաւաքեցաք, ըստ մեծի
մասին երախտապարտ եմք անդադար և
անխոնջ վաստակոց որդւոյ քո ։ Որդիս այս
քնկելի աներկեան գտեալ է զպաշտպանս,
որք շարժեալ յառաքինական բարուց ն՟ր
լեալ են նմա նպաստամատոյց ։ Անդստին
՚ի գերեվարելոյ քո խորհէր զանխլաբար զ՟ք
քո փախանակ զանձն մատուցանել ։ Ար-
դարև զարդիս նմա պարտիմք զքոյդ փըր-
կութիւն, զի նա վճարեաց զգին, մեզ միայն
կամեցաւ զզարմացումն թողուլ ։ տես զի
արդ անզգայեալ է նա ՚ի խնդութենէ ։ այլ
փութասցուք օգնել նմա ։ Յորք արդեն

զբաղեալ էին զնովաւ , ծնօղք եւս յարին
՚ի նմ̃ , և յետ բզ̃մ տարժանութե̃ յաջողե
ցին ՚ի վախճանի զգաստացուցանել զնա ՚ի
թմրութենէ իւրմէ ։ Զաչս առ Հայրն դար-
ձուցանէ , բայց տակաւին ոչ զօրէ խօսել ։

Իսկ Հայրն ՚ի խորս զմտաւածութեն
ընկղմի , և յանկարծ յուրախութենէ ՚ի
տրտմութիւն փոխադրի , և դարձեալ առ
որդին ՚ի ձայն ցասման՝ ով թշուառական ,
բարբառեալ՝ ասա ինձ զի՞նչ արարել է քո ։
Արդարև ոչ մարթիմ պարտաւոր լինել
քեզ վ̃ փրկութե̃ս , որ այնքան ցանկալի
էր ինձ , առանց սարսափելոյ ։ Զիա՞րդ կա
րացեր վտանգիլ ծածկել ՚ի մօրէդ զեղա-
նակն ազատելոյ զիս , եթէ չէ քոյ արարել
զայս իմիք վնասու ։ Որդի ողորմելի դեր-
ւոյ միոջ , և ՚ի մատաղատունկ հասակի .
չէ հաւատալի թէ ճանապարհաւ արդա-
րութե̃ յաջողեալ իցէ քեզ գտանել այն-
գունակ օգնութի̃ ։ Սարսիմ յածելն զմտաւ՝
թէ սէրն որդիական կարացեալ իցէ ածել
զքեզ յեղեռնութիւն ինչ ։ Փարատեմ
յինէն զայս տարտամութի̃ համանգամայն,
լեր ճշմարտախօս , և մանաւանդ . . . . Մի

խոս

խռովեցի սիրտ քո՝ հայրիկ պատասխանեց որդին, ոչ ինձ և ոչ այլոյ ունէք պարտիս զազատութիւն քո: Բարերարն մեր այլ ոք է, զոր ես քաջ ճանաչեմ: Օտարականն այն՝ եթէ յուշ լինի քեզ մայր իմ, որ այնքան մեծաւ առատասրտութեամբ եթող ինձ զքսակն զայն 'ի պարգև, բզմ՟ հարցաբանութիւն ևս արար ընդ իս, աներկեան անտի ունի զծագումն երջանկութեան մեր: Իցէ՞ թէ յաւելից միւսանգամ տեսանել զնա: Փոյթ 'ի մէջ առեալ գուն գործեցից գոնէ զլուր ինչ գտանել զնմանէ. և ապա պատմէ հօր իւրում զամ՟ արարս օտարականին ը՟ ինքեան, և այսանակ յամ՟ կակածանաց ապահովացուցանէ զնա:

Յետ երկուց ամաց ունայն հետազօտութեանց՝ յառաւօտու միում պատահենմա 'ի նաւահանգստին, անկանի առ ոտս նր՟, և փարելով զնովաւ՝ ասէ. ով տր՟ իմ, միայն բարերար իմ, յենարան իմ, կեանք իմ, և ամ՟: Զի՞նչ է այս, զի՞նչ խնդրես, ասէ օտարականն յարուցանելով զնա: — Ո՛հ տր՟ իմ, և չնար է թէ մոռացեալ իցէ քո զորդին տարաբաղդ Ռոբերտոսի, զոր

ազա

ազատեցերդ 'ի գերութենէ : — Զայլ ոք կարծես զիս՝ բարեկամ, ես օտարական ոմն եմ, որ սակաւ աւուրբք յառաջ եկեալ եմ աստ : — Արդարև, բայց յիշեա՛ զի գամ մի ևս եկեալ ես աստ՝ արդ քսան և վեց ամիսք են, յուշ լիցի քեզ շրջանն, զոր առեր 'ի նաւահանգստիս նաւակաւ իմով, քաջն՝ զոր ինձ ընծայեցեր, կարեկցութիւն՝ զոր ցուցեր վ՟ աղետից հօր իմոյ, մանրամասն հարցաքննութիւն՝ զոր արարեր զհանգամանաց նորա : Դու երջանիկ արարեր զամբողջ գերդաստան մի, որ զայլ ինչ ոչ խնդրէ, քան տեսանել զքեզ, առ 'ի լցուցանել զքեզ օրհնութեամբ բազմաւ : Արդ՝ մի՛ անտես առնել զխնդրուածս մեր.... Եկ : — Արդէն ասացի քեզ՝ բարեկամ, եթէ դիւրագոյն է մարդոյ 'ի խաբս անկանիլ, դու թերևս.... — Ոչ տէր, ես ոչ վրիպիմ բնաւ, պատկերակերպութիւն քո յոյժ բարիոք տպաւորեալ է 'ի մտի իմում, զոր ոչ կարեմ հանդիպացուցանել այլոյ ուրեք : Եկ աղաչեմ զքեզ..... և սկսաւ կալնուլ զձեռանէ նորա, և քաղցրաբար բռնադատել :

Բա

Բազումք 'ի ժողովրդենէ շուրջ եղեն ըզնորօք 'ի զննելն այսր բանակռուութեան նց։ Օտարականն լի էր փառօք խուրովք․ բայց փոխանակ մնապարծելոյ և փքանալոյ, գիտաց զսպել զշարժմունս իսկ, և զգրգիռ-արդար հաճութեան, և հաստատապէս մնալ թագուցեալ։ Ի գնալ ընդ երիտասարդին միշտ ծաղր առնէր զասացեալս նր, մինչև գտեալ պարապ՝ խռնեցաւ յամբոխն, և անհետ եղև։

Մնայր թագուն մինչև ցարդ՝ եթէ 'ի մահուն վաճառականի ուրումն մարսիլեացւոյ հաղորդակիցք իւր՝ գտանելով 'ի մէջ թղթոց նորա զյետոկար մի եօթն հազար հինգ հարիւր դահեկանաց յղելոց առ Ռոբերտոս մէնի կատիկեցին, ոչ պահանջէին անտի զհամար այսր գումարի։ Մեծանուն անգղիացի լոմյափոխս այս պատասխանեաց՝ եթէ ըստ հրամանի տն կարոլոսի սեկունդատեցւոյ սեպուհոյն մոնդեսքիւեայ, և վերակացուի դիւանին բորդեայ՝ ծախել էր զայն գումար 'ի պէտս ազատութեան ուրումն մարսիլիացւոյ Ռոբերտոս անուանելոյ գերիվարելոյ 'ի խուժաստան։

Գրե

Գերապանծ այրն այն սովոր էր մերթ ընդ մերթ գնալ 'ի տեսս բամբշին մագդաղինէի քեռն իւրոյ հարսնացելոյ 'ի մարսիլիայ քաղաք։ Ուատաձեւն գործն՝ զոր արար անդրէն, զոր և զարդիս պատմագրեն ցուք մեք, արդարև ոչ նուաղ գովութեան արժանի հանդիսացուցանէ զնա, քան մակացական գործք նորա, որով անմահացաւ։

## Պատմութիւն Քսան եւ իններորդ

### Եղբայրն Աւապաերք

Յընթացս պատմագրութեանս այսորիկ արդէն առաջի եդաք փայելչագոյն տարացոյց մի եղբայրական սիրոյ 'ի պատմութեան անդ երկուց եղբարց ։ Զայս երկրորդ 'ի նորումս դէպ եղեւ մեզ տեսանել, որ թէ եւ կարի համանման է նմա, այսու ամ․ ոչ կամիմք զանց առնել զնորուն պատմութեամբ ։ Սէրն՝ որ 'ի մէջ եղբարց՝ 'ի նոյն իսկ 'ի բնութենէ անտի ներգործեալ, որ եւ ընդհանուր եւ եռանդուն լինել ունի, սակայն նուազիլ տեսանի տակաւ տակաւ, եւ ցամաքիլ. եւ մերթ եւս մեծաւ գայթակղութեամբ՝ որք առաւել արեանառու մերձաւորքն են, տեսանին լինել անհաշտելի եւ ոխերիմ թշնամիք իրերաց ։ Բազում պատճառք են՝ որք թելադրեն զմարդիկ խզել այսչափ պարտաւելի

եղա

եղանակաւ զառաւել տօնելի կարգանս բը-
նութն . բայց շահախնդրութիւն է այն,
որ յաճախակի մղէ առ այս ։ Կանգնեն
զայն մարդիկ կուռք իմն յոյժ մեծարու,
որում ընթանան զոհել անիրաւաբար զամ
ինչ ։ Երանի թէ օրինակքս առատապարտու-
թն , զորս առաջի դնեմք , զարթուցեն
՚ի մեզ նախանձ իմն գերազնիւ, և յօժա-
րեցուսցեն զմեզ յուշ առնել ստէպ զայն
գունակ մեծահոգի և փառաւոր գործոց ։

Ալբերտոս գոճալտիերի ՚ի բազում
ժամանակաց հետէ ծիգն հոգանակութե
ջանացեալ էր Է վայր դարձուցանել զորդին
իւր փերրանտ ՚ի մոլութեց յորս վարակեալ
էր , ՚ի ճանապարհ ուղիղ , յորմէ զարտու-
ղեալն էր թշուառաբար ։ Սիրայորդոր
խրատք այլ ոչ ներգործէին ՚ի նա , կշտամ-
բանք և սպառնալիք ոչ լսելի լինէին, պա-
տիժք ևս առաւել գրգռէին ։ Հայրն վա-
տաբաղդ՝ ոչ գիտելով թէ զինչ առնիցէ,
փակեալ էր զնա ՚ի ներքս աշտարակի միոջ,
և թողեալ ՚ի դիպահոջ զամիսս բազումս ,
այլ չէր ինչ օգտեալ անտի , քան առնել զնա
առաւել կամակոր և առաւել ժպիրհ ։

Սգեսպառ տագնապէր հօրն ՚ի տոկա ԼԾ չարախտավար գնացից որդւոյն՝ յաւուր միում մինչ յանդգնեցաւ սա դիմադարձիլ նմա ըղձենի համարձակութեք, և պղծաշուրթն անարգաբանութեք վշտացուցանել զնա, հաստատեաց ՚ի միտս իւր առ ժամայն արտաքս սահմանել զնա ՚ի տանէ. և տուեալ նմա հազիւ հազ բաժին ինչ կարի փոքրագոյն, զրկել և անմասն առնել զնա յայլ ամ գոյից և ստացուածոց իւրոց, և զժառանգութիւն զխոլին զբաւել յորդին իւր կրտսեր արրիգոս անուն, որ քնութեամբ և բարուք այնքան հաճելի և մխիթար էր նմա, որքան զայրացուցիչ և դառնութիւն էր երիցագոյնն։

Նա այս անձնարին և քստմնելի պատիժ ոչ միայն ոչ պակեաւ փերբրանտ և ապաշաւեաց, նաև՝ ըստ որում չամբշեալ՝ խնդամտեցաւ ընդ յաջողիլն այնուհետև ապերասան և անսաստ զեղխիլ և տարածել զամ զմոլութիս և զեղխութիւնս իւր։ Բայց սակաւ առ սակաւ նուաղելով՝ զոր միանգամ հայրն շնորհեալ էր նմա, և զոր փութացեալ էր վատնել և սպառել, և

երա

երագոյն 'ի վեր հասանելով չքաւորութեն, հաւ էառ ուշ 'ի կուրծս լինել, և զղջալ 'ի վեր անցեալ անուղղայ և զազիր սահմանս կենց իւրոյ ։ Խորհեցաւ բազմիցս 'ի սրտի իւրում դառնալ առ հայրն, և անկեալ առ ոտս նորա զթողութի հայցել. բայց 'ի միոյ կողմանէ ամօթն, և 'ի միւսոյ կողմանէ կասկած երկիւղին մերժեալ լինելոյ յետս նահանջէին զնա, և մինչ ծփէրն 'ի վարանման խնդգ այսոցիկ, կանխեալ տարակարծ օրհասի մահու հօրն, խափանուսակտուր արար զնա, և ելք 'ի տառապանս սպառսպուռ տնանկութե ։

Սպայ տեսեալ թէ չէք այլ ինչ ելք ճարակի, մտադիւր նուիրեաց զանձն յոյժ տարբեր եղանակի վարուց, քան զոր մինչև ցայնժամ վարեալն էր. և օտարացեալ զարտուցեալ յամ անառակութեց և մոլեկան կրից, սկիզբն էառ սրտի մտօք պարապել, և ջանիւք և երկասիրութբ իւրով պաճարել, զոր միանգամ 'ի կորուսեալ ժառանգութէ անտի ակնունել ոչ կարէր ։ Սերգիոս ոչ անագան ծանեաւ զայս ցանկալի փոփոխութ եղբօրն 'ի զեղծ և ժանտ գնացից 'ի լա-

անդր · և քանզի էր կորովախոհ՝ քաղցրա-
սիրտ, և յոյժ առաւել ցաւեալ ՚ի վր ան-
կարգութեց եղբօրն, քան խնդամտեալ
էր ընդ ժառանգութին ստացեալ այնոցիկ
աղագաւ · լի եղև ցնծութբ առ ուղղութ
բարուց նր։ Բայց՝ որովհետև ՚ի հարկա-
ւորութե ծագեալ ապաշաւութին, ընդ
վաղագոյն փարատիլ այնր, յաճախակի սո-
վոր է փարատիլ և ՚ի մոռացօնս դնիլ զնմա,
սմին իրի խորհեցաւ առ ժամանակ մի թո-
ղուլ զնա ՚ի տառապանս աղքատութե, զի
նորոգ յառաջադրութի նր հաստատագոյն
հիմն արկանիցէ, և միանգամայն սեփական
փորձիւ իւրով առցէ գչափ, թէ որքան
գովելի և նախամեծար է ըստ ինքեան ան-
ստգիւտ և բարեհամբոյր կենցաղավարու-
թին բաղդատութբ մոլեկան և անառակ
վարուց։ Իբրև բաւականապէս ապահո-
վացեալ վարկաւ զնորուն հաստատութենէ
յուղղութե գնացից, առեալ լռելեայն
զհօրն կտակարան, և յղեաց առ նա ծրա-
րեալ ՚ի նամակի իւրում՝ որ ունէր օրի-
նակ զայս։

„Սիրելի եղբայր իմ · դարձուցանեմ
„առ.

„ առ քեզ զթուղթսն, որում Հայրն մեր
„ կարգեաց զիս ժառանգ ամ՟ ստացուածոց
„ իւրոց ։ Եթէ կենդանի էր տակաւին,
„ խեղամուտ եմ զի յոյժ այլապէս տնօրի֊
„ նէր ։ Ահա նա զքեզ ՚ի ժառանգութե՟
„ ըստ այնմ որ էիրդ յայնժամ, ես խնդամ
„ անդրէն դարձուցանել քեզ՝ ըստ որում
„ եսդ այժմ ։ Ընկալ յօժարութ՟բ զայս
„ արդարութե՟ և պարտաւորութե՟ գործ.
„ զոր սեռնութբ սրտի առնէ քեզ եղբայր
„ քո արրիգոս" ։

Էր տարեգլուխ՝ յորժամ փերրանտ ընկալաւ զայս նամակ հանդերձ սոյնգունակ ընծայիւ, որում արդարև երբէք ոչ կարէր ակնունել ։ Սիրապատար բանք եղբօրն խանդաղատեցին զնա, անհամեմատ առատասրտութին յապուշ կրթեաց . բայց ոչ կամելով այսու ամի՟ զփոքրոգութեանն յինքեան ցուցանել զստգտանս, և ոչ չարաչար վարել զառատասրտութին եղբօր, դարձոյց նմա յետս զկտակագիրն տալով նմա պատասխանի զայս ։

" Գերարժան և աննմանակ եղբայր.
„ աշխատաբարոյութի քո քաջ արդարա֊

" ցուցանէ զհօրն մերոյ զտրամադրութիւնս ։
" Առ քեզ զայնս դարձուցանեմ վերստին,
" զորս լաւագոյն քան զքեզ ոչ ոք արդիւ-
" նաւորիլ մարթէր ։ Որքան ՚ի կենդա-
" նութեան նորուն արհամարհեցի զհանճա-
" րեղ խնդս նր, այնքան եւ պատուել եւ
" մեծարել ինձ պարտ է զյիշատակ նր, եւ
" յարգել զվերջին կամս նորին ։ Վերա-
" տանալն իմ զսէր քոյ եւ զակնածութիւն
" որ առ իս, բաւականապէս պարտաւորէ
" զերախտագիտութիւն եղբօր քում փեր-
րանտի " ։

Ընկալեալ զայս պատասխանի արքիկոմ՝ համանգամայն փութացաւ գնաց առ նա եւ փարելով զնովաւ՝ ասէ, արժանապատիւ եւ խնկելի յիշատակ հօր մերոյ ոչ կարէ մեծարիլ ըստ արժանեաց, բայց եթէ առ-եղծանելով ըստ որում նոյն ինքն առնէր՝ գործ մի՝ որ թէ եւ երբեմն արդար եւ ուղիղ կարաց գրիլ. արդ անիրաւագոյն լինէր ։ Ուրեմն յանուն նորին տօնելի ջնջեմ զայն իսպառ, եւ դու պայազատեա զառ ՚ի բնութէ պարգեւեալ քեզ զիրաւունս, եւ զոր բարելաւութիւն քո վերանորոգեաց քեզ

վերստին ։ Զայս ասացեալ՝ առանց գան-
դաղելոյ երկարացեալ անտի, փութացա-
առ խարոյկն, և Հրոյ ճարակ արար զկտա-
կագիրն ։ Գեղեցիկ վէճ իմն և Հակառա-
կութիւն աստանօր ծագեցաւ ՚ի մէջ երկուց
եղբարց, ժխտել միոյն ունել վերստին՝
առ որ կորուսեալ խոստովանէր զնա իրա-
ւունս, և միւսոյն ստիպել կալնուլ անդ-
րէն, զոր ոչ ևս պատկանիլ ինքեան Հաս-
տատէր ։ Հուսկ ուրեմն յաղթօղ Հանդի-
սացաւ Արրիգոս, կամելով առ Հարկի՝ զի
գոնեայ երկուքն իսկ Հաւասարապէս ըզ-
Հայրենին վայելեսցեն զժառանգութիւն
անբաժ ՚ի մէջ իւրերաց ։ Հաճ և Հաւան ե-
ղեալ Փերրանտ այսմ պայմանի, այնքան
Համակարիք և Համախորհուրդ քաղաքա-
վարեցին ընդ միմեանս զժամանակս կենաց
իւրեանց, մինչ զի ոչ տեսան երբէք եղ-
բարք՝ ոչ առաւել խանդակաթք, և ոչ
առաւել բերկրալիրք ընդ իրեարս ։

## Պատմութիւն Սրեոն Երրորդ :

### Փոփոխութեան Բարեբարոյից :

Էին Եւդոքսիոս և Ղեւոնդ երկուքն իսկ ծնեալք 'ի միջասահման վիճակի. բայց առաքինութեամբ և հանճարով գերազանցէին յոյժ քան զամ հաւասարս իւրեանց : Կատարել էին 'ի միասին զընթացս ուսման իւրեանց, և անդստին 'ի մանկութենէ սեռն սիրով, և հարազատ բարեկամութեամբ կապակցեալ ընդ միմեանս, որ տեւեաց հաստատուն և անխռով մինչև ցսպառումն շնչոյ իւրեանց : Սակայն այս սիրակցութիւն և մտերմութիւն չեղև խոչ և խութ ընտրելոյ նդ զկենցաղավարութեան իւրեանց զպայման տարբեր, յոր իւրաքանչիւր ըստ ընդաբոյս բարուց ունէր զհակումն : Եւդոքսիոսի նախանձաւոր գործոց, փոյթեռանդն, քաջայանդուգն, և զգաստ ելով՝ ծիրք կարևորք վասն մեծագործութեանց, դիմագրաւ-

եղև 'ի քաղաքական իրողութիւնս, և յաջողածեռնութիւն և արդեամբ իւրով յառաջադիմեալ, 'ի փոխանակ աստիճանեալ հաս 'ի կատար մեծամեծ աւագութեանց, և նոխագոյն փարթամութեանց: Իսկ ղևոնդ առաւել հեզահամբոյր և խաղաղասէր գոլով, մինչ օտարացեալ յամբոխէ և 'ի զբաղանաց, գլխովին նուիրեց զանձն անխռով պարապման 'ի հրահանգս մակացական գիտութեանց, յորս այնքան յառաջ խաղացեալ զարգացաւ, մինչև քաջ գիտնականաց առժամանակօք իւր եղելոց զանուն ժառանգել:

Թէ և տարբեր էին 'ի միմեանց պաշտօնիւք և անհաւասար աստիճանաւ, բարեկամք սակայն և մտերիմք իրերաց կեցին ամուրի ցանդր քան զամս քառասուն: Նոյն հասակ ժամանեալ՝ համախորհուրդ դէմ եդին մտանել ընդ լծով որդեծին ծառայութեան. և քանզի երկոքին իսկ խոնջեալ և վաստակեալ էին արդէն՝ եւդոքսիոս 'ի ծանրատաղտուկ հոգոց և աղմկալից իրողութեանց արքունեաց. և ղևոնդ 'ի բազմաշշուկ ամբոխէ քաղաքին, խնդ 'ի մէջ առեալ ընտրեցին մեկուսանալ 'ի բը-

բաղ

բազմանց անտի 'ի խաղաղութեան և 'ի յա-
պահովանս դաշտավայրաց. և անդրէն 'ի
գգուանս սեան սիրոյ և բարեկամութեան
միշտ յարակից և անանջատ խնդամտութեան
վարել զմնացորդս աւուրց կենաց իւրեանց:
Եւդոքսիոս 'ի ձեռն ճոխագոյն փարթա-
մութեան իւրոյ 'ի զուարճալի և բոլորահեշտ
վայրի ստացաւ զագարակ, և հուպ առ նա
զկալուած փոքրիկ և զնոյն ետու արժա-
թոյ, զոր փութով և ջանիւ իւրով հնա-
րեցաւ առյապայն զարդարել ճոխացուցա-
նել. և իւրաքանչիւր կանամբ իւրով ապա-
հովացան անդրէն խաղաղութեամբ:

Յետ ժամանակաց ինչ միահետ գոգ-
ցեալ մերձեցան աւուրք ծնանելոյ կանանց
երկաքանչիւրոցն իսկ, և Եւդոքսիոսին 'ի լոյս
ընծայեաց զմանուկ մի կայտառ, և Ղևոն-
դին զդուստր մի գեղապանծ. ընդ որ
յոյժ ուրախացեալ երկոցունց եւս՝ տօնս
ցնծութեան արարին 'ի մէջ իւրեանց: Սակ
այս հրճուանմն նոցա յոյժ 'ի կարճոյ յետա-
'ի դառնութիւն սգոյ. զի կինն Ղևոնդի
զկնի սակաւ աւուրց յետ ծնանելոյն պա-
շարել յանձնարին ցաւոց, 'ի ծաղկափթիթ

հա

հասակի մահու գրաւեցու: Սուգ և ցաւ կսկիծ սրտին ղևոնդիայ առ այս ցաւալի կորուստ ը̃ երկար ժամանակ եղև անմխիթար և անսարգահատելի, և թէ ոչ հաստանէին նմա 'ի թիկունս քաջալերութիւնք սիրալիր փոյթք և ջանք, որով եւդոքսիոս կարեկցեալ ամոքէր և փարատել զուն գործէր, ոչ կարէր այնքան ընդ երկար տոկալ աղէտին: Պատսպարեալ 'ի սիրայորդոր խնամոց բարեկամին՝ սկզբնաւորեաց տակաւ առ տակաւ մեղկել և ամոքել զմորմոք սրտին: Բայց դեռ ևս զմտաւածութիւն ինչ ծանծրալի վշտագնէր զնա, զի զոլով ինքեան այր, և առանձնակ, ոչ գիտէր զիարդ հրահնգել զնորաբողբոջ զդուստրն իւր, 'ի զարգանալն նր̃, զի ոչ միայն խոհական, այլև բարեձև և բարեշնորհ օրիորդ հանդիսասցի, և քաջահմուտ յայնմ ամի, որ վայել է բամբշի:

Յաւուր միում մինչ ըս̃ նախնի սովորութեան մտերմաբար ը̃ եւդոքսիոսի զրուցաբանէր, 'ի վեր եհան նմա զայս խայթ սրտի, և միանգամայն աղաչեաց զնա յառաջ քան զզարգանալ դստերն իւրոյ յանձնել

ձել զնա կնոջ իւրում, զի 'ի հասանել ժամանակին հաճեսցի առնուլ զնա ը̄ խնամով իւրով, և առ իւր ինքն սնուցանել մայրաբար: Եւդոքսիոս իսկոյն խոստացաւ մտադիւր իմն կատարել. բայց ունիմ ինչ ասել՝ փոխարէն ընդ այսր խնդրել 'ի քէն: Այս որդի՝ զոր պարգևեաց ինձ Տ̄ր, ես իսկ բաղձամ, զի արժանի լիցի յաւուր միում ծոխութեց, զոր մնայ ինձ թողուլ նմա, և բարւոք վարել զայնս գիտասցէ: Այլ գոլով իմ ընտելացեալ մինչև ցարդ 'ի զբաղմունս և 'ի ծանրատաղտուկ հոգս արքունեաց, երբէք չէ իմ կարացեալ ուշ դնել՝ որ միանգամ վայելէ քաջ և խոհական հրահանգութեն, և ոչ ևս անձամբս անձին մարթիմ կատարել: Բայց աստի, կասկածեմ ես՝ զի թէ որդին իմ կանխէ գիտել և ճանաչել զպերճութիւն վիճակին զոր ունի ժառանգել, ամբարտաւանեալ այնուհիկ, գուցէ նմանեսցի այնոցիկ, որոց թուի թէ ոչ իմիք հրահանգութեն և իւրական արժանաւորութեն պէտք են որում ծնեալ է 'ի գիրկս փարթամութեց և պերճութեց, և թէ մթերք ընչից ամի լնուն

զխթերին ։ Դամին [?] երբ՝ ցանկամ զի հարուստ ժամանակ յանգէտս լինիցի զիւրային վիճակէ. և քանզի հրահանգութեան մասամբ լաւագոյն դաստիարակի ոչ մարթ է ինձ ակնունել և ոչ իսկ գտանել քան զքեզ ինքնդ, վասն բաղձամ՝ զի մինչ դեռ երկոքեան ևս քաջառողջն են, և անծանօթ ինքեանց, փոփոխութիւն իմն ՚ի մէջ մեր արասցուք զշաւակօք մերովք, ունելով քոյ զիմս, տայցես ինձ զգուստրն քո, և այսանակ [?] զերկոքին մեք անուսցուք զնա իբրև զհարազատս մեր ։

Մտադիւրութեամբ հաճ և հաճան եղև զևոնդ [?] պայմանին, և յօժարութեամբ խոստացաւ զամ զինյթ [?] և զխնամ յանձին ունել տալ որդւոյն Եւդոքսիոսի զայն հրահանգութի, զոր նոյն փափագէր ։ Անայ [?] միայն՝ ասէ ցնա, զի այս փոփոխութի կնոջ քում ևս մի՛ թռճեսցի տարահան, և զի հանդուրժեսցէ տեսանել զորդին իւր սարտուցեալ յիւրմէ ։ Ես ինքնս պատասխանեաց Եւդոքսիոս՝ յանձն առնում զայս փոյթ ածելոյ զնա ևս ՚ի հաւանութիւն ։ Եւ զի հանճարեղ կին և կորովամիտ էր

յոյժ.

յոյժ, հեշտեաւ խելամուտ եղև, մանաւանդ զի քաջ գիտէր թէ ում աւանդէր զորդին իւր, և մերձ գոլով միմեանց բնակութ̄ք, դիւրաւ մարթէր զբօսանել ը̄ն մանկանն ո̄փ և յորժամ ախորժէրն: Հաստատեալ ուրեմն զայս խհ̃դ 'ի մէջ իւրեանց, ոչ դանդաղեցին կատարել, և արարեալ զփոփոխումն, իւրաքանչիւր 'ի նոցանէ այնքան մեծագոյն խնամ և սէր եցոյց առ որդեգիրն իւր, զի ոչ ոք մարթ իւր՝ ոչ միայն գիտել, այլ և ոչ երբէք երկմտանալ զոչ լինելոյ նց̄ հայր հարազատ՝ որոց սնուցանէինն: Երբև հետ զհետէ երկոքին մանկունք ևս հաստատեցան, հաւասար սիրով և խանդաղատանօք յարեցան 'ի կեղծեալ ծնօղս իւրեանց, և այնքան յաջողաբար յառաջադէմ եղեն 'ի բարիոք կըրթութ̄իս, յորս հրահանգեցան, մինչև առարկայ ցնծութ̄ե և հրճուանաց լինել ծնողաց իւրեանց:

'Ի վեր քան զա̄մ երիտասարդն փլաքիոս՝ համարելով զինքն որդի ղևոնդեայ, և տեսանելով զսակաւածնութ̄ի նորա, խելամուտ եղև թէ 'ի ջանս և 'ի վաստակս

իւր

իւր միայն կարէր դնել զկոյս իւր . և անձկալով ես վաղագոյն ժամանել յայն սահման, յորում արդեամբք և շահիւք իւրովք զօրավոր խնամոց ծոյնգունակ բարեբարոյ հօր փոխարինել կարիցէ, այնքան եռանդիւն ուշադիր եղև այնմ ամի, զոր սա տուսոյց նմա, մինչև 'ի սուղ ժամանակի ներհմտանալ նմա յամ ազգ գիտութիս . և գեր 'ի վերոյ քան զհասակն իւր հանդիսանալով, իբրև զչնաշխարհիկ իմն 'ի զարմացումն կած զամ զծանօթս իւր :

Իսկ արդ՝ որովհետև յաճախէր նա 'ի տան եւդոքսիոսի, տեսանելով անդրէն զօրիորդն զստերագիր նր, որ օր ըստ օրէ վայելչանայր աճմամբ 'ի նա շնորհաց՝ գեղոյ՝ և ամ խոհական և համեստ բարոյից, մեղմով մեղմով կաթոգնեցաւ 'ի նա : Ոչ նուազ ես օրիորդն սրտացաւ առ նա, բայց ոչ վստահանալով միոյն ակնունել երբէք յինքն գրաւելոյ՝ որ էր անընչագոյն՝ զօրիորդ մի ճոխագոյն և բազմահարուստ ստացուածոց մենաւոր ժառանգ, և ոչ զօրելով ես միւսոյն զմտաւ ածել՝ զոր միանգամ ծնողաց իւրոց տարահաճ լինել մար

Թէ

թէր , երկոքեան խոկ տոչորէին թագնաբար 'ի ներքուստ , առանց համարձակելոյ յայտնել մի մեանց զսէրն իւրեանց ։

Մինչդեռ սոյն օրինակ տագնապէին սոքա , Եւդոքսիոս՝ որ տեսանէր զորդին իւր արդ 'ի չափ հասեալ, և բարգաւաճել զգօնութեամբ գեր 'ի վերոյ քան զբաղձանս իւր , անձկացեալ կոչել զնա առ ինքն , և հոլանել նմա զծագումն իւր , բայց շնորհակալութիւն մատուցեալ ղեոնդիսոյ , աղաչեաց շնորհել ինքեան զորդին իւր ։ Սա՝ որ սիրէրն զնա իբրև զհարազատ իւր , մորմոքեցաւ յոյժ վասն պարտաւորելոյն զատչել անտի , և բառնալ յինքենէ զայս քաղցրագոյն յուսադրութիւն ։ Այսու ամի՛ պատշաճելով նմա տեղի տալ, կոչեալ զերիտասարդն մեկուսի , հրամայեաց նմա գնալ առ Եւդոքսիոս , զի ունի ինչ՝ ասէ , կարևորագոյն ծանուցանել քեզ . և ոչ կարելով զայլ ինչ յաւելուլ ասել առ մորմոքման սրտի և արտասուաց ցնդելոց , յոլով անգամ համբուրեալ զնա կաթոգին, և բաժանեալ անտի բռնութեամբ , հրաժեշտ տուեալ նմա , մեկնեցաւ ։

Յապուշ կրթեալ երիտասարդին 'ի հեծեծանաց աստի, և 'ի գորովալիր միանգամայն և ցաւալի աւեց, զորոց ոչ կարէր դարակել զպատճառն, յուզեալ 'ի բազմադիմի վարանմանց և յազգի ազգի զմըտածութեց, գնացեալ եկաց յանդիման Եւդոքսիոսի: Ողձակաթ ցնծութի և սէրն Եռանդեան՝ որով ընթացաւ առ ժամայն Եւդոքսիոս գիրկս արկանել նմա, քաջալերեաց զնա. բայց տակաւին յոյժ հեռի գոլով յերկմտելոյ լինել սորա հայր իւր, այն ինչ լռեաւ 'ի բերանոյ նր, և ծանեաւ զփոփոխութին զոր արարեալ էր նա ընդ զեռոնդիայ, պակուցաւ՝ և գրեթէ խապառ վերացաւ մտօք: Ուշ 'ի կուրծս անկեալ 'ի վախճանի, անկաւ առ ոտս Եւդոքսիոսի, և փարելով զնոքօք սիրապատարած. գործք կաթողին սիրոյ՝ զորս այնքանիցս ցուցեալ է քո ինձ, քաջ կարէին յերկբայս արկանել զորմէ արդ հաճիս հալանել ինձ. բայց ո՛չ երբէք հաւատալ իշխէր՝ թէ գորովալիր խնամքն՝ զոր 'ի վր իմ ունէր զեռնդ, այլ իմն լինել կարէին քան 'ի հայրական սիրոյ պատճառեալ: Ո՞ երբէք

քէ.ք հայր տեսաւ առնել այսքան մի որդ-
ւոյ իւրոյ : Խնդամ յոյժ ուրեմն՝ տէր իմ՝
ճանաչել ՚ի քեզ՝ որում զայս կեանս իմ
պարտիմ, որ այսուհետեւ քոյ եղիցի ող-
ջոյն, այլ քեզ ևս պարտ է ներել ինձ,
զի հեռացայց յարգել և մեծարել իբրև
զհայր երկրորդական՝ զայն, որում այսքան
ինչ պարտիմ : Երկ.ք աշխատանաց և ան-
դուլ ճգնութիք, զոր յանձն էառ մի իմ
սնուցանել և հրահանգել զիս, երախտա-
պարտ առնեն մինչև ցկատարած աւուրց
իմոց. և թէ հազար ամ ձգէին կեանք իմ,
թուէր ինձ թէ ոչ երբէ.ք բաւէի ը արժա
նի փոխարինել նմա : Այլ դու իսկ մի հայր
իմ փոքրագոյն ինչ տրիտուր տալ նմա մար
թիս, որ միանգամայն ՚ի պսակ երջանկու-
թեան հասուցէ զիս : Եղիսաբեթ՝ զոր
մինչև ցարդ սնուցեալ է քո իբրև զդուստր,
՚ի հերուն հետէ և այսր գեղով՝ և առա-
ւել ևս շնորհօք և բարեզանութ.բ իւրով,
զոր ՚քեզ և մօր իմում պարտի, սրտացու-
ցեալ է զիս ՚ի մաքրագոյն և յեռանդուն
սէր, որոյ նման չէ անկեալ երբէ.ք ՚ի սիրտ
ուրուք երիտասարդի, բայց ոչ իշխելով իմ
անձ

անձկալ Հարսանեացն , զի կարի գերա– զանց զնա համարէի քան զիս , շատ եղև ինձ խանդակաթիլ զնովաւ ծածկաբար 'ի ներքս սրտի իմոյ , առանց մերկանալոյ ու– մեք զտագնապս իմ բնաւ երբէք ։ Արդ եթէ 'ի ձեռն դստեր կամք իցեն քեզ ըզ– հայրն վարձաւորել . համարձակիմ աղաչել զքեզ 'ի վեր հանել նմա զծածուկս սրտի իմոյ , և առնել՝ զի յիս դրաւելով նորա հաղորդ իսկ լինիցի բարեաց քոց , և զի այսանակ երկոքեանս միանգամայն քեզ և զևոնդիայ հետեւեսցուք անխափան լինել որդիք ։

Եւդոքսիոս եւս առաւել խնդամտեալ ընդ բանս ընդ այսոսիկ , գիրկս արկեալ նմա անդրէն՝ ով որդեակ իմ՝ ասէ , դու որ քաղցրագոյն յոյս իմ եղեր մինչև ցարդ , որ և զարդիս պսակեսդ զիմս երջանկութի, այս երախտագիտութն քո խնդք որքան գեր 'ի վերոյ հանդիսացուցանեն ինձ զա– ռաքինութիւն քոյ , և որքան խելամուտ առնեն զիս զայնմանէ , զոր միանգամ պար– տիմ զևոնդեայ , վն առնելոյ զքեզ՝ զոր ցուցանեսդ լինել ։ Զի թէ առաքինութի

ան։

անհամեմատ առն այնորիկ այլոյ իմն զար-
դեւի ցանկանայր, քան զոր սովոր է ունել
ը̄ իւր, զքաղցրախորժ հաճութին զբա-
ըխս գործելոյ, ապաքէն չէք ինչ զոր վ̄
նորա ոչ առնէի. այլ արդ՝ մարթ է նմա
զամ̃ զինչ իմ ըստ հաճոյից իւրոց ընդխա
տրամադրել: Իսկ ՚ի համար դստերն իւ-
րոյ, որում իբրեւ հարազատի իմոյ ցայս-
վայր ակնածեցի, ոչ այնքան նմա, որքան
ինձ ինքեան առնես դու զառաւել տեն-
չալին եւ զառաւել ախորժելին իրողութի
աշխարհի՝ կամելով քո ամուսնանալ ը̄ նմա:
Կարօտալիր բաղձանաց ոչ միայն իմ, այլ եւ
մօր քո կանխեցեր դու այդոհիկ: Բայց
արդ մայր քոյ ես փափագէ տեսանել եւ ը̄
գրկել զքեզ, գնասցուք, զի այս մխիթա-
րութի չէ օրէն յընդերկար յապաղեցու-
ցանել նմա:

Ի տեսանելն զնա մօրն՝ որում իւ-
րաքանչիւր վայրկեան հազար ամ թուէր,
առ գորովոյն եւ ցնծութե աղեխարշէր, եւ
՚ի գգուհելոյ եւ համբուրելոյ զնա յագիլ ոչ
կարէր: Նուս առաւել աճեցաւ խնդութին,
յորժամ լուաւ՝ թէ վերաստացմամբ որդ-

ւոյն ոչ ունէր կորուսանել զեղիսաբեթ ,
զոր սիրէր իբրև զդուստր իւրածին : Աա
տեղեկացեալ անտի զամ անցից անցելոց ,
թէ և զառաջինն յիմարեալ ապշեցաւ ,
սակայն զկնի ուրախացաւ ուրախութիւն
մեծ՝ 'ի լսելն՝ թէ անվթար և անխափան
պահելով բախտին լո իւր զամ , զոր միան
գամ մինչև ցարդ լեալ էր նմա քաղցր և
պատուական , 'ի վախճանի իսկ զհայր մի
յարգելի և մեծարու , և զայր մի պատ-
ուական շնորհէր : Աոչեալ ապա զդևոնէ
որ լի ցնծութեամբ ընթացաւ փարել զպատե-
րաւն իւրով , և արարեալ հաւասար խըն-
դութեամբ և հրճուանօք զհարսանեացն զհան-
գէս , զուգարնակ և միատուն եղեն ; յո-
րում բարեկամութիւն և սէրն առ միմեանս
ոչ նուազ առնելի և պատուական յօդէք
ընծայեցան , քան զկապանս արեան :

## Պատմութեան [illegible] և [illegible] ։

### Սնանկութիւն ։

Պատահէ երբեմն զի անձինք անխիղճք և խարդաւանք ճապաղելով ՚ի չարաչնչին տուրևառս, զորս ոչ բաւեն տանել, կամ չուայելով անկարգաբար ՚ի խենէշ պճնութիւնս և ՚ի զեղխութիւնս մեծամեծ ծախուք գեր քան զկար իւրեանց, ընդ անտանելի պարտեօք անկանին. և ՚ի վախճանի այսպիսակաց սնանկութեան տան զբաւ անօրէն նենգութեան արարելոյ պարտատեարց վստահացելոց ՚ի նմա: Այսպիսեաց չէ պարտ ողորմել բնաւ, և մանաւանդ օրէն է՝ յատուկ օրինակի այլոց՝ ՚ի գործ դնել ՚ի պատիժ պատուհասի նոցա զամենայն զօրինացն զխստութիւն: Մերթ և լինի՝ զի կորուսանիցին և համեստ անձինք առ ձախողակ ելս, որոց մարդկային ճարտարամտութիւն անկարանայ խոյս և խութն


ա

'լինել, գտանին սայթաքեալք 'ի նոյն անդա
աղետից, և սոքա արդարև ամ գթութե
և կարեկցութե են արժանիք ։ Ըմբռնա-
նային իսկ նոքա, զի լինէին առատասիրտ
ոգիք, որք 'ի թիկունս հասանելով նոցա 'ի
ժամու, խափան առնէին զչարաբաստու-
թիւն, բայց սոյնպիսի գերագոյն գործոյ
տարացոյցք են կարի դժուարագիւտք ։ Աչ-
սակայն բզմ ժամանակք են, զի անգլիայ
զմինն ընծայեցոյց մեզ, զոր և մեք այնքան
մտադիւրագոյն 'ի ձեռն արկանել մատչիմք,
որքան արժանն է քարոզելոյ ։

Էր 'ի Լոնդինոն վաճառական ոմն,
որ բարեխառնութե կենցաղավարելով, և
բարեզգաստ աչալուրջ և անձանձիր փու-
թով զգործս իւր տնօրինելով, միշտ սահ-
մանաւոր և չափաւոր 'ի գինս, անխարդախ
և արդարամիտ 'ի վաճառաշահութիս և 'ի
պայմանս, զանուն մեծ ժառանգեալ էր
առ ամէն, և ճոխացուցեալ էր յոյժ զկենս
իւր ։ Հապաղելով նր զտուրևառութիւն
իւր ըստ չափու աճման գլխոյ դրամոց և
ստացուածոց իւրոց, յաջողեցաւ նմա մե-
ծամեծ տուրևառութիս առնել ոչ միայն

զղանազան կողմամբք եւրոպիոյ, այլ և Ամե-
րիկոյ և Հնդկաստանու ։ Զի էր աւարտեալ
բարերջնկութեն իւրոյ զծաղկիլն, ահա յայլա
կարծուցեալ եւս զինքն 'ի վտանգի կորուսանե-
լոյ 'ի միում վայրկենի զամ գործիլնս ան-
ցեալ յոգնավաստակ ճգանաց իւրոց ։ Ի վա-
ղուց հետէ սպառէր նա հաւանելոյ ծանրա-
բեռն և բազմածախս նաւի միոջ ։ Յաւուր
միում լուր եղև նմա, թէ պատահեալ
անձնարին աւեկոծութեն, և մղեալ յամեհի
կոհակաց անտի 'ի ժայռ ինչ խորտակեալ
էր անդրէն, և հազիւ ապրեալ նաւավա-
րաց ոմանց, մնացեալն ողջոյն ընկղմեալ
էր յատակս ծովուն ։ Պայմանադրեալ
ժամանակն հատուցմանց մերձենայր, և
գտանելով զինքն անձեռնահաս, և ոչ գի-
տելով իսկ՝ յայսմ կորստեան մեծի յո՞ դի-
մել և ապաւինիլ, արդէն կործանեալ վար-
կանէր գլխովին առանց զձնարիցն գտանե-
լոյ զօճանս ։

Մինչդեռ 'ի խորս տրտմութեն վա-
րանէրն յուսաբեկ, գանձապետն միոյն 'ի
պարտատեարց իւրոց յանդիման եղեալ
մատուցանէ նմա զթուղթ մի ։ Եւ զի միշտ

ածէր

ածէր զմտաւ զայս վայրկեան առնելն,
իբրև սկիզբն սպառսպուռ աղաւաղութեան
իւրոյ. անտարակոյս հրաման իմն համարե-
ցաւ զկթուղթն անդանդաղ հատուցման
պարտուց իւրոց: Այս գունաւորեալ և այ-
լակերպեալ իբրև զ՚ի դատապարտութիւն
մատնեալ, դողդոջուն ձեռամբ և սրտա-
տրոփ բանայ զգիրն, և ընթեռնուլն գ-
տանէ յայնմ զբանս զայս: ” Բարեկամ
” Քաջ գիտեմ զձախորդ ելից պատահիլն
” քոյ. բայց որովհետև ծանուցեալ է իմ
” ևս զքոյդ բարեկամութիւն ժրաջանութիւն,
” և զկորովամտութիւն, դէմ եդի ձեռնտու
” լինել քեզ: Քաջալերեաց ուրեմն և մի
” վհատիցիս: Զոր միանգամ ինձ պարտիս
” հատուսցես յորժամ հաճոյ թուեսցի
” քեզ. և զի մարթասցիս անյապաղ զայ-
” լոցն հատուցանել՝ վերակացուն փանձուց
” իմոց՝ շառաչիկայս բերող տացէ քեզ
” ձեռնպատրաստ զգումար հինգ հազար
” լտեր ստերլինաց, որ և ունի իսկ հրաման
” հատուցանելոյ Ե այլ լոմպարդի հաւա-
” սար գումարի, զոր դու յղեսցես ինձ,
” յորժամ ախորժեսցես: Այսքան ինչ զար
դիս.

» զիս մարթ եղև ինձ առնել տագնապաւ,
» առ երկիւղին մի՛ գուցէ կարի անագան
» հասցէ նպաստն ։ Իսկ եթէ ոչ շատասցի
» այս, մինչև ցխուռն հազար լուերս ըն-
» տերքինաց կարես դու վստահիլ 'ի յիս ։
» Կարի զուգնաքեայ իմն է այս, քան զոր
» միանգամ վայելէ քեզ, և ես մտադիւր
» իմն զայս զումար վտանգաւորէի յապրե-
» ցուցանել զայր մի համեստ, որպէս եսդ ։
» —— Ծառայ և բարեկամ քոյ Գուլի-
» ելմոս Գ. ” ։

Չէր տակաւին յամեալ ընթերցման թղթոյն ժամանեալ, յանձնարինն ցնծութ-անտի ընդ անակնկալ և բախտից յիմարեալ ուշաթափեցաւ ։ Ուշ 'ի կուրծս եղեալ զառաջինն լուծաւ յորդ արտասուս ցըն-ծութեան և խանդաղատանաց, և սկսաւ օրհնել և բարեբանել յոյժ զվեհանձն բարերարն իւր ։

Իբր սա մեծապանծ և սերն լոմափոխ-ման, որ 'ի հերուն հետէ ճանաչելով զնա, և առ պատուհականս ունելով վն հաւատ բարուց՝ և ժրաջանութեան նորա, ցաւ եղև ինքեան զի այր մի սոյնպիսի լինէր նպաստ

Հա

չարաբաղդութեն, և ընդ լսելն զաղէտս նորա՝ սոսկեալ յառատամտութենէ, հաստատեաց ՚ի միտս առ ժամայն իւրովի նը-պաստամատոյց պատսպարան և յենարան լինել նմա ընդ դէմ յանկարծահաս կոր-ծանմանն ։

Ապաքէն ձեռնպատրաստ գումարն թողեալ նմա ՚ի գանձապետէ անտի, պի-տոյացաւ կազմագոյն վճարման ևս կարևոր պարտուց ․ Լումայագիրն ՚ի պահել հաստա-տուն զհամբաւ և զհաւատարմութի՛ նր․ զի ոչ ոք երկմտեցաւ այնուհետև զունելոյ նորա տակաւին զբզմ̃ գլուխս դրամոց և զինչս յոլովս, մինչ լումափոխ մի այսքան զգուշաւոր և շրջահայեաց՝ որ էրն զուլի-ելմոս Գ .... առանց Ը̄ բանս ինչ ածելոյ, և ՚ի չկամել լինելոյ Ը̄ունէր անտի լումայա-գիր մի այնքան մեծագումար ։

Տնօրինեալ վաճառականին այսու եղանակաւ զիրս իւր, մարթացաւ խնդա-մտութ̃ և անխափան վարել զտուրևառութի՛ իւր, զոր բարեբարն Ած̃ բզմ̃ մասամբ հա-ճեցաւ յաջողել, և յընթացս սակաւուց ամաց ոչ միայն եհաս ՚ի չափ անթերի վե-

րա

բանորոգութ՟ համբաւոյ և հաւատարմութ՟ իւրոյ առ մեծահոգի լոմայափոխին , այլ և ստացաւ զայս մխիթարութի՟ , լինել նմա պխտեան 'ի բազմ՟ պատահմունս , և բազում եղանակաւ ցուցանել նմա զհաստատուն և զսիրալիրն իւր զերախտագիտութիւն ։

## Պատմութիւն Ինքլեան և Եարիկոյ ։

### Ապերախտութիւն ։

Տարեալ 'ի բաղձանաց շահախնդրութեան Թովմաս Ինքլէ որդի ուրումն վաճառականի Լոնդոնոյ, 'ի կատարել ամաց քսանից մատաղատունկ հասակին իւրոյ. ինչ ոչ զանգիտեցեալ 'ի վտանգաց ընդ երկար նաւորկութեան, դէմ եդ նաւել յարևմտեան Հնդկաստան, և ելեալ 'ի նաւն յաքիլլէս, որ 'ի պատրաստի էր առ ագաստել գնալ 'ի կողմանս յայնոսիկ, հանդերձ գլխով ինչ դրամոյ առ 'ի հօրէն իւրմէ աւանդեալ, 'ի վեշտասաներորդում աւուր ամսեանն յունիսի, յամին 1674. չու էառ 'ի Լոնդոնոյ։ Զկնի յոյժ երկայնաձիգ և տաժանաւոր ճանապարհորդութեան, 'ի լախտանի նշմարել նաւին 'ի հեռաւուստ զցամաքն Ամերիկոյ, էարկ զխարիսխն 'ի փոքրիկ գոգ մի. ուրախօք առ մեծի նուաղութեան ջրոյ և այլ

նպա

Տաճարակաց իջուցեալ նահատակելոյն զիւրն 'ի ծով, հրամայեաց ոմանց խուրայնոց անտի ելանել 'ի ցամաք և պահարել : Ցուցեալ Թովմայի 'ի հետաքրքրութէ զերկիրն ծա-նաչելոյ , եւ է նո 'ի ցամաք · բայց ամէն 'ի միասին տարապայման յառաջ խաղացեալ 'ի ներքս երկրին , յանպատրաստից անծա-մատն եղեն 'ի խումբ մի վայրենի բնակչաց տեղւոյն , որք յարձակեալ 'ի վր նոցա զմեծ-մասն հարին , և զմնացեալսն 'ի փախուստ մատնեալ՝ այնպէս ցրուեցին զնս , մինչև սակաւուց մարթիլ կրոմն մազապուրծ 'ի նաւ ճողոպրել : Երիտասարդն ինքն 'ի շփոթման անդ փախստեան , համարելով յամուր բոլորի յեսոյ թփկանց զմանն ու-նել , հարուստ ժամս զնոյն մոլորեալ ընդ-անտառս , մինչև ելեալ 'ի բարձրաւանդակ մի , զոր առաւել ամայի և անբնակ համա-րէր քան զայլս , թափեալ յուժոյ՝ բոլո-րովին հեւացեալ՝ և քրտնահար տապալ յերկիր մածաւ : Անդանօր խուժան սաս-կալի զմտաւածութեց կուտեցաւ 'ի վր նր , զի քաջ տեսանէր թէ այլ ինչ ոչ ունէր 'ի վայրենի տեղիս յայնոսիկ անցանել ընդ

գլուխ

զգլուխ իւր , բայց եթէ՝ կամ մեռանիլ ՚ի
սովու , կամ գաղտնակուր լինել , կամ ՚ի
ձեռս վայրենաբարոյից այնոցիկ , որք ա֊
ռաւել քան զգազանս են գիշախանձ , կլո
տամահ սատակել : Մինչդեռ ալեկոծեալ
ծփէր յարհօրանաց աստի և կողկողագին
ողբայր , լսէ զշրշիւն իմն , յորմէ շրտուցնել
յորոտ ընդ ոստ յառնելն և ՚ի փախուստ
յաճապարելն՝ տեսանէ զոմն երիտասար֊
դուհի , որ յուշիկ յուշիկ գայր անդրէն ,
որ և քաղցրաբար հայելով ՚ի նա , նշանացի
կալ նմա հրամայեաց : Խուն ինչ խրախուս
առեալ աստի , կողկողագին անկանի առ
ոտս նորա , և արտասուօք , և ձայնիւ հե֊
ծութեան , և նշանացի զխարդ և աղաչէ՝ ա֊
ղաչէ զնա գթալ ՚ի վր իւր , և գտանել
զելս փրկութեան յանձնօրին աղետից իւրոց։
Երիտասարդուհին՝ որ յեարիքս անսահա֊
նէր , թէ և վայրենասուն , ժառանգեալ
էր ՚ի բնութենէ զոգի գթովական , և յոր֊
դորեալ մասամբ ՚ի գեղանձնութէ երիտա֊
սարդին , և մասամբ խանդաղատեալ ՚ի նո֊
րուն աղերսանաց , մարդասիրաբար յա֊
րուցեալ զնա , էած ՚ի յայր իւր , և հան֊
գու

գուցեալ զնա անդրէն, սուղ ինչ երկարա-ցաւ անտի. զկնի գործ արարեալ երեք նմա զզանազան միրգս սահմանաց այնոցիկ, զի կազդուրեսցի նոքօք, և տարաւ առ-աղբիւր մի մերձ 'ի զովացումն ծարաւոյ :

Սերակենցաղել թոճեցաւ անգղիացի երիտասարդին, և ըզմագիմի նշանօք եցոյց նմա զշնորհակալութիւն իւր մեծ, յորմէ ևս քան զևս թելադրեալ կաթոտն վայրենի, քաջալերեաց 'ի բաց փարատել զերկիւղ ա͞մ, և յինքն առնել ապաստան զհոգս իւր ա͞մ, և լինել ապահով յա͞մ արկածից: Ըսպաքէն զմեծ մասն ժամանակին առ նա դեգերել անցուցանէր, և զոր միանգամ պէտքն էին նմա ուտելեաց՝ լեալեր առատաձեռնէր, և 'ի նորին պահպանութիւն հսկէր, յորժամ նա 'ի քուն լինէր, և զայն ա͞մ փոյթ 'ի մէջ առնոյր, զոր վ͞ս հարազատի յանձին ունիլ վայելէր, կամ վասն ի և իցէ արեանառու մերձաւորի :

Երիտասարդն ինքն սպաս առնելով առընթեր նորա, հաւեաց տակաւ տակաւ ընտելանալ բարբառոյն և լինել իմացեալ 'ի նմանէ, և մերթ զայս ինչ մերթ զայլ

ինչ

ինչ հարցանելով զնա, յաջողեցաւ ոչ յետ բազմաց ստանալ ծանօթութիւն զսահմանաց այնոցիկ, ազգաց անդրէն բնակելոց, և զիրաց պատճառանաց՝ որով երկիրն բարգաւաճէր: Նախանձաւոր իսկ հանդիսանալով տեսանել ինչ ինչ 'ի բերոց անտի, աղաչեաց զնա աշխատ լինել և բերել ինքեան զայնս. զոր յեարիքօ մտադիւր կատարեաց. և քանզի տեսանէր զնա զարմացեալ յոյժ ընդ իրսն Ը այնոսիկ, և ըղձակաթ առ ստացումն նորագունից, այն՝ որ ախորժէր հաճել զմիտս նր, նորատեսիլ իմն ընծայիւ գայր առ նա հանապազօր. էր զի հատոր ինչ ոսկւոյ, էր զի արծաթոյ, երբեմն պատճառականագոյն գոհարս, և ստէպ ստէպ չքնաղագեղ փետուրս թռչնոց երկրին, և փափկագոյն մորթս էրէոց այնոցիկ ընծայեցուցանէր նմա:

Սակայն անգղիացին Թովմաս 'ի սուղ ժամանակի եղև տր ճոխագոյն հարստութեց, և արդ 'ի սրտի խորում հաւ առնէր փոխանալ զբաղդէ, որ 'ի սոյնգունակ քաջադէպ փախճան զչարակրանս իւր էր յեղեալ: Մի միայն մարթելոյ չոճել անտի ելից կարօ-

տէք , զոր յուսայր իսկ անձնարին իմն էր
այլապէս՝ քան միջնորդութեամբ նաւի միոյ
եւրոպացւոյ , որ քերիցէր առ ափամբք այ-
նոքիւք: Բայց քաջ նախագիտէր զի յեարկ-
քօ տնհանիլ ունէր թողուլ զնա օտարանալ
յիւրմէ , և ոչ իսկ դիւրին էր՝ 'ի դիպել
առթին՝ փախչել լուեալն և ելանել 'ի նաւ՝
առանց գիտելոյ նր̃ : Սուրբեամբ խնդ̃ 'ի մէջ
եաւ խելամտեցուցանել զնա հետեւիլ ին-
քեան , և այնքան ինչ ինչ մեծարանց նմա
շնորհելոյ , և շնոյակապ և զմեծագործ
կերտուածոց ապարանից , յորս բնակել
ունէր անդրէն յոյժ վայելչապէս քան 'ի
յումպէտ և յանարգ անձաւս , կամ 'ի բա-
ցավայրի • և զշքեղապանծ պաճուճանաց
հանդերձից՝ որով փոխանակ մերկամարմին
շրջելոյ , զանձն պաշտպանէր 'ի վնասուց
եղանակաց , և գեղոյ խորում պայծառութեամբ
և վայելչութեամբ յաւելոյր , և զհամադամաց
կերակրոց և ըմպելեաց , զորս ճաշակելոց
էր անդրէն՝ յոյժ առաւել արգիւ և պատ-
ուականս , քան զջուրն զոր ըմպէր , և ըզ-
պտուղս վայրենիս որովք ճարակէր • և զամ̃
ազգ զգուսանաց՝ որով զուարճանալ ունէր ,

մերթ

մերթ 'ի վ(երայ) ջուրց առատադաստէն ձեմելով, մերթ օդապարելով 'ի վ(երայ) կառաց 'ի նժոյգ երիվարաց ձգելոց. երբեմն 'ի բերկրական կաքաւս զգիշերն անցուցանելով, կամ 'ի նուագս և յերգս և 'ի բերկրաբեր խրախճանս, մինչև կաթոռն ամբրիկացւոյն ըղձանալ փնայ զհետ նորա և տեսանել զիւր զայսոսիկ: Առանց յորդորանացս այսոցիկ և՝ արդէն այնչափ խանդաղատեալ էր ըղնովաւ յեարիքս, զի յոր սահման աշխարհի և առաջնորդէր, կազմ և պատրաստ էր հանդիպիլ ընդ նմա ում և իցէ վիճակի: Ապաւէին ուրեմն երկոքեան ևս անձկանօք նաւի միոջ անդրէն պատահելոյ, և զցայգ և զցերեկ փոխանակաւ հսկէին զծովն լըրտեսելով: Յետ հարուստ ժամանակաց անցելոց՝ նշմարեաց յեարիքս՝ որ էր սրակն յոյժ, զիր ինչ 'ի հեռաւուստ յերեսս ծովուն, և ազդ արարեալ ինքլեայ, իսկ և իսկ ծանեաւ սա լինել այն նաւ մի, որ սիկ հողմով փայր հերձանելով զալիս զայնոսիկ, և տուեալ զսովորականն նշան, յաջողեցաւ մերձեցուցանել զնա. և իբրև տարածանեցաւ և խաւար պատեց զերկիր, ելեալ 'ի կուրն,

որ

որ յղեալն էր ՚ի նաւէ անտի ՚ի ցամաք, ընդ յԵարիքօյի և ընդ մեծագանձ ընծայս նորա, ապահովացաւ ՚ի նաւ անդր:

Բաջ մարթի ընթերցողն մակաբերել՝ թէ զիարդ ցնծացեալ բերկրեցաւ երիտասարդն անգղիացի: Բայց յԵարիքօյի, ՚ի հարկաւորիլն լքանել թողուլ զհայրենիս իւր, որ՝ զիարդ և իցէ՝ յոյժ քաղցր և պատուական է անդրէն ծնելոց, և զազգատոհմն իւր, և զսիրելիս առ ՚ի չտեսանել զնա իսպառ, գալարեցան աղիք, ողբայր կականալիր և յոգւոց հանէր. և ոչ այնքան վաղ մխիթարէր, եթէ չէին նմա օժանդակեալ արգահատութիք և սփոփանք Ինքլեայ, որ արդէն ՚ի տեղւոջ հայրենեաց ազգականաց և ամենայն իրաց էր նմա: Այլ աւաղ թշուառացելոյն այնմիկ, որ ոչ գիտէրն՝ յորպիսի նենգաւոր և յորպիսի ապերախտ երիտասարդ անձնամատոն էր լեալ:

Ի մեծագոյն բարեբաստութեան երիտասարդին, նաւն՝ յոր վստահացեալն էին երկոքեան, էր յանգղիոյ, որ և ճոխագոյն ընչիւք, և բազմութեամբ խափշիկ ծառայից գնելոց յեզերս Գուինէայ. գնայր

՚ի բարբառջայ՝ կշռել անտիպլեանց յոյժ արգասանդ և բերրի ՚ի շաքարաբուղխ եղեգնուտս, որոց ՚ի մշակութիւն սովոր են վարեալ ողորմելիք այնոքիկ: Յ ժամանել նաւին անդրէն, առօրեա ծախուցեալ լցանմբռոխիմ նաւահանգիստն ողջոյն, և ոչ այլ ամ իրաց, այնպէս և թշուառական ծառայից այնոցիկ ՚ի մասնաւորի համանգամայն վաճառք կարգեցան: Ով մեծի և անմոռաց նախատանացս Եւրոպիոյ, զի խժական և ամենաչեղծ շահախնդրութեան առնէ զեղելոյ անձանց այնոցիկ, զոր ըն տանիքէից և զխաշանց հօզին չանխայեն առնել այլ ուրեք: Տեսեալ անօրէն երիտասարդին զպատմութիւն գնողաց ՚ի սոսկալի վաճառս յայնոսիկ, և զի մեծագին վաճառէին անխտիր արք և կանայք. յուզեալ և սադրեալ յագահութենէ իւրմէ, և զմոռացութիւն հարեալ զամ. ինչ, ՚ի նոյն վաճառս իբրև զիւրն արծաթագին հանդիսացոյց խժաբար զապերջանիկ կաթաւոն Յեարիկօ: Ինչ ոչ օգտեցաւ եղկելին ՚ի կողկողանաց և յանյոյս կականմանց իւրոց, անկեալ առ ոտս նորա գթութիւն և զողոր-

մութՆ հայցէր , ողոքէր և արգահատէր՝ զի թէ յարծաթագին ծառայից սակի համարել կամէր , գոնեայ իբրև զայնպիսի առ իւր ունել հաճեսցի ։ Ինչ ոչ ազդեաց 'ի վիմադրեան սիրտ նորա յուղ առնելն նմա զոր ինչ միանգամ արարեալն էր վն նորա , զիարդ ապրեցուցանելն 'ի ձեռաց իւրայնոց , որք անխնայ անգամ անգամ յօշէին զնա , և զեղանակն ապահովելոյ նմա զայսքան ժամանակ զկեանս՝ խնամով իւրով մեծաւ հայթհայթելով նմա զամ․ զիարդ ճոխացուցանելն այնքան մեծագին պարգևօք , և զթողուլ ստացանալն վն նորա և եթ յազգատոհմէ 'ի հայրենեաց , և յորոց միանգամ առաւել սիրելիք՝ և անձկալիք իւր էին ։ Այլ ինչ գրգռեցայց զապառում և զխիստակուան նորուն կամակորութիւն ըմբոստանալն վստահախառն 'ի զկծեցուցիչ երգիծանս , և կոչելն զնա ապերախտ , անագորուն , և ուխտադրուժ , և կուտել բարդելն 'ի վն նորա զանէծս նզովից և զանհնարին հայհոյանս , և կարդալն զերկինս 'ի վկայութիւն և 'ի վրէժխնդրութիւն այնքան եղեռնութեան ։ Բարբարոսն՝ առա

ւել խստասիրտ և վայրագ. քան զգազանս վայրենիս, զունկամբ արկեալ զնմ զարդարագոյն զկշտամբանս նր, կամ զդառնագոյն և զաղիողորմ զգանգատանս, կամ ըզկողկողագին և զխանդաղատական նորին զաղերսանս. և խնդամիտ է այն՝ զի օտարատի բարբառ եղկելւոյն չէր ընտել այլում, և ոչ յայտնի լինէր ումեք վաստուճէրն իւր նենգութի, վաճառեալ զայն ումեմն վաճառականի; և առեալ անտի զարծաթն, առանց խոկ տալոյ նմա զհրաժարականն զողջոյն, փարատեցաւ 'ի նմանէ:

Պակերջանիկն յեարիքս եկաց յոյժ տուաւել մեռեալ քան կենդանի, և 'ի համանման բարբարոս գնողէն իւրմէ, որում փոյթ ինչ ոչ եղև զարտասուաց նր, ածել 'ի տուն, կամ մանաւանդ գետնաքարշ տարեալ անդրէն, 'ի տառապանս ցաւոց սրտի, 'ի դառն և խիստ կեանս՝ զոր հարկաւորեալ էր վարել, և յաշխատանս անտանելիս՝ որովք ծանրաբեռնեալ էր, (զի անդրէն երբեմն՝ զմարդկեղէնն մերկացեալ զխոկութ, սովոր էին ևրոպիացիք, և ոչ դեռևս խափանեալ է խայտառ սովորութին անօրէն,

այսպանակ խոշտանկել զհռոմաւականս զայ-
նոսիկ ըստ օրինակի անբանից, և չարաչար-
ես) ՚ի սուղ ժամանակի պարտասեալ հիւ-
ծեալ և մաշեալ չարալլուկ վճարեցաւ ՚ի
կենցաղոյս։

Իսկ ինքն զնովին յետարիքոյ, և ազ-
նուազգին պարգևօք նր, և զաւ ՚ի հօրէն
իւրմէ ընկալեալ դրամովն առատագոյն
ստուերաւութեն պարապեալ բազում ինչ
շռնչեցաւ, և բարգաւաճելով որ ըստ օրէ
փարթամութեն, զխալսն իւր զգանս և
զհանճարեղութեն իւր մեծացուցանէր, և
եթէ կեղծք ՚ի սիրտ անձինին զեղեռնուն
իւրոյ որ յաձախինքի պատահէր, առ արդի
բարօրութեն իւր զմիտս դարձեալ հեղձու-
ցիկ առնէր։

Բայց թէ և յապաղեալ յերկարէ,
ոչ սակայն մոռանայ բարձրեալն սատարից
անօրէնութեան զարժանահասն պատիժ։
Մեծաբնեալ արդ ՚ի կատար ձոխութեն, այլ
ոչ այսու միմն յաղեալ երբեք, նախ
յարաժամ սովին առ առաւելն, ահրադորձ
երկիսաստրին յիշելով զաւեղին, ուր այն-
քան յինէ երկար կացեալն էր ընդ չարա-

բաստ

քաստին յԱմերիքայի , պարծանքն և զարդքն և զակունս պատուականս , որք առատա-ցեալ էին անդրէն , խեղդ ՚ի մէջ էառ ընդ այլոց՝ կազմել յարդարել զնաւ մի , և խա-ղալ գնալ ՚ի սահմանս յայնոսիկ , և պայա-ճառել զգանձս զայնոսիկ ։ Ժամանն օրա-րեալ ՚ի դէմ եղեալ յեզերսն , եւ ՚ի ցամաք բերող նավքն հանդերձ , և ՚ի խաղալն ՚ի ներքս երկրին , առ ժամայն յարեան ՚ի վր̃ նր̃ վայրենիք · բայց գոլով նր̃ զեր ՚ի վերոյ զօրութբ̃ , հեշտեաւ յաջողեցաւ ցրուել զնս̃ ։ Քաջալերեալ աստի եւ առաւել յառաջեաց , և գտեալ զերկու մեծագանձ հանքս յագահութե̃ և բազմացուց տակաւին անհուպս , այն ինչ ձեռնամուխ լինէր վե-րաբեր առնել զնիւթսն պատուականս , ահա վայրենիք մեծագոյն քան զառաջին խումբ կազմեալ քաջամարտիկք և քաջա-զէնք հորդան տարեալ վերստին անդրէն խիզախեցին ՚ի վր̃ նորա , և հարեալ զզօրս ՚ի նորայնոց անտի , զնա կալան կենդանի ։ Յայնժամ յայտնի եղև ՚ի վր̃ նր̃ երկնային վրէժխնդրութիւն այ̃ · և թուեցաւ թէ վայրենիք այնոքիկ խելամտեալքն էին զմտա

տառապութիւնք նորին, որ դաւաճանելոյն կերպարիւքն, մին իբր քստմնելի և սոսկալի կոտորանօք անդամ անդամ յօշեալ դիշատեցին զնա։ Ո՛հ աղէտիցս, եւ որ զարհուրելի տեսարանիս այսորիկ չեղեն հանդիպականք և վկայք աչքն մեր, առ որս ուխտադրժութիւն մխիթարութիւն իմն է, և ապերախտութիւն կատակ։

## Պատմութիւն Ծրէոն և Էրլըրտ ։

### Գուլիէլմոս Պէնն ։

Յեղելէ սահմանս յայնոսիկ, ուր զանգթութեն և զյափշտակութեն զսոսկալին Եւրոպիացիք ընծայեցուցին ըզ հանդէս, յոյժ այլապէս գիտաց վարիլ այլ ոմն անգղիացի, որոյ համբաւն 'ի յամենայսիցն յիշատակի մնացէ անմահական ։ Գուլիէլմոս պէնն ընկալեալ 'ի կարոլոս երկրորդ պատկաւորէն անգլիոյ զիշխանութի գաւառին հիւսիսային ամերիկոյ, որ զկնի յանուն իւր, և յաղագս յոյժ անտառուտն լինելոյ՝ Պենսիլվանիայ կոչեցաւ, փոխանակ խոշտանգելոյ ըստ օրինակի այլոց ըզ թշուառացեալս զայնոսիկ, զայլ իմն փոյթ ոչ կալաւ յանձին. բայց 'ի խնամելոյ և սփոփելոյ զնոսա, և մարդասիրութեան և ստէպ բարերարութեան իւրում մշտնջենաւորն առարկայ զարմանումն և սիրոյ նոցին եղև ։

Եւ ՚ի սկզբան անդր առ կասկա-
ծանաց երկիւղին, և առ աննուէր թշնա-
մուե՟ն, զոր երդուեալ էին եւրոպիացւոց,
բզմ՟ք յազգաց անտի գրգռեցան յառնել
՚ի վ՟ր նորա ևս, որ առ ՚ի պաշտպանութե՟ն
իւր ՚ի վայրագ յարձակմանց նց՟, հարկա-
ւորեցաւ զէն առնուլ զանձամբ, և ՚ի դիմի
հարկանել նց՟ : Կանգնեալ զյաղթութե՟ն
նշան և խորտակեալ զնոսա, կալ և կապ
արար զյոլովս յայնցանէ. ընդ որս էր և
օրիորդ մի գեղատեսիլ, զոր ետես իւր
առաջի ածել : Ողբայր սա և կողկողէր
յոյժ, և ոչ միայն ցաւէր ՚ի վ՟ր կորստեան
ազատութե՟, այլ կարեվէր խոցէր զսիրտ նր՟
այլ իմն կորուստ ևս մեծագոյն : Սիրէր նա
կաթողին զերիտասարդ մի իւրն համահա-
սակ, և համանման գեղանձն, որում խօ-
սեցեալն էր, և հաւատարապէս սիրեցեալ
անտի : Երդէն մերձ էին առաւօտք հանդիսի
հարսանեաց, յորժամ շշուկք և խառնաձայնք
մարտին ՚ի վ՟ր հասեալ խոչ և խութ եղեն
նմա. և արդ մատնեալ ՚ի շղթայս՝ ոչ միայն
անյոյս էր ՚ի լինելոյ նմա, այլ և ՚ի յատա-
կելոյ երբէք տեսանել զնա : Նա զի տագ-

նա

նայէր չարաչար յերկիւղէ անտի լինելոյ նորա ճարակ սրոյ թշնամեաց, զի քաջ հասուէր բարեյանդուգն և ուրոճազ խի-զախութեց նր, և գիտէր ես՝ զի 'ի ճակա-տամարտի անդ չունէր նա լինել յայլուր, բայց եթէ ուր սաստիկ էր մարտն, և ուր մեծագոյն ճապաղիք արեան գործէին:

Այն ինչ զուլիէլմոս պենն ստիպեալ յարտասուաց նորա՝ ը̅ սովորական մար-դասէր և զորովալիր բարուց իւրոց՝ ջա-նայր փարատել 'ի նմանէ զտրտմութիւն և զսուգ, ահա յեղակարծօրէն զոմն երիտա-սարդ ամերիկացի բոլորովին արիւնաշեղ՝ զինեալ նիզակաւ և նետիւք հապճեպ տագ-նապաւ փութալ անդրէն տեսանէ: Իսկ և իսկ 'ի հանդիպն ընթանայ սա առ օրիորդն կալանական, որ խառն ընդ զարմացման՝ ցնծութե և զարհուրանաց ծիչ բառնայ, և անկեալ 'ի գիրկս նր մտաթափ: Բա-ջալերեալ և իրախոյս տուեալ նմա երի-տասարդն զզաստացուցանէ, և ապա ար-կանելով առ ոտս նաւաճչին զգէնս, ասէ ցնա. այս արիւն՝ և զէնքս այսոքիկ քա-ջայայտ ցուցանեն զի ոչ կնաստութիւն կամ

վա

վաստակաւորութե՟ն, ոչ փախուստ յիմայնոց անտի, և ոչ կապանք քոյայնոց ածին զիս աստ: Ոչ ինչ իր բաւական էր կենդանւոյն մատնել զիս 'ի ձեռս քո, եթէ չէր յինէն յափշտակել այսօր շարաբախտութե՟ն զայս կին, և 'ի քեզ դրաւեալ, մինչ ես բացատ 'ի ամենէ և պատաղէլ 'ի տագնապ մարտին ոչ բաւէի պաշտպանել զնա: Արդ՝ ծանիր, զի պատուհական է սա ինձ, քան զազատու՟թ իմ և զկեանս, և ոչ մարթի փեցուլ զիս աստի այլ ինչ, բաց 'ի մահուանէ: Ալ և չեմ ես եկեալ աստ խնդրել զի այսրէն դարձուցես ինձ զայս, զի չէ հնար ակնկալել մեզ զայսանակ մեծագոյն առատարտութիւն 'ի խորոխտական ազգաց, զոր ցասուցեալ երկնից 'ի վ՟ր մեր, առաքէ 'ի ծովէ 'ի պատժել զմեզ. սակայն զայս և եթ գոնէ ոչ կարասցէ ժխտել ինձ անողորմու՟թ քո, այսէ, զի եղէց կցորդ կապանաց նո՟ր և միանգամայն ծառայ քո՝ կացից աստ 'ի միասին ընդ նմա:

Հիացեալ Գուլիէլմոս Պենն ընդ անդրդուելի սրտապնդութե՟ն, և ը՟ մեծահոգի քամս երիտասարդին, ողջագուրելով զնա

Հայրական խնամով, պատասխանեաց․ չաքաշար կշռադատես դու՝ որդեակ՝ զոգի և զբարոյս ամ Եւրոպացւոց, յայնմանէ՝ զոր միանգամ լուեալ կամ գուցէ տեսեալ է քո յումանս։ Ոչ առ՚ի յափշտակել զկանայս կամ զինչս ձեր, կամ՚ի հալածել զձեզ՚ի սահմանաց ձերոց, կամ՚ի վարել զձեզ գերի եկեալ է իմ աստ․ այլ՚ի հաշտութիւն խօսել և բարեկամանալ ընդ ձեզ։ Թշնամութիւն և մեղանք ձեր բռնադատեցին զիս զինել ընդ դէմ ձեր, և կախի՚ի կամաց ձերոց տալն՚ի բաց ընկենուլ, միայն զի հաշտութիւն և դաշնաւորութիւն ընդ մեզ առնել կամիջիք։ Այլ արդ՝ զօրինորդս զայս, զոր յաղթանակն մարտի մատնեաց՚ի ձեռս իմ, մտադիւր դարձուցանեմ՚ի քեզ, և դու՝ յորժամ հաճոյ թուեսցի քեզ, համարձակ ընդ նմա կարասցես դարձ առնել միւսանգամ յերկիր քո։ Զայլ կալանականս իսկ դարձուցից, յորժամ՚ի կողմանէ ձերմէ դադարեալ տեսից զյարձակմունս և զհարուածս, և զազգն ապահով՚ի լլկանաց ձերոց։

Ո՞վ ոմն ես դու ուրեմն՝ գոչեաց հիացեալ

ցեալ երիտասարդն սերբիկացի, կամ յայլմէ մարմնոյ և յարենէ ես, քան զանա դորդյն զայնոսիկ, որք այնքան քաղցրք և ծարաւիք արեան մերոյ եղևին ։ Ո՛չ է՝ յիս անկարելի յաղթեալ և նուաճեալս առ ոտս քո առաւել յառատասրտութեն քումմէ, քան ՚ի զինուց քոց ։ Աւասիկ փութամ ես ՚ի խնդիր խնդոյնոց, ցուցանել նմ զայս անախնունելի վկայութիւն առաքինութեան քոյ ; և թէ անկեղծ և սեռնէ կամքն քոյ, դարձեալ փոխադարձի դաշամբ հաշտութեան տեսցես զիս աստանօր ։

Գուլիէլմոս դարձեալ ողջագուրելով զնա՝ ասէ, մեծագոյն քան զայս և հաճոյագոյն պարգև չէ՛ հնար քեզ նուիրել ինձ՝ որդեկ ։ Ե՛րթ ՚ի խօսեցելոյն քոյ, և զհարդցանկամ ես՝ փութով եղիցի դարձն քոյ ։

Ի ցնծուք և սիրայորդոր փարելով զոտիւք նր և թանալով արտասուօք իրեանց չոմեցին անտի երկաքին սիրահոյք, և հասեալ առ ընկերակիցս իւրեանց այնքան մեծացուցին զառատամտութի սխրալի առնս այսորիկ, և զմարդասիրութիւն, և զխաղաղասէր բարս նորին, մինչև խեղա-

մուա

ժուտ եղեալ ամէն, զհրեշտակութիւնս առաքել առ նա՝ յորոց մինն եղև նոյն արիասիրտ երիտասարդն, առ 'ի հաստատել 'ի մէջ միմեանց զդաշն յարակայ հաշտութեն, մանաւանդ եղբայրութեն, զի որում մեծահոգի յաղթօղն կամեցաւ զի լիցէ, ամին իբր փիղադելփիայ զքաղաքն իւր կոչել Հռոմայեց, իբրու քաղաք անձանց եղբայրական սիրով զի միմեանս շաղկապելոց։

Նրանք՝ թէ պանծալի քաղաքակիցք և յաջորդք առնս մեծի՝ մինչ զարդիս քաջապնդութեամբ և զօրութեամբ զինուց թափեն են զպարանոցս 'ի լծոյ իւրեանց զոր այլք դնել ջանային, սակայն միշտ առաջի աչաց ունին զգերապանծ օրինակս նորին, զի նորահաստատ և նորահիմն հասարակապետութեն իւրեանց, ոչ նուաղ առաքինաջն բարուք, քան քաջութեամբ և խոհական հանճարեղութեամբ միշտ երջանիկ և փառաւոր պայծառափայլեցէ։

Աւարտումն երրորդ մասին։

# ՑԱՆԿ
# ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Առաջնոյ Հատորի :

---


Գլուխ Ա :

Այրին հիւանդացեալ : Երես 1

Գլուխ Բ :

Հռիքգարդոս Մէզվիլ : 9

Գլուխ Գ :

Պատկերն : 22

Գլուխ Դ :

Դամոնէս և Պիտիաս : 29

Գլուխ Ե :

Ետելրեդոս : 42

Գլուխ Զ :

Թերեզիայ Դալըռուէկի : 50

Գլուխ Է :

Ալմէք, կամ Երջանկութին : 59

Գլուխ Ը :

Սիդնէի Բիդուլփ : 81

Գլուխ Թ :

Ֆեաերիգոս Լանուէկի : 100

Պատմութիւն Իա։

Փիլիպպոս և Դոմինիկոս։ 114

Պատմութիւն ԻԱ։

Ուգերոս Դանիացին։ 132

Պատմութիւն ԻԲ։

Ռոտոմերոս Լանճելլի։ 143

Պատմութիւն ԻԳ։

Գուլիէլմոս Տէլ։ 156

Պատմութիւն ԻԴ։

Երկու Եղբարքն։ 170


## ՑԱՆԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Երկրորդ Հատորին։


Պատմութիւն ԻԵ։

Ամալիք Մեսօբերգայ։ 1

Պատմութիւն ԻԶ։

Կաբրահիմ Բռուշէլին։ 7

Գլուխ ԺԷ:
Ակունքն Գողացեալք: 15
Գլուխ ԺԸ:
Վնասն Հատուցեալ: 28
Գլուխ ԺԹ:
Կոյսն Օրենդայ կամ Հրահանգութիւն: 37
Գլուխ Ի:
Սէրն կնոջ առ Խօսնայրն իւր: 55
Գլուխ ԻԱ:
Ընչաքաղցութիւն: 62
Գլուխ ԻԲ:
Բարերարութիւն Ռաջաձնար: 69
Գլուխ ԻԳ:
Հրդեհն: 75
Գլուխ ԻԴ:
Ամուսնութիւն: 80
Գլուխ ԻԵ:
Սէրն Հայրենեաց: 94
Գլուխ ԻԶ:
Գիշերային Երեւմունք: 100
Գլուխ ԻԷ:
Սպարապետին Տուրենայ: 108
Գլուխ ԻԸ:
Գերին Ազատեալ: 112

Գլուխ ԺԹ։
Եղջայրն Ուստասիոս։ 123
Գլուխ Ի։
Փոփոխութիւն Բարեպաշտիկ։ 131
Գլուխ ԻԱ։
Անանկութիւնն 145
Գլուխ ԻԲ։
Ապերախտութիւն։ 152
Գլուխ ԻԳ։
Գուլիէլմոս Պէնն։ 166

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]